




ԷՋՄԻԱԾԻՆ



ԳՊԿ 146



ԼԵ
ՏԱՐԻ



ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

ԿՆ 11 Կ


1978



ՀՐԱՄԱՆԱԻ

S. S. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Սույն թվականի մայիսի 12—16 օրերին Հայոց Հայրապետի հրավերով Մայր Աթոռ ժամանեց Համայն Վրաստանի նորընտիր Պատրիարք-կաթողիկոս, Նորին Արքայություն Իլիա Երկրորդը:

Նորին Արքայությանն ընկերակցում էին Սուխումիի և Աբխազիայի առաջնորդ տ. Նիկոլայ եպիսկոպոս Մախարաձեն, Սցխեթայի հոգևոր ճեմարանի տեսուչ Գուրամ ավագ քահանա Ծալամբերիձեն, ս. Նունե վանքի վանահայր տ. Գավրիլ Չոչոշվիլին և Քութաիսիի ս. Գևորգ եկեղեցու քահանա տ. Ալեքսանդր Կատամաձեն:

Մայիսի 12-ին, ուրբաթ օրը, ժամը 16-ին, Երևանի հարավային օդանավակայանում Հայոց Հայրապետը, շրջապատված Մայր Աթոռի սրբազան եպիսկոպոսներով, ողջունեց և բարի գալուստ մաղթեց Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսին:

Հանուն Հայաստանի կառավարության հարգելի Հյուրի և նրա ջրախմբի անդամների ժամանումը Երևան ողջունեց Հայկ. ՍՍՀ Միևհատրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը և բարի գալուստ մաղթեց նրանց:

Ս. Էջմիածնում երկու Հայրապետները «Հրաշափառ»-ով և եկեղեցական թափորով մուտք գործեցին Մայր տաճար:

Եկեղեցական արարողությունից հետո Հայոց Հայրապետը եղբայրական ջերմ սիրով և ուրախությամբ ողջունեց վրաց օրթոդոքս եկեղեցու Գահակալի ժամանումը Մայր Աթոռ ս. Էջմիածին:

Ընորհակալության ու ողջույնի ջերմ խոսքով հանդես եկավ Նորին Արքայություն Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը:

Մայիսի 13-ին, շաբաթ օրը, ժամը 10-ին, Մայր Աթոռի հյուրերը, Հայոց Հայրապետի ընկերակցությամբ, Երևանում այցելեցին ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան և ապա ս. Մեսրոպի շիրիմ Օջականի եկեղեցում:



Նույն օրը, ժամը 19-ին, Մայր տամարում երկու Հայրապետները ներկա եղան երեկոյան հանդիսավոր ժամերգությանը:

Մայիսի 14-ին, կիրակի օրը, Հոգեգալության տոնի առիթով, Վեհափառ Հայրապետը ս. պատարագ մատուցեց Մայր տամարում և կատարեց երկու արեղանների ձեռնադրություն, որից հետո ողջունեց ներկայությունը Համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս Իլիա Երկրորդի և նրա շրախմբի անդամների:

Ի պատասխան Վեհափառ Հայրապետի ողջունի խոսքի, հանդես եկավ Մայր Աթոռի բարձրաշնորհ Հյուրը և Մայր Աթոռի միաբանությանը, հավատացյալներին ու Հայաստանի ողջ ժողովրդին բաշխեց իր օրհնությունները:

Նույն օրը, ժամը 15-ին, Վեհարանի հայրապետական սեղանատանը տրվեց պաշտոնական ճաշկերույթ՝ ի պատիվ օրվա հյուրերի:

Մայիսի 15-ին, երկուշաբթի օրը, առափոռյան ժամը 10-ին, երկու Հայրապետները, իրենց շրախմբի անդամներով, Ծիծեռնակաբերդում այցելեցին Հայ նահատակաց հուշարձան, ուր ծաղկեպսակներ գեղեղեցին և Հոգվոց արտասանեցին հայ նահատակաց հոգիների համար:

Ժամը 11-ին երկու Հայրապետները այցելեցին Երևանի ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցի:

Ժամը 13-ին Նորին Արքեպիսկոպոս Ս. Ս. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսին և Համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս, Նորին Արքեպիսկոպոս Իլիա Երկրորդին, հանուն Հայաստանի կառավարության, բնդունեց ՀԱՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ Հովհաննես Բաղդասարյանը և բարի գալուստ մաղթեց նրանց:

Երկու Հայրապետների և Հայաստանի կառավարության ներկայացուցչի միջև տեղի ունեցավ բարեկամական ջերմ գրույց:

Նույն օրը, ժամը 15-ին, Սևանի «Աղթասնար» հյուրանոցում, ի պատիվ Մայր Աթոռի հյուրերի, տրվեց ողջերթի ճաշկերույթ:

Մայիսի 16-ին, երեքշաբթի օրը, առափոռյան ժամը 10-ին, Վեհարանում տեղի ունեցավ երկու Հայրապետների վերջին հանդիպումը: Եղբայրական վրաց ժողովրդի բարձրաստիճան ներկայացուցիչները հրաժեշտ տվեցին Հայոց Հայրապետին և Մայր Աթոռին ու մեկնեցին անմոռաց տպավորություններով:

Մայիսի 12—16 օրերին Համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս Իլիա Երկրորդի պատմական այցելությունը Մայր Աթոռ և երկու քույր եկեղեցիների Պետերի հանդիպումներն ու գրույցները հանդիսացան պայծառ վկայությունը հայ և վրաց եկեղեցիների և ժողովուրդների դարավոր բարեկամության, քրիստոնեական եղբայրական սիրո և սրտագին համագործակցության:

ԳԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՐՈՒ

Ս. Էջմիածին,
16 մայիսի 1978 թ.





ԵՐԿՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ ՎԵՀԱՐԱՆԻ ԱՌՈՋ



ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐԷ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԻԼԻԱ ԵՐԿՐՈՐԴԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԺԱՄԱՆՈՒՄ

Սույն թվականի մայիսի 12—16 օրերին Հայոց Հայրապետի եղբայրական հրավերով Մայր Աթոռ այցելեց Համայն Վրաստանի նորընտիր Պատրիարք-կաթողիկոս Իլիա Երկրորդը:

Այս այցելության առիթով Նորին Սրբությանը ուղեկցում էին Սուխուսիի և Աբխազիայի առաջնորդ տ. Նիկոլայ եպիսկոպոս Մախարաձեն, Մցխեթայի հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Գուլամ ավագ քահանա Ծարանբերիձեն, Թբիլիսիի ս. Նունե եկեղեցու վանահայր տ. Գավրիլ Չոչոշվիլին և Քուրթախիի ս. Գևորգ եկեղեցու քահանա տ. Ալեքսանդր Կատամաձեն:

Մայիսի 12-ին, ուրբաթ օրը, ժամը 16-ին, Երևանի հարավային օդանավակայանում Հայոց Հայրապետը, որին ընկերակցում էին տ. Նարեկ, տ. Գևորգ սրբազանները, տ. Մասիս, տ. Թորգոմ, տ. Մոմիկ վարդապետները և տ. Հակոբ արեղան, ողջունեց և բարի գալուստ մաղթեց Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսին ու Նրա շքախմբի անդամներին:

Հայոց հողի վրա պատմական և հուզիչ էր երկու քույր եկեղեցիների Հովվապետների առաջին հանդիպումը և ի Բրիատոս սիրո առաջին ողջույնը:

Հանուն Հայաստանի կառավարության հարգելի հյուրին և Նրա շքա-

խմբի պատվարժան անդամներին օդանավակայանում ողջունեց և բարի գալուստ մաղթեց նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին սուրբերեք հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասարայանը:

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԵՐ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Այնուհետև երկու Հայրապետները հանդիսավոր շքերթով օդանավակայանից մեկնեցին Մայր Աթոռ և եկեղեցական թափորով ու «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Մայր տաճար:

Իջման սուրբ սեղանի առաջ կատարված եկեղեցական կարճ արարողությունից հետո Հայոց Հայրապետը եղբայրական ջերմ սիրով և անկեղծ ուրախությամբ ողջունեց վրաց օրթոդոքս եկեղեցու Գահակալի ժամանումը Մայր Աթոռ ու Էջմիածին հետևյալ ուղերձով.

ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ (12 մայիս)

Հայաստանցյաց առաքելական սուրբ եկեղեցին այսօր ցնծության մեջ է: Մենք նույնպես և մեր հոգևոր ամբողջ դասը ուրախ ենք, որովհետև ընդունում ենք այցելությունը մեր դրացի եղբայր երկրից՝ Վրաստանից՝ Համայն Վրաստանի կաթողիկոս-Պատրիարք Նորին Սրբություն Իլիա Բ Հայրապետին: Մենք իրար ծանոթ ենք վաղուց, երբ Մենք ավելի երիտասարդ էինք, իսկ Ինքը շատ-շատ երիտասարդ: Առաջին րուպից երբ մենք ճանաչեցինք իրար, մենք զգացինք, որ մեր ամբողջ կյանքի ընթացքին, մինչև մեր կյանքի վերջը, սխտի լինենք եղբայրներ, գործակիցներ, իրար կապված ճշմարիտ սիրով ի Քրիստոս:

Նորին Սրբությունը տակավին երբ կաթողիկոս չէր, մի քանի անգամ այցելած էր ու Էջմիածին և եղած էր Մեր ցանկալի հյուրը: Բայց այսօր Նրա այցելությունը բացառիկ պատմական նշանակություն է ստանում, որովհետև այս անգամ գալիս է որպես զլուխը, հովվապետը վրացական եկեղեցու:

Այսօր իրապես երջանիկ ենք, որ նորընտիր Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը գալիս է մեզ այցելություն տալու պաշտոնապես: Այս երևույթը խոսում է այն մասին, որ մեր երկու եկեղեցիները, ինչպես և մեր երկու ժողովուրդները՝ հայ և վրացի ժողովուրդները, ինչպես պատմության ընթացքում, հարյուրավոր տարիներ շարունակ, այսօր էլ կապված են իրար հետ եղբայրական սիրով և նույն զգացմունքներով, նույն իդեալներով:

Բարի եկաք սուրբ Էջմիածին, Դուք և ձեր պատկառելի պատվիրակության անդամները, որոնց անձնապես նույնպես բոլորին ծանոթ ենք, բոլորն էլ մեր սիրեցյալ եղբայրներն են: Եվ թույլ տվեք ստել, որ մենք չպիտի ընդունենք ձեզ իբրև սովորական հյուրեր, այլ իբրև հարազատներ, որ իրենց տունն են գալիս:

Թող Աստված միշտ մեա մեզ օգնական և օրհնի մեր այս հանդիպումը:

Թող Աստված օրհնի մեր երկու եկեղեցիների հետագա գործակցությունը թե՛ հոգևոր, էկոմենիկ իմաստով, թե՛ խաղաղության պայքարի ճանապարհով և թե՛ հայրենասիրական ոգով, որովհետև մեր երկու հայրենիքներն էլ նույն շահերը և նույն իդեալները ունեն սովետական ժողովուրդների մեծ ընտանիքում:

Բարի գալուստ:

Հայոց Հայրապետի սույն ողջույնի խոսքից հետո պատասխան ողջույնի ջերմ խոսքով հանդես եկավ Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը և ասաց.

ԻԼԻԱ Բ ՊԱՏՐԻԱՐԷ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ
ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ

Ձերդ Սրբություն Ամենայն Հայոց Սրբազնագույն կաթողիկոս Վազգեն Ա,

Այս օրը մեզ համար երջանիկ օր է, խնդության օր, որովհետև Մենք եկել ենք Մեր Եղբոր մոտ, Ձերդ Սրբության մոտ, եկել ենք հաշտելու Ձեզ Մեր սրտառույն սերն ու խորունկ համակրանքը: Սույն այցելությունը լուր պաշտոնական մի այցելություն չէ երկու քույր եկեղեցիների պետերի միջև: Սա իմ առաջին այցելությունն է իբրև Համայն Վրաստանի կաթողիկոսի: Ես եկել եմ կատարելու ուխտ և մատուցելու երկրպագություն հինավուրց վրաց եկեղեցու և ժողովրդի անունից հնադարյան հայ եկեղեցու հանդեպ:

Բայց միաժամանակ ես եկել եմ երկրպագելու այստեղ հնագույն սրբավայրերին, որոնք դարերի ընթացքում միացնում էին Հայաստանն ու Վրաստանը: Մեր երկու եկեղեցիների և ժողովուրդների հարաբերությունները այսօր չէ, որ սկսվել են: Դրանք բազմադարյան պատմություն և ավանդույթներ ունեն: Ես համոզված եմ, որ մեր այցելությունը նոր էջ կբացի մեր հարաբերությունների պատմության մեջ: Մենք սիրով ենք հիշում, Ձերդ Սրբություն, Ձեր այցելությունը Վրաստան, ինչպես հանգուցյալ Դավիթ Ե կաթողիկոսի մահվան, այնպես էլ Մեր գահակալության ժամանակ:

Դուք, իբրև Եղբայր, իբրև հարազատ Եղբայր, բաժանեցիք մեր վիշտը: Ձեր փայլուն, պայծառ ելույթները, Ձեր սրտառույն խոսքերը այնքան ազդեցին մեր և մեր ժողովրդի վրա, որ վրաց ժողովուրդը չափազանց սիրեց Ձեզ: Հայ ժողովուրդը մեր ամենահարազատ հարևանն է, որի հետ մենք մշտապես ունեցել ենք նույնական ճակատագիր և նույնական պատմության ընթացք: Ուստի, ապագային ևս մենք պետք է լինենք միասնական:

Թող օրհնյալ լինի մեր սույն հանդիպումը, թող օրհնյալ լինի հայ ժողովուրդը և Հայաստանյայց սուրբ եկեղեցին, Ամեն:

Մայր տաճարում հանդիսության ավարտից հետո երկու Հայրապետները առաջնորդվեցին Վեհարանի հանդիսության փոքր դահլիճ, որտեղ տեղի ունեցավ եղբայրական ջերմ զրույց երկու Հովվապետների և նրանց շքախմբի անդամների միջև:

Երեկոյան ընթրիքից հետո հյուրերը ծանոթացան Մայր Աթոռի շրջափակին, ապա այցելեցին Մայր տաճար, նրան առընթեր եկեղեցական արվեստի թանգարան, Հին Վեհարանի պատկերասրահ և Նոր Վեհարան:

Մայր Աթոռի հյուրերը ս. Էջմիածնում իրենց կեցության օրերին մնացին Երևանի հայրապետական վիլայում:

ԱՅՑՅԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայիսի 18-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, երկու Հայրապետները, իրենց շքախմբի անդամներով, Երևանում այցելեցին ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան:

Մատենադարանի շքամուտքի առաջ հաստատության տնօրենի տեղակալ Բաբկեն Չուգասզյանը, շրջապատված Մատենադարանի գիտական

անձնակազմի անդամներով, դիմավորեց երկու Հայրապետներին, ողջունեց նրանց և ապա առաջնորդեց հիմնարկության գիտական հարկարածիներ, ձեռագրաց գրապահոց՝ տալով անհրաժեշտ ծանոթություններ:

Ժամը 12-ին Տ. Լիլա Բ Պատրիարք-կաթողիկոսը Իր շքախմբի անդամներով, տ. Նարեկ և տ. Գևորգ եպիսկոպոսների առաջնորդությամբ, այցելեց ս. Մեսրոպ Մաշտոցի շիրիմ Օջականում:

Ժամը 17-ին, ճաշից հետո, մեծարգո հյուրերն այցելեցին Վաղարշապատի պատմական վանքեր՝ ս. Հռիփսիմի և ս. Գայանեի տաճարներ:

Ժամը 19-ին երկու Հայրապետները Մայր տաճարում ներկա եղան երեկոյան հանդիսավոր ժամերգությանը և միասին աղոթեցին:

Վանական սեղանատանը երեկոյան բնօրինակ հետո հարգելի հյուրերը Նոր Վեհարանի հանդիսությանց մեծ դահլիճում դիտեցին 1976 թվականի աշնանը մեռնորհների, Վեհափառ Հայրապետի գահակալության 20-րդ տարեդարձի և Երևանի վերակառուցված ս. Սարգիս եկեղեցու օծման հանդիսություններին նվիրված գունավոր կինոժապավենը:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՐԿ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Մայիսի 14-ին, կիրակի: Այսօր Հոգեգալստյան տունն է: Այս առթիվ Հայոց Հայրապետը հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Մայր տաճարում:

Ժամը 11-ին երկու Հայրապետները հանդիսավորապես առաջնորդվում են Մայր տաճար:

Մայր տաճարի ձախակողմյան դասում իրեն համար պատրաստված գանի վրա տեղ էր գրավել Նորին Սրբություն Լիլա Բ Պատրիարք-կաթողիկոսը՝ շրջապատված Իր շքախմբի անդամներով:

Մայր տաճարը լիքն էր ուխտավորներով, հալխատացյալ ժողովրդի հոծ բազմությամբ:

Ս. պատարագին ներկա էին Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ Կարպիս Կարազյանը, Հովհաննես Թոփուզյանը, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի անդամներ՝ ակադեմիկոս Բարկեն Առաքելյանը, դոկտոր, պրոֆեսոր Վարազդատ Հարությունյանը, Բաղդիկ Արզումանյանը, Արծրուն Գալիկյանը, Բեյրութից ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող ինժեներ Վահե Յազուպյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիրը և Մայր Աթոռի այլ պատասխանատու աշխատակիցներ:

Պատարագի ընթացքում սուրբ Սեղանին սպասարկում էին տ. Հուսիկ և տ. Գևորգ եպիսկոպոսները, վարդապետաց, քահանայից և սարկավագաց խմբերը:

Հոգեգալստյան տոնի առիթով Վեհափառ Հայրապետը կատարեց Մայր Աթոռի երիտասարդ միաբան և ձոզևոր ճեմարանից 1977 թվականի շրջանավարտ երկու սարկավագների կուսակրոն քահանայական ձեռնադրությունը (ձեռնադրության մասին տես «Էջմիածին» ամսագրի սույն համարը, էջ 29):

Հայրապետական սուրբ պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետը սուրբ խորան հրավիրեց վրաց Լիլա Բ Պատրիարք-կաթողիկոսին և Նրան ողջունեց հետևյալ ճառով.



ԵՐԿՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ՝ ԾՐՋԱՊԱՏՎԱԾ ՀՅՈՒՐԵՐՈՎ, ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՒՆԻ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՎ, ՎԵՀԱՐԱՆԻ ՄՈՒՏՔԻ ԱՌՋԵՎ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ
(14 մայիս)

«Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն սրբոյ. ամէն»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, այսօր, սուրբ Հոգեգալստյան տոնին, այս հրաշալի պահին, վայելում ենք նաև մի բացառիկ շնորհք՝ այստեղ ներկայությամբը Համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս Իլիա Բ Հայրապետի և Նրա շքախմբի անդամների:

Սիրելի ժողովուրդ, ձեզ բոլորիդ ոչ միայն ծանոթ, այլ նաև մտերիմ և սիրելի է Վրաստան բառը, Վրաստան երկիրը և վրացի ժողովուրդը: Բազում դարերէ ի վեր, մենք երկու դրացի ժողովուրդներ ենք: Կարելի է ասել, թե միատեղ հանդես ենք եկած պատմության հորիզոնի վրա: Բայց ինչ որ կարևորագույնն է մեզ համար, այն է, որ մոտ երկու հազար տարիներ առաջ հայոց և վրացոց ժողովուրդները նույն օրերէն իրենց սրտերը միատեղ բացեցին Քրիստոսի լույսին: Ահա թե ինչու մեր երկու եկեղեցիները առաքելական ծագում ունեն: Երրորդ դարու վերջերին, երբ Հռիփսիմէ և Գայանէ սուրբ կույսերը իրենց ընկերուհիներով զոհվում էին վասն քրիստոնեական հավատքին Հայաստանի հողի վրա, նույն օրերին իրենց ընկերուհիներից նույն հավատքով լեցուն Նունէ սուրբ կույսը նույն առաքելությունը կկատարէր Վրաստանի հողի վրա: Ու կարճ ժամանակ հետո Աստուծո օգնությամբ թե՛ Հայաստանում, թե՛ Վրաստանում կազմակերպվում էին երկու քույր եկեղեցիները: Այսպիսով հին աշխարհի արևելյան սահմանների վրա բարձրացան երկու ժողովուրդներ, հայ և վրացի ժողովուրդները, իբրև ջահակիրները ճշմարիտ հավատքի, քաղաքակրթության և բարոյական սկզբունքների: Քրիստոնեական հավատքը ընդունելուց հետո թե՛ հայոց մեջ և թե՛ վրացիների սկսվեց ոչ միայն կրոնական, այլ նաև ազգային մշակութային հզոր մի գարթոնք, որով հիմքը դրվեցին հայոց մեջ վրացիների գրականության, գիտության և արվեստների:

Ինչպես գիտեք, հինգերորդ դարի սկզբներին մեր երկու ժողովուրդները հորիզոնից իրենց այբուբենները և գրեթե նույն շրջանին թարգմանեցին սուրբ Գիրքը իրենց ազգային լեզուներով: Եվ այդ օրվանից մեզ համար թանկ են մեր քրիստոնեական հավատքի հետ միասին նաև մեր մայրենի լեզուները: Եվ այս պահին շատ երջանիկ ենք, որ այս սուրբ բեմից միաժամանակ հնչում են ձեր ականջներին, քաղցրորեն հնչում են հայերեն և վրացերեն լեզուները: Մեր ազգային լեզուների մեջ կա պատկերը մեր հոգիների: Մենք երկու ժողովուրդներս եղել ենք միշտ միատեղ, ձեռք-ձեռքի տված, կողք-կողքի և՛ ուրախության, և՛ փառքի շրջաններին, և՛ դժվարությունների, և՛ մանավանդ բարբարոս արշավանքների օրերին: Մեր երկու ժողովուրդները շատ հաճախ պատմության ընթացքին միատեղ են պայքարել նույն թշնամիների դեմ, պաշտպանելու համար իրենց լույս հավատքը քրիստոնեական, պաշտպանելու համար իրենց հայրենի հողը և իրենց ժողովուրդների ազատությունը: Վրացի և հայ ժողովուրդների եղբայրությունը առավել ամրապնդվեց և իր գագաթնակետին հասավ մանավանդ վերջին տասնամյակներին, սովետական շրջանին:

Ահավասիկ այսպիսի պատմական, ամուր ու հզոր հիմքերի վրա հաստատված է նաև եղբայրությունը մեր երկու եկեղեցիների: Հետևաբար հասկանալի է մեզ բոլորիս, սիրելի հավատացյալներ, թե ինչքա՛ն երջանիկ ենք մենք այսօր ընդունելու իբրև բացառիկ ցանկալի հյուր Նորին Սրբությունը

Իլիա կաթողիկոսը և իր եկեղեցու բարձրաստիճան ներկայացուցիչները:

Նորին Սրբություն Իլիա կաթողիկոսը նոր ընտրված հովվապետ է, հազիվ հինգ-վեց ամիսներ առաջ: Մենք խորապես սիրում ու գնահատում ենք Նրան իրև հստակապես եղբայր: Թույլ տվեք նաև այսօր, այս առիթով, ձեր բոլորի անունից կրկին շնորհավորել Իլիա կաթողիկոսը Իր ընտրության և Իր արժանավորության առիթով: Թեև երիտասարդ, բայց Նա շատ իմաստուն անձնավորություն է, բաջ պատրաստված հոգևորական և ճշմարտապես անձնվեր ու բարի Հայրապետ իր հավատացյալ ժողովրդի համար: Նա հույժ գնահատված մի բարձրաստիճան հոգևորական է նաև եկեղեցիների Էկումենիկ շարժման ճանապարհի վրա, որ բացառիկ ծառայություններ մատուցած է աշխարհի խաղաղության ամրապնդման գործում: Շատ անգամ խաղաղության միջազգային համագումարներին մենք միասին ենք եղել: Նա միշտ հանդես է եկել Իր հստակ և համարձակ խոսքով՝ ի պաշտպանություն խաղաղության դատին, ի պաշտպանություն ժողովուրդների բարեկամության իդեալին:

Իր ընտրությամբ վրացական օրթոդոքս սուրբ եկեղեցու պատմության մեջ նոր էջ բացվեց: Մենք աղոթում ենք առ Աստված, որ Նրան պարզի կենաց երկա՛ր, շա՛տ երկար տարիներ ու անսպառ ուժ ու եռանդ, բազույն և լավատեսություն, որպեսզի կարողանա առաջնորդել իր հարազատ մայրենի եկեղեցին ու առավել ևս ծաղկեցնել և պայծառացնել նրան, որպեսզի նաև մեր օրերին վրացական սուրբ եկեղեցին շարունակի ճատագայրել իր հավատքի վկայությունը քրիստոնեական եկեղեցիների ընտանիքում:

Թող Աստված միշտ Նրան լինի առաջնորդող ոգի և միշտ օգնական:

Վստահ ենք նաև, որ մեր այս հանդիպումը սովորական հանդիպում չէ, այլ այս պահին սկսում է նաև մի նոր էջ մեր երկու եկեղեցիների պատմության մեջ: Վստահ ենք նաև, որ Մենք երկուքս միշտ միատեղ և միասին ոչ միայն պիտի աղոթենք, այլև պիտի գործենք ջերմ եռանդով, մեր երկու ժողովուրդների և եկեղեցիների անբակտելի եղբայրության ամրապնդման համար:

Սիրելյալ եղբայր ի Քրիստոս, թույլ տվեք այս հանդիսավոր առիթով մի անգամ ևս հայտնել Ձերդ Սրբության բարի գալուստ ս. Էջմիածին և ողջագուրվել Ձեզ հետ:

Այնուհետև հանդես եկավ Նորին Սրբություն Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը՝ Հայոց Հայրապետին ողջված հետևյալ ողերձով.

ԻԼԻԱ Բ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԺԱՌԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Ձերդ Սրբություն Ամենայն Հայոց կաթողիկոս, ի Քրիստոս եղբայր իմ, Հավատացյալ սիրելի ժողովուրդ,

Այս օրը մեզ համար բացառիկ օր է, ուրախության օր, երբ ս. Էջմիածնում իրար են հանդիպում երկու հնագույն եկեղեցիների ներկայացուցիչները:

Սա իմ առաջին այցելությունն է եղբայրական Հայաստան իրև վրաց եկեղեցու կաթողիկոս: Ես ի՞նչ պարտավորված էի համարում այցելելու Հայաստան, ս. Էջմիածին՝ ողջունելու Նորին Սրբությանը և երկրպագելու այն սրբավայրերին, որ դարեր շարունակ մեր երանելի նախորդները եկել էին

մատուցելու իրենց երկրպագությունն ու մեծարանքը: Հայոց և վրաց եկեղեցիները աշխարհի հնագույն եկեղեցիներից են, ինչպես աշխարհի հնագույն ժողովուրդներից են մեր ժողովուրդները: Մենք, Ձերո՞րդ Սրբություն, ինչպես Դուք հիշատակեցիք, միասին հաղորդվեցինք քրիստոնեական լուսով, միասին ընդունեցինք քրիստոնեությունը և միասին անցանք պատմության շավիղներով:

Ես հավատացած եմ, որ Աստված մեր երկու ժողովուրդներին գորավիզ եղավ՝ միասին հաղթահարելու պատմության արհավիրքները, հասնելու այս օրվան և հանդիպելու միմյանց: Այն հոգևոր և նյութական մշակույթը, որ ստեղծել, պահել, պահպանել է հայ ժողովուրդը, մեծ ավանդ է մարդկության ստեղծած մշակույթի գանձարանում:

Մեր ժողովուրդները միասին պայքարել են շատ հաճախ միևնույն դրոշակի տակ և միասին էլ վայելել են հաղթանակի գերագույն ուրախությունը:

Եվ այժմ ես եկել եմ հաղորդակից դառնալու այս հնագույն եկեղեցու, այս հնագույն ժողովրդի ստեղծած արժեքներին և իմ հարգանքը մասուցելու նրան և նրա հոգևոր Առաջնորդին, որպեսզի հայտնեմ այստեղ այն խորին սերը, այն ջերմ համակրանքը և այն մեծ նվիրումը, որ զգում եմք մենք մեր եղբայր ժողովրդի հանդեպ: Այսօրվա մեր հանդիպումը այդ սիրո և համակրության ամենաջերմ արտահայտություններից մեկն է:

Ձեզ, Ձերո՞րդ Սրբություն, ճանաչում եմ ոչ միայն Հայաստանի և Վրաստանի ժողովուրդներն ու եկեղեցիները, այլև ամբողջ աշխարհի քրիստոնյա եկեղեցիները, իբրև հոգևոր մեծ գործչի: Ձեզ ամբողջ աշխարհը ճանաչում է ոչ միայն իբրև եկեղեցու առաջնորդ, այլ նաև խաղաղության պաշտպանության, ազգերի եղբայրության համար պայքարող նվիրյալ անձնավորություն: Ես այժմ կկամենայի կրկնել այն բառերը, որ ասվեցին սուրբ Նիկողայոսին, նրա ընտրության ժամանակ: Օրհնության պահին նրան դիմեցին ներկաները և ասացին. «Երջանիկ է այն ժողովուրդը, այն հոտը, որ ունի այսպիսի առաջնորդ»: Եվ ես այսօր ուզում եմ կրկնել նույն խոսքը. Երջանիկ է հայ ժողովուրդը, հայոց եկեղեցին, որ ունի Վեհափառ Վազգեն Ա կաթողիկոսին, իբրև իրեն գլուխ:

Ձերո՞րդ Սրբություն, ես հավատացած եմ, որ մեր հարաբերությունները ապագայում ավելի սերտ կլինեն:

Այսօր հայոց եկեղեցու համար բացառիկ օր է: Հայ ժողովուրդը տոնում է Հոգեգալստյան տոնը: Թող սուրբ Հոգին և Նախախնամությունը ամրացնի և սերտացնի վրաց և հայ ժողովուրդների բարեկամությունը, թող սուրբ Հոգին օրհնի այս օրը:

Ի նշան մեր ժողովուրդների բարեկամության և սիրո, թույլ տվեք Ձեզ մատուցել ս. Գևորգի այս պատկերը: Թող սուրբ Հոգու և ս. Գևորգի օրհնությամբ երջանիկ լինեն հայ և վրաց ժողովուրդները և բարգավաճեն ապահովության և խաղաղության մեջ:

Սույն ճառերի փոխանակումից հետո, ս. պատարագի ավարտին, երկու Հայրապետները առաջնորդվեցին Վեհարանի գահաարահ, որտեղ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոսը շնորհավորեց Հայոց Հայրապետին Հոգեգալստյան տոնի առթիվ և վեր հանեց վրացական եկեղեցու նորընտիր Հայրապետի Մայր Աթոռ ս. Էջմիածին կատարած այցե-

լության հոգևոր նշանակությունը հայ և վրաց եկեղեցիների մերօրյա պատմության մեջ:

Օրվա հանդիսությունն ավարտվեց Վեհափառ Հայրապետի «Պանդանիչ»-ով:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Նույն օրը, ժամը 15-ին, Վեհարանի հայրապետական սեղանատանը տրվեց պաշտոնական նաշկերույթ՝ ի պատիվ Մայր Աթոռի հյուրերի:

Ընդունելությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Մայր Աթոռին աղբյուր ճարտարապետական հանձնաժողովի անդամները և Մայրավանքի պատասխանատու աշխատողներ:

Հրավիրյալների թվում էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին աղբյուր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Ընդունելության ժամանակ ստեղծված եղբայրական ջերմ մթնոլորտում ճաներ փոխանակեցին հայոց և վրաց եկեղեցիների Հայրապետները, ակադեմիկոս Բարկեն Առաքելյանը, ղոկտոր, պրոֆեսոր Վարազդատ Հարությունյանը:

Ճաշկերույթի ընթացքում, հանուն Հայաստանի կառավարության, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին աղբյուր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը ջերմորեն ողջունեց ներկայությունը եղբայրական վրաց եկեղեցու և ժողովրդի պատվիրապետության՝ ի դեմս Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսի, և վեր հանեց սովետական ժողովուրդների բազմազգ ընտանիքում հայ և վրաց եկեղեցիների ու ժողովուրդների անխախտ բարեկամության կարևորությունը և բարիդրացիական հարաբերությունները՝ ի բարօրություն երկու ժողովուրդների և եկեղեցիների պայծառության ու խաղաղության:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայիսի 15-ին, երկուշաբթի օրը, ատավոության ժամը 10-ին, երկու Հովիպետները իրենց շքախմբի անդամներով Ծիծեռնակաբերդում այցելեցին Հայ նահատակաց հուշարձան, որ ծաղկեպսակներ գետեղեցին և միասին Հոգվոց արտասանեցին հայ նահատակաց հոգիների խաղաղության համար հոգեհանգստյան աղոթքների կատարումով:

Այնուհետև, ժամը 11-ին, երկու Հայրապետները այցելեցին Երևանի ս. Սարգիս առաջնորդանիստ ու վերջերս վերանորոգված եկեղեցի, որտեղ մուտք գործեցին «Հրաշափառ»-ով:

Հանուն Արարատյան թեմի թեմական-եկեղեցական իշխանության, հոգևորականության և հավատացյալ ժողովրդի, երկու Հայրապետների ներկայությունը ողջունեց վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպիսկոպոս Արարատյանը և բարի գալուստ մաղթեց նրանց:

Այլի ուշ, ժամը 13-ին, Նորին Սրբություն Ս. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսին և Համայն Վրաստանի Նորին Սրբություն Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսին, հանուն Հայաստանի կառավարության, ընդունեց Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահի տե-



ԱՂՈՒՔ ԾԻՇԵՆՈՒՆԱԿԱԲԵՐՂԻ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՌԱՋ

դակալ տիար Հովհաննես Բաղդասարյանը և բարի գալուստ մաղթեց Նրանց:

Երկու Հայրապետների և Հայաստանի բարեխնամ կառավարության ներկայացուցչի միջև տեղի ունեցավ ջերմ ու հետաքրքիր գրույց, որին ներկա եղավ նաև Անդրանիկ Հասրաթյանը:

Ժամը 15-ին Սևանի «Աղթամար» հյուրանոցում, ի պատիվ Մայր Աթոռի հյուրերի, տրվեց ողջերթի ճաշկերույթ՝ մասնակցությամբ երկու Հովհապետների և Նրանց շքախմբի անդամների:

ՀՐԱԺԵՇՏ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ

Մայիսի 16-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհաբանում տեղի ունեցավ Հայոց Հայրապետի և Վրաց Պատրիարք-կաթողիկոսի վերջին հանդիպումը՝ ի ներկայության նրանց շքախմբի անդամների:

Եղբայրական վրաց ժողովրդի և վրաց եկեղեցու բարձրաստիճան ներկայացուցիչները հրաժեշտ տվեցին Հայոց Հայրապետին և Մայր Աթոռին ու մեկնեցին անմոռաց տպավորություններով:

Մեկնելուց առաջ երկու Հայրապետները միասին առաջնորդվեցին Մայր տաճար և աղոթեցին բարեհաջող ուղևորության համար:

Այնուհետև երկու Հովհապետները ավտոմեքենաների շարասյունով մեկնեցին Երևանի հարավային օդանավակայան, ուր Հայոց Հայրապետը անձամբ ճանապարհեց իր թանկագին Հյուրին ու նրա շքախմբի անդամներին դեպի Թբիլիսի:

Նորին Սրբություն Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսին ու նրա շքախմբի անդամներին օդանավակայանում բարի ճանապարհ մաղթեց նաև Անդրանիկ Հասրաթյանը:

Մայիսի 12—16 օրերին վրաց եկեղեցու Հովհապետի պատմական այցելությունը Մայր Աթոռ և երկու քույր եկեղեցիների հոգևոր Պետերի հանդիպումներն ու գրույցները, միատեղ կատարված աղոթքները և այս առթիվ արտասանված ճառերը հանդիսացան պաշտոն վկայությունը հայ և վրաց եկեղեցիների և երկու հարևան ժողովուրդների դարավոր բարեկամության, քրիստոնեական եղբայրական սիրո և համագործակցության:

Ա. Հ.

Պ. Շ.





ՀԱՄԱՏԵՂ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1978 թվականի մայիսի 19—22-ը Ամենայն Հայոց կաթողիկոսի եղբայրական հրավերով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում էր գտնվում Եթովպիայի ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն Աքրա Թեքլե Հայմանոթը իր շքախմբի անդամների հետ: Սա եթովպական եկեղեցու մի Պատրիարքի առաջին այցելությունն էր հայ եկեղեցու պատմական կենտրոն սուրբ Էջմիածին:

Նորին Սրբության շքախմբին մաս էին կազմում եթովպական եկեղեցու սուրբ Սինողի բարտուղար և Կաֆայի արքեպիսկոպոս տ. Իոսիֆը, եթովպական եկեղեցու արտաքին հարաբերությունների բաժնի նախագահ և Գոջամի առաջնորդ տ. Մակարիոս արքեպիսկոպոսը, նույն բաժնի կառավարիչ Հավտե Սեյլասի տ. Թաուպա վարդապետը, Խաղաղության պաշտպանության եկեղեցիների կոնֆերանսի անդամ և Ծառայի նախագի եկեղեցիների զլխավոր վարիչ տ. Սողոմոն ալազ քահանան, ինչպես նաև ռուսաց եկեղեցու կողմից պատվիրակության ուղեկցող, Ղրիմի և Սիմֆերոպոլի առաջնորդ տ. Լեոնտի արքեպիսկոպոսը:

Մայիսի 21-ին, կիրակի օրը, ս. Էջմիածնի Մայր տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ, որի ընթացքում Ամենայն Հայոց կաթողիկոսը և եթովպական եկեղեցու Սրբազան Պատրիարքը հանդես եկան եղբայրական փոխադարձ սիրո բարեմաղթություններով:

Նույն օրը Վեհարանի սեղանատանը տրվեց պաշտոնական ճաշկերույթ՝ ի պատիվ Մայր Աթոռի բարձրատիճան հյուրերի: Ընդունելության ժամանակ փոխանակվեցին բաժակաճառեր:

Մայիսի 22-ին, երկուշաբթի օրը, ժամը 10-ին, եթովպական եկեղեցու Սրբազան Պատրիարքի այցելության ամենամուգիչ պահը եղավ ծաղկեպսակի գետնում արարողությունը և միատեղ աղոթքը 1915 թվականի հայ ցեղասպանության մեկուկես միլիոն զոհերի հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշարձանի ստալ:

Նույն օրը, ժամը 11-ին, Հայոց Հայրապետին և եթովպական եկեղեցու Սրբազան Պատրիարքին ընդունեց Հայկ. ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ Հովհաննես Բաղդասարյանը:

Հայոց և եթովպական եկեղեցիների հոգևոր Պետերի ու Հայաստանի

կառավարության անդամացուցչի միջև տեղի ունեցավ ջերմ գրույց, որին անդամ եղավ նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Հաջորդ օրերին Մայր Աթոռի մեծարգո հյուրերը այցելեցին Վաղարշապատի պատմական վանքեր՝ ս. Հովհաննիս, ս. Գայանե տաճարներ, ինչպես նաև ս. Գեղարդ վանք, Երևանի ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցի և Երևանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան:

Մայիսի 22-ին Վեհարանում հայ և եթովպական եկեղեցիների անդամացուցիչների միջև տեղի ունեցավ տեսակցություն Էկումենիկ ոգով, որի ընթացքում գոհունակությամբ արձանագրվեց երկու քույր եկեղեցիների՝ նույն հավատի, դավանանքի և ավանդությունների հիմքի վրա զարգացող սերտ կապերը, ինչպես նաև հայ և եթովպացի ժողովուրդների միջև եղբայրական դարավոր անկեղծ բարեկամությունը, որը շարունակվում է նաև մեր օրերում, բարեկամություն, որի զարգացման և ամրապնդման համար աղոթում և աջխատում են երկու եկեղեցիները:

Խորհրդակցությունում երկու կողմերը հաստատեցին, որ եկեղեցիների կոչումն է իրենց ակտիվ նպաստը բերել՝ հանգցնելու համար աշխարհում դեռևս գոյություն ունեցող պատերազմական օջախները, իրենց ջանքերը միավորել պահպանելու և ամրապնդելու կայուն խաղաղություն աշխարհում, նպաստել գաղութային ստրկության և ցեղային խտրականության վերացմանն ուղղված բոլոր միջոցառումներին՝ կենսագործելու համար ազգային և սոցիալական արդարությունը աշխարհում, եղբայրությունը և հավասարությունը ժողովուրդների միջև:

Խորհրդակցության ընթացքում ցանկություն հայտնվեց, որ երկու եկեղեցիների միջև հետզհետե զարգանան գործակցության կապերը՝ փոխայցելություններով և դասախոսների ու ուսանողների փոխանակումներով:

Երկու Հայրապետները իրենց իղձը հայտնեցին մոտ ապագայում հարաբերության մեջ մտնել արևելյան ուղղափառ՝ դավանակից մյուս երեք եկեղեցիների՝ ղպտական, ասորական և մալաբար եկեղեցիների Պետերի հետ՝ կազմակերպելու համար մոր հանդիպում վերահիշյալ քույր եկեղեցիների Հայրապետների միջև:

Եթովպական եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն Աքբա Թեքլե Հայմանոթը պաշտոնապես հրավիրեց Նորին Սրբություն Ս. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին այցելելու Եթովպիա մոտ ապագայում:

Հրավերը սիրով ընդունեց Հայոց Հայրապետը:

Սույն հաղորդագրությունը խմբագրվեց և ստորագրվեց ս. Էջմիածնի Վեհարանում 1978 թվականի մայիսի 22-ին:

ԱԲԲԱ ԹԵՔԼԵ ՀԱՅՄԱՆՈԹ
ՊԱՏՐԻԱՐԿ ԵԹՈՎՊՈՒԿԱՆ
ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, 22 մայիսի 1978 թ.



Քույր Եկեղեցիներ



ԵԹՈՎՊԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐԿ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԲԲԱ ԹԵՔԼԵ ՀԱՅՄԱՆՈԹԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

1978 թվականի մայիսի 19—22-ը Ամենայն Հայոց կաթողիկոս, Նորին Արքեպիսկոպոս Ս. Տ. Վազգեն Առաջինի եղբայրական հրավերով Մայր Աթոռում էր գտնվում եթովպական ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Արքեպիսկոպոս Աբբա Թեքլե Հայմանոթը:

Եթովպական ուղղափառ եկեղեցու մի Պատրիարքի առաջին այցելությունն էր սա հայ եկեղեցու պատմական կենտրոն Մայր Աթոռ ու Էջմիածին:

Եթովպիայի Աբբազան Պատրիարքի շքախմբին մաս էին կազմում եթովպական եկեղեցու ու Սինոդի քարտուղար և Գաֆայի տ. Իոսիֆ արքեպիսկոպոսը, եթովպական եկեղեցու արտաքին հարաբերությունների բաժնի նախագահ և Գոջամի առաջնորդ տ. Մակարիոս արքեպիսկոպոսը, նույն բաժնի կատարարիչ տ. Թաուպա վարդապետը, Խաղաղության արշտարանության եկեղեցիների կոնֆերանսի անդամ և Շառայի նախանգի եկեղեցիների գլխավոր վարիչ տ. Սողոմոն ալյազ քահանան:

Մայր Աթոռի մեծարգո հյուրերին Մոսկվայից ուղեկցում էր, ուսաց եկեղեցու Նորին Արքեպիսկոպոս Ս. Պիմեն Պատրիարքի անունից, Ղրիմի և Սիմֆերոպոլի առաջնորդ տ. Աննոսի արքեպիսկոպոսը:

ԺԱՄԱՆՈՒՄ

Մայիսի 19-ին, ուրբաթ օրը, ժամը 15-ին, եթովպական եկեղեցու պատվիրակությունը ժամանեց Երևանի օդանավակայան:



ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԵԹՈՎՊԻԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐԿ ԱԲԲԱ ԹԵՔԼԵ ՀԱՅՄԱՆՈՒ

Հայոց Հայրապետը, որին ընկերակցում էին ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Պսակ արքեպիսկոպոս Թումայանը (Լոնդոն), Ռուսիանի և Բուլղարիայի առաջնորդ տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիրոսյանը, տ. Նարեկ և տ. Գևորգ սրբազաններն ու Մայր Աթոռի միաբանները, ողջունեց և բարի գալուստ մաղթեց Նորին Արքայություն Արքա Թեքլե Հայմանոթին և նրա շքախմբի անդամներին:

Պատմական և հուզիչ էր երկու քույր եկեղեցիների Հովվապետների հանդիպումը և ի Քրիստոս սիրո նրանց առաջին ողջույնը:

Հանուն Հայաստանի կառավարության հարգելի հյուրին և նրա շքախմբի պատվարժան անդամներին օղանավակայանում ողջունեց և բարի գալուստ մաղթեց նաև Հայկ. ՍՍՀ Միմիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասարաթյանը:

Այնուհետև երկու Հայրապետները հանդիսավոր շքերթով մեկնեցին Մայր Աթոռ և եկեղեցական թափորով ու «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Մայր տաճար:

Իջման ս. սեղանի առաջ կատարված եկեղեցական կարճ արարողությունից հետո Հայոց Հայրապետը եղբայրական ջերմ սիրով և անկեղծ ուրախությամբ ողջունեց եթովպական ուղղափառ եկեղեցու Գահակալի ժամանումը Մայր Աթոռ:

Հայոց Հայրապետի ողջույնի խուփից հետո պատասխան ողջույնի ջերմ խուսքով հանդես եկավ Արքա Թեքլե Հայմանոթը:

Ապա երկու Հայրապետները առաջնորդվեցին Վեհարանի հանդիսությանց փոքր դահլիճ, որտեղ տեղի ունեցավ եղբայրական ջերմ գրույց երկու Հովվապետների և նրանց շքախմբի անդամների միջև:

Ժամը 22-ին, Վեհարանում պաշտոնական ընթրիքից հետո, հյուրերը մեկնեցին Երևան և իրենց կեցության օրերին մնացին «Արմենիա» հյուրանոցում:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայիսի 20-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, երկու Հայրապետները իրենց շքախմբի անդամներով այցելեցին Երևանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան:

Ժամը 11-ին Եթովպիայի ուղղափառ եկեղեցու Գահակալը իր շքախմբի անդամներով այցելեց Գառնիի վերջերս վերականգնված հեթանոսական տաճար և ապա ուխտի գնաց ս. Գեղարդ վանք: Մեծահարգ հյուրերին ընկերակցում էին տ. Նարեկ և տ. Գևորգ սրբազանները:

Ժամը 19-ին երկու Հայրապետները Մայր տաճարում ներկա եղան երեկոյան հանդիսավոր ժամերգությանը և միասին աղոթեցին: Այնուհետև վանական սեղանատանը երեկոյան ընթրիքից հետո, հարգելի հյուրերը Նոր Վեհարանի հանդիսությանց մեծ դահլիճում դիտեցին 1976 թվականի աշնանը սրբալույս մեռոնի օրհնության, Հայոց Հայրապետի գահակալության 20-րդ տարեդարձի և Երևանի վերակառուցված առաջնորդանիստ ս. Սարգիս եկեղեցու օծման հանդիսություններին նվիրված գունավոր կինոժապավենը:



ՀԱՆԳԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Մայիսի 21-ին, կիրակի: Սկիզբն Հարության կյուրակնից:

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը:

Ժամը 11-ին երկու Հայրապետները հանդիսավորությամբ առաջնորդվում են Մայր տաճար:

Չախակողմյան դատում իրեն համար պատրաստված մասնավոր Աթոռի վրա տեղ է գրավում Նորին Սրբություն Արքա Թեքլե Հայմանոթը:

«Հայր մեր»-ի ժամանակ Վեհափառ Հայրապետը բարձրանում է ավագ խորան և, ողջունելով Մայր Աթոռի թանկագին հյուր Արքա Թեքլե Հայմանոթի և նրա շքախմբի անդամների ներկայությունը, արաստանում է հետևյալ ողբույցի խոսքը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՒՐԱԸ ԽՈՐԱՆԻՑ (Մայր տաճար, 21 մայիսի 1978 թ.)

«Յանուն Հօր և Որդույ և Հոգույն սրբոյ. ամեն»:

Ինչքա՛ն բարի է և ինչքա՛ն վայելուչ, որ եղբայրներ միշտ միասին և միատեղ լինեն:

Սիրելի հավատացյալներ, այս խոսքերը սուրբ Գրքից են, սաղմունքից: Սաղմոսերգու հեղինակը գովերգում է եղբայրության գաղափարը և երանի է տալիս այն պահին, երբ եղբայրներ միասին են գտնվում, եղբայրական սիրո զգացմունքներով իրար հետ միացած: Ս. Ավետարանում և սուսքելական թղթերում երկու մեծ գաղափարներ մասնավոր կարևորությամբ փատարանվում են և դրանց անհրաժեշտությունը ընդգծվում մարդկային ընկերային կյանքի մեջ: Դրանք եղբայրական սիրո և խաղաղության գաղափարներն են: Միայլ չի լինի ասել, որ Քրիստոսի Ավետարանը եղբայրական սիրո և խաղաղության մեծ Գիրքն է, որը այժմեական է միշտ: Ժամանակներ, դարեր, կյանքի տարրեր-տարրեր պայմաններ կուգան ու կանցնեն, կփոփոխվեն, կհեղաշրջվեն, բայց հավիտենապես կմնա ճշմարիտ՝ կենսական անհրաժեշտությունը, որ մարդկային կյանքում պահպանվի խաղաղությունը և եղբայրական սերը մարդկանց միջև: Քրիստոսի առաքյալները այնքան են բարձրացնում եղբայրսիրության գաղափարը, որ պատգամում են, թե մարդիկ իրենց սերը առ Աստված կարող են ապացուցել եղբայրական սիրով դեպի իրենց եղբայրները: Իսկ մեր մեծ բանաստեղծներից մեկը՝ Մկրտիչ Պեշիկաշյան, գովերգելով եղբայրսիրությունը, ասում է, որ երկնքի աստղերի տակ ի՛նչ կա ավելի գեղեցիկ, քան եղբայր անունը:

Այսօր, սիրելի հավատացյալներ, մեզ հետ են նաև հետավոր մի աշխարհից եկած քրիստոնյա եղբայրներ: Մեր հյուրերը մեր թանկագին եղբայրներն են, որոնք եկել են Եթովպիայից՝ իրենց գլուխը ունենալով Եթովպիո ս. եկեղեցու Հայրապետը, Պատրիարքը՝ Նորին Սրբություն Արքա Թեքլե Հայմանոթը՝ շրջապատված արքեպիսկոպոսներով և քահանաներով:

Մենք երջանիկ ենք այսօր, որ նրանց հետ միասին մեր մեջ է գտնվում նաև ներկայացուցիչը ռուս արավուպայ եկեղեցու՝ գերաշնորհ Լեոնտի արքեպիսկոպոսը, որ նրանց ողեկցեց Մոսկվայից:

Մենք երջանիկ ենք ողջունելու նաև նրա ներկայությունը մեր մեջ:



ԵՐԿՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ ԻՐԵՆՑ ԺԲԱԽՄԻԻ ԱՆՊԱՄՆԵՐՈՎ ՎԵՀԱՐԱՆԻ ԺԲԱՄՈՒՏԻ ԱՌԱՋ

Սիրելի ժողովուրդ, դուք անշուշտ լսած կլինեք և քարտեզի վրա էլ տեսած Եթովպիո երկիրը: Ափրիկեի արևելյան կողմը գտնվող շատ ընդարձակ մի երկիր է՝ շուրջ 30 միլիոն բնակչությամբ: Եթովպացիք քրիստոնյաներ են, հին քրիստոնյաներ, ինչպես մենք՝ հայերս: Համարյա նույն ժամանակ, Գ—Դ դարաշրջաններին, այնտեղ ևս տարածվեց քրիստոնեական հավատքը և կազմակերպվեց եթովպական սուրբ եկեղեցին, որ ահա մինչև այսօր հավատարիմ մնաց Քրիստոսի Ավետարանին, հակառակ երբեմն բազում դժվարությունների և հալածանքների այլ բարբարոս և ոչ քրիստոնյա արշավողների կողմից: Եթովպական եկեղեցին մեզ համար հարազատ քույր եկեղեցի է, որովհետև եթովպացիք նույն դավանանքը ունեն, ինչպես մեր եկեղեցին, և նույն քրիստոնեական ավանդությունները: Գիտեք երևի, որ քրիստոնեական եկեղեցիների մի ընտանիք կա, արևելյան ուղղափառ հին եկեղեցիների, որոնցից են մեր Հայաստանյայց եկեղեցին և Եթովպիո սուրբ եկեղեցին: Այս հանգամանքը առավել շեշտում է ու ընդգծում մեր եղբայրությունը և մեր գործակցությունը:

Այս պատմական այցելության առիթով մենք՝ երկու եկեղեցիներս, արտահայտում ենք մեր ցանկությունները հետզհետե ավելի զարգացնելու մեր եղբայրական կապերը և հետզհետե ավելի ընդարձակելու մեր գործակցությունը: Մեր օրերին, բացի կրոնական, հոգևոր հարցերից, կան նաև համայն մարդկությունը հուզող հարցեր, որոնք մեզ մղում են մեր խոսքը ասել Քրիստոսի Ավետարանի ճշմարտության լույսի տակ և նպաստել աշխարհի խաղաղության ամրապնդման, ժողովուրդների եղբայրության և համերաշխ գործակցության:

Մենք վստահ ենք, թե մեր եթովպացի եղբայրները մեզ հետ միասին պիտի աղոթեն և գործեն այդ ոգով և այդ սրբազան նպատակով: Մենք պիտի զարգացնենք նաև մեր գործակցությունը մեր մյուս քույր եկեղեցիների հետ, Էկումենիկ ոգով, այսինքն՝ համերաշխության, սիրո, միության ոգով:

Այսօր Եթովպիան ընդ որոշմանում գարգանում է իբրև պետություն և հասարակական կառուցվածք, իր ճակատագիրը դեպի ավելի պայծառ հորիզոններ առաջնորդելու համար: Մենք վստահ ենք, որ նաև եթովպական եկեղեցին, ոգեշնչված ս. Հոգով, պիտի զարգացնի ու ծավալի իր հոգևոր առաքելությունը առավել նպատակապայացությամբ, որպեսզի սուրբ գրական Եթովպիո մեջ միշտ պայծառ մնա և ճառագայթի Քրիստոսի ս. Ավետարանի լույսը:

Սիրելի ժողովուրդ, սիրելի հավատացյալներ, այս մաղթանքներով և ցանկություններով թույլ տվեք ձեր բոլորի անունից մի անգամ ևս ողջունել ժամանումը Եթովպիո Սրբազան Պատրիարքի, մաղթել Նրան քաջառողջություն և երկար հովվապետություն, Աստուծո կամքը կատարելու համար երկրի վրա:

Ձերդ Սրբություն, սիրեցյալ Եղբայր Մեր ի Քրիստոս, թող Աստված օրհնի ձեր եկեղեցին, ձեր բարեպաշտ ժողովուրդը:

Թող Աստված օրհնի մեր երկու եկեղեցիների եղբայրությունը:

Այնուհետև ավագ խորան հրավիրվեց Աբբա Թեքլե Հայմանոթ Պատրիարքը, որը ողջունեց Հայոց Հայրապետին հետևյալ ճառով.

**ԵԹՈՎՊԻԱՅԻ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԿԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍԹԸ
ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ**

(21 մայիսի 1978 թ.)

Ձերդ Սրբությունն Վազգեն Ա կաթողիկոս Ասենայն Հայոց,

Սիրելի հավատացյալ եղբայրներ և քույրեր,

Նախ և սուաջ ձեզ եմ փոխանցում ողջույնները Եթովպիայի ժողովրդի և անձամբ իմ կողմից, ձեզ, այսինքն այն ժողովրդին, որ ապրում է Հայաստանում:

Թեև Եթովպիան և Հայաստանը աշխարհագրականորեն իրարից շատ հեռու են գտնվում, սակայն բազում փորձառություններ և շատ այլ հարցեր նրանց միացնում են:

Երկու երկրներն էլ կարևոր տեղ են գրավում Հին Կտակարանում: Դեռ ավելին, այս երկու երկրները առաջիններից են այն երկրների թվում, որ քրիստոնեությունը ընդունել են առաջին դարերին: Երբ մենք կարդում ենք Աստվածաշունչը, մասնավորաբար Ծննդոց գրքի Ը գլուխը, Աբարամ լեռը մեզ հիշեցնում է ամբողջ Հայաստանը:

Ինչպես որ Հայաստանը շատ տառապանքներ է կրել թուրքերից, այնպես էլ Եթովպիան տառապել է այդ նույն ժողովրդից:

Եթովպացիները առիթը չեն ունեցել ապրելու Հայաստանում, սակայն Հայաստանի հայերից շատերը ապրել են Եթովպիայում երկար տարիներից ի վեր՝ եթովպացիներին համարելով իրենց եղբայրներն ու քույրերը, զգալով իրենց հարազատ՝ ինչպես իրենց տանը:

Ձերդ Սրբություն, ինձ համար մեծ հաճույք է այցելել ձեր երկիր, այսինքն այն կղզին, որ ջրհեղեղից հետո ազատեց մարդկային ցեղը բնաջրնջումից, և այն երկիրը, որը հանդիսացավ քրիստոնեության առաջին կղզին՝ Նոր Կտակարանում:

Արդարև, ես և իմ եղբայրները շատ երախտապարտ ենք այս հրավերի համար: Այս այցելությունը առավել ես պիտի զորացնի հարաբերությունը մեր երկու երկրների և մաև մեր երկու եկեղեցիների միջև: Այս այցելությունը պիտի օգնի մեզ՝ երկու եկեղեցիներին՝ գործակցելու ավելի սերտորեն:

Կեցցե Ձերդ Սրբությունը:

Կեցցե Հայաստանի հոգևորականությունը:

Կեցցե հայ ժողովուրդը:

Կեցցե մեր երկու եկեղեցիների համագործակցությունը:


ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Նույն օրը, ժամը 15-ին, Վեհարանի հայրապետական սեղանատանը, ի պատիվ Մայր Աթոռի հյուրերի, տրվեց պաշտոնական ճաշկերույթ:

Ընդունելությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները և մայրավանքի պատասխանատու աշխատողներ:

Հրավիրյալների թվում էր մաև Հայկ. ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասարայանը:

Ճաշկերույթի ընթացքում բաժակաճառեր փոխանակեցին երկու Հայ-



ԱՂՈՔԻ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀՈՒՇԱՐՁՄԱՆԻ ԱՌԱՋ ԾԻՇԵՆՆԱԿԱԲԵՐՈՂ

րապետները և եթովպական եկեղեցու և Սինոդի քարտուղար ու Գաֆայի տ. Իոսիֆ արքեպիսկոպոսը:

Հանուն Հայաստանի կառավարության, Հայկ. ՍՍՀ Միևհատրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը ընդունելության ժամանակ ջերմորեն ողջունեց ներկայությունը Մայր Աթոռի մեծարգո հյուրերի և շեշտեց հայ և եթովպական եկեղեցիների ու ժողովուրդների դարավոր բարեկամության կարևորությունը ի բարօրություն նրանց:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայիսի 22-ին, երկուշաբթի օրը, ժամը 10-ին, երկու Հայրապետները իրենց ջբխամբի անդամներով Ծիծեռնակաբերդում այցելեցին Հայ նահատակաց հուշարձան, ուր ծաղկեպսակներ զետեղեցին և Հոգվոց արտասանեցին հայ նահատակաց հոգիների խաղաղության համար:

Ժամը 11-ին երկու Հովվապետները այցելեցին Երևանի և Սարգիս առաջնորդանիստ եկեղեցի, որտեղ մուտք գործեցին «Հրաշափառ»-ով:

Հանուն Արարատյան հայրապետական թեմի թեմական-եկեղեցական իշխանությանց, հոգևորականության և հավատացյալների, երկու Հայրապետների ներկայությունը ողջունեց Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանը:

Ժամը 12-ին Հայոց Հայրապետին և եթովպական եկեղեցու Սրբազան Պատրիարքին ընդունեց Հայկ. ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ Հովհաննես Բաղդասարյանը:

Երկու Հայրապետների և Հայաստանի կառավարության ներկայացուցչի միջև տեղի ունեցավ ջերմ և հետաքրքիր զրույց, որին ներկա էին նաև հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը և Գերագույն սովետի նախագահության գործերի կառավարիչ Գ. Հ. Սահակյանը:

Մայր Աթոռում գտնվելու օրերին եթովպական եկեղեցու պատվիրակությունն այցելեց Մայր տաճարին առընթեր եկեղեցական արվեստի թանգարան, Հին և Նոր Վեհարանների թանգարաններ, ինչպես նաև Վաղարշապատի պատմական վանքեր:

ՀՐԱԺԵԾՑ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՒՒՆ

Մայիսի 22-ին, երկուշաբթի օրը, ժամը 13-ին, Վեհարանում հայ և եթովպական եկեղեցիների ներկայացուցիչների միջև տեղի ունեցավ էկոմենիկ ոգով մի խորհրդակցություն, որի ընթացքում գոհունակությամբ արձանագրվեց երկու քույր եկեղեցիների՝ նույն հավատքի, դավանանքի և ավանդությունների հիմքի վրա զարգացող սերտ կապերը, ինչպես նաև հայ և եթովպացի ժողովուրդների միջև եղբայրական դարավոր անկեղծ բարեկամությունը, որը շարունակվում է նաև մեր օրերում, բարեկամություն, որի զարգացման և ամրապնդման համար աղոթում և աշխատում են երկու եկեղեցիները:

Խորհրդակցության ընթացքում երկու կողմերը հաստատեցին, որ եկեղեցիների կոչումն է իրենց ակտիվ նպաստը բերել՝ հանգցնելու համար աշխարհում դեռևս գոյություն ունեցող պատերազմական օջախները, իրենց

ջանքերը միավորել՝ պահպանելու և ամրապնդելու կայուն խաղաղությունը աշխարհում, նպաստել գաղութային ստրկության և ցեղային խտրականության վերացմանն ուղղված բոլոր միջոցառումներին՝ կենսագործելու համար ազգային և սոցիալական արդարությունը երկրագնդի վրա, ինչպես նաև եղբայրությունն ու հավասարությունը բոլոր ազգերի և ժողովուրդների միջև:

Խորհրդակցության ժամանակ ցանկություն հայտնվեց, որ երկու եկեղեցիների միջև է՛լ ավելի զարգանան գործակցության կապերը՝ եկեղեցական փոխայցելություններով, դասախոսների, ուսանողների և ինֆորմացիայի փոխանակումներով:

Երկու Հայրապետները իրենց իդձը հայտնեցին նաև մոտ ապագայում հարաբերության մեջ մտնել արևելյան ուղղափառ դավանակից՝ ղպտական, սատրական և մալաբար եկեղեցիների հոգևոր պետերի հետ՝ կազմակերպելու համար նոր հանդիպումներ վերոհիշյալ բույր եկեղեցիների և նրանց հոգևոր պետերի միջև:

Նորին Սրբություն Արքա Թեքլե Հայմանոթը պաշտոնապես հրավիրեց Ամենայն Հայոց Հայրապետի՝ մոտ ապագայում այցելելու Եթովպիա:

Հայոց Հայրապետը սիրով ընդունեց եթովպական եկեղեցու Գահակալի սույն եղբայրական հրավերը:

Այս առթիվ ս. Էջմիածնի Վեհարանում խմբագրվեց և ստորագրվեց երկու Հայրապետների կողմից մի հաղորդագրություն 1978 թվականի մայիսի 22-ին:

Ժամը 14-ին երկու Հովվապետները առաջնորդվեցին Մայր տաճար և միասին աղոթեցին բարեհաջող ուղևորության համար:

Այնուհետև Հայոց Հայրապետը և Եթովպիայի Արքայական Պատրիարքը ավտոմեքենաների շարապետնով մեկնեցին Երևանի օդանավակայան, որ Հայոց Հայրապետը անձամբ ճանապարհեց իր թանկագին հյուրերին:


Երևանի օդանավակայանում Նորին Սրբություն Արքա Թեքլե Հայմանոթին բարի ճանապարհ մաղթեց նաև Հայկ. ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Եղբայրական եթովպական ժողովուրդի և բույր եկեղեցու հարգարժան պատվիրակությունը հրաժեշտ տվեց Հայոց Հայրապետին և Մայր Աթոռին ու մեկնեց անմոռաց տպավորություններով:

Ա. Հ.

Պ. Շ.





ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ՝ ԱՐԱՄ Ի. ԽԱՀԱՏՐՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՈՒԹՕՐԵՔԻ ԱՌԻԹՈՎ

Ծանր ու երկարատև հիվանդությունից հետո, մայիսի 1-ին, Մոսկվայում, 75 տարեկան հասակում, վախճանվեց մեր ժամանակի մեծ արվեստագետ, հայ ժողովրդի տաղանդաշատ զավակ, աշխարհահռչակ կոմպոզիտոր, պետական մրցանակների դափնեկիր Արամ Ի. Խաչատրյանը:

Հայ երաժշտական մշակույթը ծանր և անփոխարինելի կորուստ կրեց:

Հանգուցյալ արվեստագետը իր ողջ բազմաբեղուն գործունեությամբ կապված էր իր ժողովրդի և իր մեծ հայրենիքի հետ:

Ա. Խաչատրյանը նոր խոսք ասաց ժամանակակից համաշխարհային երաժշտության մեջ և հայ երաժշտական արվեստը բարձրացրեց նոր մակարդակի և դարագլուխ բացեց հայ երաժշտական արվեստի զարգացման մեջ, որպես իր էությամբ խորապես ազգային երաժիշտ և ստեղծագործող:

Նրա երաժշտական ինքնատիպ և մեծահարուստ ժառանգությունը տոգորվել էր և՛ խորը հումանիզմով, և՛ ջերմ հայրենասիրությամբ:

Այդ բնագավառում նա արժանացավ իր մեծության համապատասխան, համամարդկային գնահատման:

Արամ Խաչատրյանը որպես ճշմարիտ հայ մարդ անխաղճորեն կապված լինելով հարազատ իր ժողովրդի երաժշտական դարավոր ավանդույթների հետ, մեծ բարեկամն էր նաև Հայոց Հայրապետի և Մայր Աթոռ ս. Էջմիածնի:

Ա. Ի. Խաչատրյանը ծնվել է 1903 թվականի հունիսի 6-ին Թբիլիսի քաղաքում:

1934 թվականին փայլուն հաջողությամբ ավարտել է Մոսկվայի պետական կոնսերվատորիան և այնուհետև իր ողջ գիտակցական կյանքն անմնացորդ նվիրել երաժշտական արվեստին, որպես շնորհաշատ կոմպոզիտոր, հմուտ դիրիժոր, մանկավարժ, հասարակական գործիչ և քաղաքացի:

Խաչատրյանի երաժշտական ողջ ստեղծագործության մեջ նրա սիրած հիմնական թեմաներից մեկն է եղել նաև իր վերածնված հայրենիքի և ժողովրդի ազգային վերածննդյան թեման: Ա. Ի. Խաչատրյանն է հեղինակը Հայկական Հանրապետության ազգային հիմնի:

Հանգուցյալի հիշատակին նվիրված հարգանքի և երախտագիտության այս մի քանի սեղմ արտահայտությունների մեջ մեր ուժերից վեր է մասնագիտորեն և սպառնիչ կերպով խտացնել մեծությունը, ուժն ու գեղեցկությունը, համաշխարհային արժեքը Ա. Խաչատրյանի բազմաբեղուն երաժշտական ժառանգության:

Մայիսի 5-ին Մոսկվան հրաժեշտ է տալիս մեծ կոմպոզիտորին Մոսկվայի պետական կոնսերվատորիայում կայացած բազմամարդ սգո միտինգով:

Նույն օրը, երեկոյան, հատուկ ինքնաթիռով և մեծ պատգամավորությամբ, Ա. Ի. Խաչատրյանի դագաղը տեղափոխվում է Երևան:

Մայիսի 6-ին, շաբաթ օրը, ժամը 12-ին, կատարվում է Ա. Ի. Խաչատրյանի թաղման արարողությունը, պետական կազմակերպությամբ և համաժողովրդական մասնակցությամբ:

Վերջի մյուս մեծ և վաստակաշատ զավակները:

Մայիսի 7-ին, կիրակի:

Ս. Էջմիածնի Մայր տաճարում մատուցվում է հանդիսավոր ս. պատարագ և կա-



Հայաստանի ողջ ժողովուրդը խորագգաց վշտով հրածեշտ է տալիս իր արժանավոր զավակին, որը 45 տարի մեծ նվիրումով ծառայել էր հայ երաժշտական արվեստին:

Հանգուցյալի դագաղը դրվել էր Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում: Թաղումը կատարվում է Կոմիտասի անվան զբոսայգու թաղարային պանթեոնում, որտեղ հավերժական քնով ենչում են Կոմիտաս վարդապետը, Ավետիք Իսահակյանը, Մարտիրոս Սարյանը և մեր ժողո-

տարվում է հոգեհանգստյան մասնավոր կարգ նորոգ հանգուցյալ Արամ Ի. Խաչատրյանի մահվան ութօրեկի առիթով, նրա միշտակին:

Ս. պատարագին և հոգեհանգստյան արարողությանը ներկա են լինում հանգուցյալ Արամ Ի. Խաչատրյանի զավակները և հարազատները, մայիսի 6-ին թաղման արարողությանը մասնակից բազում արվեստագետներ:

Ս. պատարագին և հոգեհանգստյան արարողությանը ներկա է լինում նաև ՀՍՍՀ

Միմիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ա. Հարությունը՝ խորհրդի այլ անդամների հետ:

Հոգեհանգստյան արարողությունից առաջ Հայոց Հայրապետը, ոգեկոչելով անմոռաց հիշատակն ու երածշտական մեծ վաստակը հանգուցյալ կոմպոզիտոր Արամ Ի. Խաչատրյանի, խոսում է հետևյալ սրբուաշարժ դամբանականը.

ՎԵՀԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԴԱՄԲԱՆԱԿՆ ԽՈՍՔԸ՝ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

«Յանուն Հօր և Որդույ և Հոգույն սրբոյ. ամեն»:

Քահանայք և ժողովուրդք հավաքվել ենք այս սուրբ տաճարի կամարների ներքև, սուրբ պատարագի մատուցումից հետո, աղոթելու նորոգ հանգուցյալ, հայ ժողովրդի մեծատաղանդ զավակ Արամ Խաչատրյանի հոգվույն հանգստյան և խաղաղության համար:

հոյրս և համայն հայ ժողովուրդը, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, սուգի մեջ ենք երկ և աշօր: Մենք տեսանք այդ սուգի ակնոռանալի արտահայտությունը երկ, Երևանում, երբ, հակառակ տեղացող անձրևին, հայերը, առանց բացառության, բոլորը ներկա էին և իրենց գլուխներն էին խոնարհում մեծ երգահան Արամ Խաչատրյանի հիշատակի առաջ: Եվ մեզ՝ հայերիս համար հույժ մխիթարական է և պատվաբեր, որ հայ ժողովրդի սուգին մասնակցեցին նաև Սովետական Միության տարբեր ազգությունների ներկայացուցիչները, հատկապես մեր ռուս եղբայրները, ինչպես նաև Կենտրոնական Կառավարության, Մոսկվայի ամենաբարձր պետական անձնավորությունները: Այս բոլորը ցույց են տալիս մեծությունը Արամ Խաչատրյանի:

Այսօր Մենք ևս հոգեկան պարտք ենք նկատում հոգեհանգստյան արարողությամբ աղոթելու նրա հոգվույն համար:

Միբեկի ժողովուրդ, մի հին սովանդության համաձայն Աստված երբեմն իջնում է աշխարհ ձևերևույթ կերպով՝ այցելություն տալու մարդկանց աշխարհին և երբեմն իր արարչագործ ձեռքն է դնում նորածին մի մանուկի ճակատին: Մենք կարծում ենք, որ այս սովանդության պետք է հավատալ Արամ Խաչատրյանի պարագային: Յոթանասուն և ավելի տարիներ առաջ Աստված իջավ աշխարհ, կանգ առավ Խաչատրյան ընտանիքի համեստ հարկի առջև և իր շնորհաբաշխ ձեռքը դրեց նորածին

Արամի ճակատին: Ու նա ներշնչեց երկնային ներշնչումներով, լցվեց լույսով, հանձարով և տարիների ընթացքում անց, զարգացավ, ուսում ստացավ, իր հոգին և միտքը հարստացրեց երածշտական գիտելիքներով, հատկապես Մոսկվայում, տաղանդավոր մանկավարժների ղեկավարության ներքև և ասպարեզ իջավ իբրև մեծ երածիշտ, արվեստագետ. ստեղծագործ: Կարծում ենք, չենք սխալվում, եթե ասենք, թե Արամ Խաչատրյան ծնվեց և ասպարեզ իջավ ճիշտ այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը նրա կարիքը ուներ, մեծն վարդապետ Կոմիտասից հետո: Մենք գիտենք, թե ինչպիսի մեծ երածիշտ էր նաև Էջմիածնի միաբան Կոմիտաս վարդապետը, որ քառսից դուրս բերեց հայ երածըշտության լույսը: Իր մեծ գործը չավարտած նա նույնպես մահացու հարված ստացավ Մեծ եղեռնի սև օրերին: Նա չկարողացավ իրագործել իր երազանքը, որն էր՝ հայ երածշտությունը դուրս բերել ազգային սահմաններից և դարձնել աշխարհին ծանոթ, և նույնիսկ բեղմնավորել համաշխարհային երածշտությունը հայ երգի հնչյուններով, լույսերով և գույներով: Եվ ճիշտ այն տարիներին իրապես երբ Կոմիտաս վարդապետ Փաթիգում իր աչքերը կփակեր, կբարձրանար նոր հանճարը հայ երածըշտության՝ Արամ Խաչատրյանը:

Կարծում ենք, ճշմարիտ կլինի մտածել, թե Արամ Խաչատրյանը շարունակողը եղավ մեծ Կոմիտասի գործին, լրացնողը, ամբողջացնողը և համաշխարհային հորիզոնի վրա բարձրացնողը: Այսօր նաև Արամ Խաչատրյանով հայ ժողովուրդը ծանոթ է համայն աշխարհին:

Արամ Խաչատրյանի երածշտությունը լեցուն է խորունկ մտքերով, խոհերով, օժուն է լավատեսությամբ և մարդասիրությամբ: Արամ Խաչատրյանի երածշտությունը լույսերի հեղեղ է, գույների փոթորիկ և կյանքի կրակով լի, որ երբեք չպիտի հանգի, չպիտի նվազի, ընդհակառակը՝ հետզհետե ավելի պիտի պայծառանա և պիտի մնա հավերժական արժեքներից մեկը մարդկային քաղաքակրթության պատմության մեջ: Եվ երկնքի հրեշտակներն էլ հետ այսու նրա երգը պիտի երգեն երկրնքում:

Մենք անձնապես առիթը ունեցանք նախելու նրան նաև իբրև մարդ, իբրև հայ ժողովուրդի հաքազատ զավակ: Ինչպիսի՞ ազնվություն կար իր հոգվույն մեջ, ճիշտ այնպես, ինչպես իր երածշտությունն էր, միշտ ժպիտը դեմքին, լավատես, կենսուրախ, բարի, անսահմանորեն բարի և ներդրամիտ բոլորի նկատմամբ: Սքանչելի

մարդ էր Արամ Խաչատրյան, հոգին բարոյական առաքինություններով զարդարած: Ամեն անգամ, երբ Հայաստան էր գալիս տարբեր առիթներով, այցելում էր նաև Մայր Աթոռ ս. Էջմիածին, Մեզ անձնապես ուրախացնում էր իր ներկայությամբ, և կարծում էնք, որ իր այցելությունները ս. Էջմիածին սովորական այցելություններ չէին նրա համար: Նա այստեղ, այս սուրբ վայրում ինչ-որ նոր ձայներ էր լսում և նոր երբշնչումներ քաղում երկնքից:

Ափսոս, շո՛ւտ կորցրեցինք նրան, տակավին զոհե տասը տարիներ կարող էր ապրել և շարունակել իր ստեղծագործ աշխատանքը:

Ափսոսում ենք բոլորս, սակայն խոնարհվում ենք մարդկային ճակատագրի առաջ, և սուգը մեր սրտին մեջ ծրագրած պատրաստվում ենք աղոթելու նրա հոգվույն համար:

Երեկ, անմոռանալի այդ թաղման արարողության, երբ դիտում էինք այդ հսկա զանգվածը հայության, որ սուգի մեջ էր և ծանրորեն վշտալի, կարծում էնք, որ նաև մխիթարված էր: Եվ ավելին տակավին, հալ ժողովուրդը, այդ սգակիր, հսկաչածավու բազմությունը, որ հետևում էր թաղման թափորին, պայծառ գիտակցություններ, թե Արամ Խաչատրյանին առաջնորդում են ոչ թե գերեզման, այլ դեպի հավերժություն, դեպի անմահություն: Թող Ստոված հավատ լուսավոր և պայծառ և միշտ փառքի մեջ պահի նրա անմոռանալի հիշատակը, նրա մեծ վաստակը աշխարհում, այժմ և հավիտյան:

Մեր անունով, Մայր Աթոռ ս. Էջմիածնի և Գերագույն հոգևոր խորհուրդի սնունդով

մեր ցավակցություններն ենք հայտնում Արամ Խաչատրյանի սգակիր ընտանիքին, և բոլոր հարազատներին՝ հայցելով ս. Հոգվո մխիթարությունը նրանց վիրավոր սրտերին:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ և դիցի»:


Հավարտ եկեղեցական արարողության վեհարանում Հայոց Հայրապետն ընդունում է Արամ Ի. Խաչատրյանի ընտանիքի անդամներին, նրա հարազատներին, թաղմանը մասնակից ընկերներին և մեկ անգամ ևս անձամբ Իր և Մայր Աթոռի անկեղծ ու խոր ցավակցությունը հայտնում և հայրական սիրտիանքի խոսքերով մխիթարում բոլոր սգակիրներին:


Այնուհետև, Հայոց Հայրապետին ողբով և երախտագիտության և շնորհակալության խոսք է ասում, հանուն հարազատների, մեծ հանգուցյալի որդին՝ Կարեն Խաչատրյանը, իրենց ընտանիքի մեծ դժբախտության առիթով Հայոց Հայրապետի ցույց տված հայրական ուշադրության համար, ուշադրություն, որ թեթևացրեց իրենց վիշտը և մեղմացրեց կորստի ծանրությունը:

Արամ Ի. Խաչատրյանի հիշատակն ու մեծ վաստակը, որպես հալ ժողովրդի տաղանդաշատ և արժանավոր զավակի և որպես Հայոց Հայրապետի անձնական բարեկամի, միշտ վատ ու պայծառ կմնա այս սուրբ Հաստատության մեջ և հանգուցյալին ճանաչող բոլոր մարդկանց երախտագետ սրտերում:

Հանգի՛տ և խաղաղությունն Արամ Ի. Խաչատրյանի արդար հոգուն:

Ա. Հ.





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մայիսի 8-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որին ներկա են լինում Մայր Աթոռի սրբազան հայրերը և միաբանության վարդապետ ու սարկավագ անդամները: Բանախոսում է պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող Հայկ Մելքոնյանը՝ «Ասորական ճոր աղբյուրները հայերի մասին» թեմայի ձումն քրիստոսի.

Մայիսի 4-ին, հինգշաբթի.—Համարձումն քրիստոսի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը: Հավարտ ս. պատարագի կատարվում է Հայրապետական մաղթանք. «Յիշատակ փոխադրությունեան Հայրապետական Աթոռոյն հայոց ի Սոյ ի ս. Էջմիածին, յամի Տեառն 1441: Տօն ազգային, հանդէս և մաղթանք յեկեղեցիս Հայաստանեայց»:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Մայիսի 5-ին, ուրբաթ.—Այսօր Վեհափառ Հայրապետը այցելեց ս. Գեղարդ վանք՝ ոխտավորական շրջանի բացման առիթով: Նորին Սրբությանն ընկերակցում էին Մայր տաճարի լուսարարապետ տ.

Հուսիկ եպս. Սանթրոյանը, վանահայր տ. Գևորգ եպս. Սերայրայանը և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, դոցենտ Հովհաննես Թովուզյանը: Վանքի մուտքի առաջ Վեհափառ Հայրապետին դիմավորում և բարի գալուստ է մաղթում վանահոր տեղակալ տ. Եղիշե քհն. Սարգսյանը:

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ ս. Գեղարդ վանքում, ոխտավորական այս շրջանին, պաշտոնավարելու են նորընծա տ. Մովսես քհն. Ղազարյանը և նորընծա տ. Աթանաս քհն. Մովսիսյանը:

Մայիսի 7-ին, կիրակի.—Երկրորդ Մաղկազարդ.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մասիս վրդ. Գալստյանը: Հավարտ. ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ Արամ Խաչատրյանի հոգվույն խաղաղության համար (Տես «Էջմիածին» ամսագիր, սույն համար):

Մայիսի 10-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որին ներկա են լինում Մայր Աթոռի սրբազան հայրերը և միաբանության վարդապետ ու սարկավագ անդամները: Գերմանահայ գա-

դուրի եկեղեցական, մշակութային կյանքի մասին խոսում է տ. Հակոբ արղ. Գրքընճյանը:

Մայիսի 18-ին, հինգշաբթի.—Այսօր, երկույան ժամը 18-ին, Վեմարանում, Վեմարանի Հայրապետի նախագահությամբ, գեներալում է Գերագույն հոգևոր խորհրդի ներթափանց հրատարակումը:

Մայիսի 22-ին, երկուշաբթի.—Տօն սրբոց կոտեմնացն Հոհիսիմեանց.

Այսօր ս. Հոհիսիմե տաճարում ս. պատարագ է մատուցում վանքի վանահայր տ. Մասիս վրդ. Գալստյանը, և «Հայր մեր»-ից ստաջ քարոզում տ. Կոմիտաս արղ. Հովհաննիսյանը՝ «Գնացէք այստե՛տև, աշակերտեցէ՛ք զամենայն ներսանոս...» բնարանով:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ վանքի վերակառուցման քարերարներ Հյուսիսյան և Մարտիկյան գերդաստանների նրկեցնյալների նիշատակին:

Մայիսի 23-ին, երեքշաբթի.—Տօն սրբոց կոտեմնացն Գայիանեանց.

Այսօր ս. Գայանե վանքի տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան բնն. Բերեքյանը և «Հայր մեր»-ից ստաջ քարոզում ս. Գայանե կույսի կյանքի և նահատակության մասին:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «վան հանրեհն ննջեցեալ կաթողիկոսաց, եպիսկոպոսաց, վարդապետաց, սարկաւազաց և ամենայն ոխտի մանկանց Հայրատանեայց եկեղեցոյ»:

Մայիսի 24-ին, չորեքշաբթի.—Այսօր, ժամը 15-ին, Մայր Աթոռ սցեկեց Մոսկվայում հավատարմագրված շուրջ 40 արտասահմանյան երկրների արտակարգ և լիազոր դեսպանների խումբը:

Վեմարանի գահաարահում Հայոց Հայրապետը ընդունեց մեծամարգ դեսպաններին ու նրանց ընկերակցող պաշտոնական անձնավորություններին և ողջունեց ու բարի գալուստ մաղթեց՝ հայ եկեղեցու պատմական այս կենտրոնին և նրա Գահակալին տված նրանց աջակության համար:

Այնուհետև Հայոց Հայրապետը մեծապատիվ հյուրերին համատոտակի ներկայացրեց Մայր Աթոռ ս. Էջմիածնի կատարած եկեղեցական, ազգային, մշակութային և հայրենասիրական անսքեղությունը դարերի ընթացքում, ս. Գրիգոր Լուսավորչի օրերից սկսած մինչև մեր օրերը:

Նորին Սրբությունը կանգ առավ նաև մեր օրերում հայ եկեղեցու քերած մասնակցության ու նպատի վրա, որպես այնպես եկեղեցիների համաշխարհային խորհրդի, ողջ աշխարհում խաղաղության պաշտպանության ի նպաստ կատարվող բոլոր աստվածահաճո ձեռնարկումներին:

Իր խոսքի ավարտին Հայոց Հայրապետը օրհնեց մեծամարգ դեսպանների աշխատանքը հանուն ժողովուրդների եղբայրության, համագործակցության և աշխարհի խաղաղության:

Ի դիմաց ներկա բոլոր դեսպանների Հայոց Հայրապետին ուղղյալ ողջույնի և շնորհակալության ջերմ խոսք ստաջ Մոսկվայում Հունաստանի արտակարգ և լիազոր դեսպան մեծամարգ Դեոր Կալոգերասը:

Մայիսի 25-ին, հինգշաբթի.—Տօն սրբուն Յովհաննու Կարապետին և Աթանազիոսեայ կախկոպոսին.

Այսօր ս. Շողակաթ տաճարում պատարագ է մատուցում ս. Շողակաթ վանքի վանահայր տ. Գրիգոր բնն. Փանոսյանը: Քարոզում է տ. Թորգոմ վրդ. Մուշեղյանը՝ ս. Հոհիսիմեանց կույսերի նահատակության հոգևոր նշանակության մասին:

Մայիսի 27-ին, շաբաթ.—Սրբուն Գրիգորի Լուսավորչին մերոյ ելն ի վիրապէն.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Թորգոմ վրդ. Մուշեղյանը:

Մայիսի 28-ին, կիրակի.—Բ կիրակի գկնի Հոգեգալստեան. Տօն կաթողիկէ ս. Էջմիածնի.

Օրվա հանդիսավոր տոնի առիթով Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում Թումիհիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմերի ստաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը և օրվա տոնի առիթով ողջունեց քարոզ խոսում Մայր Աթոռ ս. Էջմիածնի կատարած նահախնամական դերի մասին հայ ժողովրդի եկեղեցական, մշակութային և հայրենասիրական կյանքում:

«Հայր մեր»-ից ստաջ կատարվեց Հայրապետական մաղթանք:



ԿՈՒՍԱԿՐՈՆ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Մայիսի 14-ին, կիրակի: Հոգեգալուստ (Պենտեկոստէ. յիսներորդ օր ի Ջատկէն):

Հայոց Հայրապետը մեծ տոնի առիթով հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում Մայր տաճարում և կատարում կուսակրոն քահանայական ձեռնադրություն, խարտավիչակութեամբ վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանի, 1977 թվականի հոգևոր ձեմարանից շրջանավարտ կիրակոս սարկավագ Հովնանյանի և Սորին սարկավագ Մանդալյանի:

Մայիսի 12-ին, ուրբաթ օրը, երեկոյան ժամերգության ավարտին, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը կատարում է քահանայական կոչման արարողությունը: Նորընծաները հանձն են առնում «ամենայն պատրաստակամութեամբ և առանց ձանձրանալոյ կալ ի պաշտօն Աստուծոյ և ոչ խափանել գոործն Աստուծոյ վասն մարմնատր գործոյ»:

Խարտավիչակ սրբազանը ապա տալիս է նորընծաների հոգևոր և մտավոր պատրաստության վկայությունը, որին և հաջորդում է նրանց ուխտադրությունը՝ հետևելու և աշակերտելու եկեղեցու սրբազան և ուղղափառ Հայրապետներին:

Այնուհետև նորընծաները տալիս են ինքնավստահ շեշտով իրենց ուղղափառ դա-

վանության խոստովանությունը, ս. Գրիգոր Տաթևացու ոգով և բանաձևումով, ըստ Ձեռնադրության Մաշտոցի. «Ունիմք զդավանութիւն ուղղափառ հաւատոյ... ընդ սուրբ Հայրապետսն»:

Կիրակի: Մայր Աթոռը այսօր ևս ապրում է հոգևոր ուրախության բերկրանքը՝ երկու սարկավագների կուսակրոն քահանայական ձեռնադրության առիթով: Երկու նորընծաները մեծացան, ինչպես իրենց նախկին դասընկերները, Մայր Աթոռի սրբազան և կրոնաշունչ մթնոլորտում, աճեցին իրենց ուսումնասության տարիներին որպես «ձիթենի պողպից ի Տան Աստուծոյ» (Սաղմ. ԾԱ 10), և այսօր կանգնել են պատրաստ՝ կամովին և գիտակից նվիրումով իրենց կյանքն ու ապագան կապելու Մայր Աթոռին, Հայաստանյայց առաքելական եկեղեցուն և հայ ժողովրդին:

Ս. Սեդանի վրա հնչում է «Աստուածային և երկնատր շնորհ» քահանայական կոչման հուզիչ շարականը: Նորընծաները դառնում են դեպի ժողովուրդը, ձեռամբարձ՝ ի նշան աշխարհից իրենց հրաժարման և կոչվելու «ի սարկաւագութենէ ի քահանայութիւն սուրբ եկեղեցոյ, ըստ վկայութեան անձանց իրեանց»:

Ապա ծնրադիր շրջապատում են Հայոց

Հայրապետի Աթոռը: Պահն է ձեռնադրության: Հայոց Հայրապետը յուրաքանչյուր ընծայալի գլխի վրա խաչաձև դնում է Իր ձեռքը և արտասանում ձեռնադրության աղոթքը: «Եւ դնեմ զձեռս ի վերայ սորա և ղուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան»:

տ. Կոմիտաս քահանա, իսկ Սորին սարկավազը՝ տ. Ավետիս քահանա:

Ավարտվում է օծման հանդիսավոր պահը: Նորընծա քահանաները ս. Սեղանի բարձունքից տալիս են իրենց անդրաճիկ օրհնությունը ժողովրդին:

Հայոց Հայրապետը այնուհետև խոսում է օրվա հանդիսության հոգևոր նշանակու-



Իր պահ ձեռնադրությունից

«Ողջուն»-ից սուսջ կատարվում է ձեռնադրության խորհրդի երկրորդ պահը: Մասնավոր աղոթքներով ընծայալներին տրվում են պատարագչի զգեստավորման բոլոր մասերը (սաղավարտ, փորուրար, գոտի, շորջատ): Մայր տաճարում հնչում է «Նորհուրդ խորին» շարականը: Ընծայալները, քահանայական լրիվ զգեստավորման մեջ սպասում են օծման հանդիսությանը և նոր անվանակոչությանը: Գտնալու են «նոր մարդ», նոր անունով և գործունեությամբ:

Վեհափառ Հայրապետը սրբալույս մտնով օծում է ընծայալների ճակատներն ու ձեռքերը և նրանց շնորհում նոր անուններ: Կիրակոս սարկավազը վերանվանվում է

թյան մասին բովանդակալից քարոզ, «Եւ ամենեքեան լցան Հոգուվն սրբոյ» (Գործք Բ 4) և տալիս կրկին անգամ Իր օրհնությունն ու պատգամը:

Երեկոյան ժամերգության ավարտին Մայր տաճարում տեղի է ունենում նորօծ երկու քահանաների վեղարի տվչության օրհնությունը՝ ձեռամբ տ. Հուսիկ եպ. Սանթրոյանի:

Նախկին «չբրուն»-ի (գղակ) փոխարեն սարկավազների գլուխները ծածկվում են կուսակրոնության խորհրդանիշ հայ եկեղեցուն հատուկ սև վեղարով:

Նորընծա տ. Կոմիտաս և տ. Ավետիս սրբողաները իրենց քահանայական քառատները կանցկացնեն Մայր Աթոռում յու-


սարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոսի հոգևոր վարժության ներքո:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն և սրտանց շնորհավորում է առ արժանավոր ձեռնադրությունը՝ հույս հայրենելով, որ տ. Կոմիտաս և տ. Ավետիսաբեղաները գալիք տարիներին ավելի մեծ փորձ ձեռք բերած իրենց աթոռանվեր և եկեղեցական գործունեությամբ կարդարաց-

նեն Հայոց Հայրապետի ակնկալությունը, կլինեն ճշմարտապես արժանի մշակները հայ եկեղեցու՝ համալրելով Մայր Աթոռի Երևանյան երիտասարդական շարքերը և լցնելու միաժամանակ մեզանից հավետ մեկնած արժանավոր և հավատավոր հոգևորականների բաց թողած տեղը...

Ա. Հ.





Տ. ԿՈՄԻՏԱՍ ԱՐԵՂԱ ՀՈՎՆԱՆՅԱՆ

Հոգեգալստյան տոնին, մայիսի 14-ին, Վեհափառ Հայրապետը Մայր տաճարում կուսակրոն քահանա է ձեռնադրում 1976—1977 ուսումնական տարվա շրջանավարտ Կիրակոս սարկավազ Հովնանյանին:

Տ. Կոմիտաս արեղան ծնվել է 1953 թվականին Երևանում, քահանայի ընտանիքում: Միջնակարգ կրթությունը ստացել է տեղի № 79 դպրոցում:

1969 թվականին ընդունվել է Մայր Աթոռի հոգևոր ճեմարան և այն ավարտել 1977 թվականին՝ փայտի հաջողությամբ:

1975 թվականի դեկտեմբերին սարկավազ է ձեռնադրվել՝ ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանի:

1976 թվականից հետևում է Երևանի Կոմիտաս վարդապետի անվան կոնսերվատորիայի խմբավարական բաժնի դասընթացներին:

Հոգևոր ճեմարանն ավարտելիս տ. Կոմիտաս արեղա Հովնանյանի դիպրոմային աշխատանքի թեման է եղել՝ «Մակար Եկմայանի կյանքն ու ստեղծագործությունը» (92 մեքենագիր էջ):


1978 թվականի ապրիլի 13-ին, հոգևոր ճեմարանում Վեհափառ Հայրապետի հախազանությամբ կալացած հանդիսության ժամանակ, տ. Կոմիտաս արեղան հանդես է եկել իր վերոհիշյալ ավարտաճանի քահավոր արշտուպանությամբ, և այն բննիչ



հանձնաժողովի կողմից գնահատվել է «լավ»:

Տ. Կոմիտաս արեղա Հովնանյանը հոգևոր ճեմարանում դասավանդում է հայկական նոտագրություն (խազագրություն) առարկան:





Տ. ԱՎԵՏԻՍ ԱԲԵՂԱ ՄԱՆԴԱԼՅԱՆ

Ն'այիսի 14-ին, կիրակի օրը, Հոգեգալըստյա՞ն տոնին, Վեհափառ Հայրապետը Մայր տաճարում կուսակրոն քահանա ձեռնադրեց 1976—1977 ուսումնական տարվա հոգևոր ճեմարանի շրջանավարտ Սորին սարկավագ Մանդալյանին:

Տ. Ավետիս արեղա Մանդալյանը ծնվել է 1954 թվականին Ռումինիայի Մեդիաշ քաղաքում:

Իր նախնական կրթությունը ստացել է Բյաժ քաղաքի նախակրթարանում, այնուհետև՝ Լույն քաղաքում ստացել է միջնակարգ կրթություն՝ 1973 թվականին:

1973 թվականին ընդունվել է Մայր Աթոռ ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան և այն ավարտել գերազանց հաջողությամբ 1977 թվականին:

1976 թվականի փետրվարի 1-ին սարկավագ է ձեռնադրվել՝ ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հոսիկ եպս. Սանթրոյանի:

Հոգևոր ճեմարանն ավարտելիս նրա դիպլոմային աշխատանքի թեման է եղել՝ «Սարգիս վարդապետ Ծնորհային և նրա՝ ս. Հովհաննես սուսքյայի երեք թղթերի մեկնությունը» (68 մեքենագիր էջ):


1978 թվականի ապրիլի 13-ին հոգևոր ճեմարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կայացած հանդիսության ժամանակ, տ. Ավետիս արեղան հանդես է եկել իր վերոհիշյալ ավարտաճանդի բանավոր պաշտպանությամբ, և այն քննիչ հանձ-



նաժողովի կողմից գնահատվել է «գերազանց»:

Տ. Ավետիս արեղա Մանդալյանը Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ այս ամռանը մեկնելու է Քոթայած (Հարավային Հնդկաստան)՝ մայաքար եկեղեցու հոգևոր կենտրոն, տեղի հոգևոր ճեմարանում, իր աստվածաբանական ուսումը կատարելագործելու համար:





Վ Ե Հ Ա Փ Ա Ռ Ի Ա Վ Ե Տ Ա Ր Ա Ն Ը

Այս տարվա գարնանամուտը յուրովի նշանավորվեց Մատենադարանում: Հին ձեռագրերի ինստիտուտ էր այցելել Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը: Վեհափառ Հայրապետը ժամանել էր Իր հերթական նվերով, հազարամյա մագաղաթյա ձեռագրով*:

Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն, ակադեմիկոս Լ. Խաչիկյանը բարձրը Հյուրին դիմավորելու համար հավաքմամբ գիտական անձնակազմի ներկայությամբ, խորին հարգանքով և շնորհակալությամբ նշեց Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի ջերմ սերն ու վերաբերմունքը ամենայն հայոց ձեռագրական գանձարանի նկատմամբ, շեշտելով հատկապես հայերեն ձեռագրերի ձեռքբերման և Մատենադարանին նվիրելու Նրա վսեմ նախանձախնդրությունը, որն սկիզբ է առնել դեռևս տասնամյակներ առաջ և շարունակվում է չնվազող եռանդով և միշտ ուրախացնող անակնկալներով: Այդ քանի խոստով ապացույցն է նաև այսօրվա՝ մարտի մեկի նվերը:

* Այս այցելության առիթով, Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Վոսկանյանը, Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպ. Բերքերյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Հատիսյանը:

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը Իր խոսքում բարձր է գնահատում Մաշտոցի անվան Մատենադարանի ծառայությունները հայ ժողովրդի ու նրա մշակույթի զարգացման գործում, գնահատանքի խոսքեր է ասում գիտական անձնակազմի գործունեության և, մասնավորապես, տնօրեն Լ. Խաչիկյանի հասցեին և նրան է հանձնում Իր նվերը՝ Հայրապետական սույն ընծայականով:

«Սուրբ Անտարանս նոիրում ենք Երևանի սուրբ Մեսրոպի անուն Մատենադարանին՝ ի վայելումն սոգոխ Հայոց.

ՎԱԶԳԵՆ Ա.

Կաթողիկոս Ամենայն Հայոց

1 մարտ 1978

Սր. Էջմիածին»:

Հիրավի, շուրջ քստորդ դար առաջ Մատենադարանը ընդունեց ուսման համար թեմի նախկին առաջնորդ Վազգեն եպիսկոպոսի նախաձեռնությամբ ուղարկված ձեռագրական 42 միավորը:

Կաթողիկոսական զանազան բարձրանալուց հետո հայերեն ձեռագրերի ձեռքբերումը և Մատենադարանին նվիրելը դառնում է Վեհափառի հայրապետական քննադատող գործունեության արտագին մասը, որը կատա-

րում է Նա առանձին սիրով ու նվիրվածությամբ ու դրանով կրկին հոգեկցվում հայ դրությունն ու մշակույթը հովանավորող իր մեծ նախորդներին:

Վեհափառի ջանքերով Մատենադարանն սնուցված ձեռագրերի մեջ առանձին բույլ են կազմում եզակի գլուխգործոցները— Թորոս Ռոալինի ձեռքով գրված և նկարազարդված գույգ Ավետարանները, Սարգիս Պիծակի գրած և նկարած Ավետարանը, Թովմա Արծրունու Պատմության միակ հնագույն օրինակը՝ գրված Ստեփանոս Օրբելյանի հանձնարարությամբ և Չաքարիա Աղթամարցի կաթողիկոսի պատվերով:

Հայ գրի և գրչության ու մանրանկարչության արվեստի պատմության ուսումնասիրության համար արտակարգ նշանակություն ունեն Վեհափառի վերջին երկու անձնական նվերները:

Դրանցից առաջինը Սիրանուշ Պալջյան «Վեհամոր Աւետարանն» է՝ (ձեռ. № 10680), որի հնությունը հասնում է մինչև 7-րդ դար և իր մեջ պահպանում է հայոց տառատեսակների հազվադեպ հանդիպող նմուշներ, որոնք մեզ հայտնի են միայն հետազայում կրած փոփոխություններով: Սրանք մեծ նշանակություն ունեն մաշտոցյան գրի ստեղծման սկզբունքների հայտնաբերման և ուսումնասիրման համար:

Երկրորդը՝ գարնանամուտի նվերը, ի պատիվ Նվիրատուի, կոչվում է «Վեհափառի Աւետարան» (ձեռ. № 10780):

Բացառիկ է հնագույն ձեռագրերի մեջ նկարազարդումների ոչ միայն առատությամբ, թեմատիկայի բազմազանությամբ, այլև ձեռագրում նկարների տեղադրության եղանակի աննախադեպությամբ, հնագրական և ձեռագրագիտական արժեքավոր առանձնահատկություններով, հետազայում կրած փոփոխություններով, հավելումներով, և վերջապես՝ իր պատմությամբ:

Վեհամոր և Վեհափառի Ավետարանները ճակատագրերի շատ նմանություններ ունեն. կոշտ, դեղնավուն մագաղաթյա թերթերով, տախտակյա՝ կաշեպատ, կոստղած ու մետաղյա զարդերով ու քարերով զարդարված կազմերով մեզ հասած երկու ձեռագրերն էլ վերջից կորցրել են գլխավոր հիշատակարանները, որի հետևանքով անհայտ են մնում նրանց գրչության հանգամանքները, գրիչն ու ստացողը, գրության ժամանակն ու վայրը: Երկուսն էլ գտնվել են Սևանա լճի արևմտյան կողմերում, առաջինը Գառնո գավառի Հավուց թաղ

վանքում, մյուսը՝ Գեղարքունի գավառում, առաջինը 13-րդ դարի վերջերին, երկրորդը՝ 15-րդ դարի սկզբներին տեղափոխվել և հանգրվանել են լճի արևելյան կողմում, Արցախի նահանգի իրար կից Փառխտսի և Գարդմանի գավառներում: Ձեռագրերը Արցախում, իրար հարևանությամբ, մնացել են մի քանի հարյուր տարի, առաջինը իր սպաստարան Մեծ Բանանց գյուղի անունով կոչվել է «Բանանց Աւետարան», երկրորդը՝ «Քիլոյարի Աւետարան»՝ Քիլոյար գյուղի անունով: Նրանցից յուրաքանչյուրը մի քանի անգամ գերվել է ու փրկագնվել, թալանվել է ու նորոգվել, և այդ մասին հիշատակարաններ են պահպանում իրենց ծալքերում: Եվ վերջապես երկուսն էլ, դարեր հետո զանազան ճանապարհներով, մի քանի տարվա տարբերությամբ անցել են Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի ձեռքը, և Վեհափառի նվիրատվության միևնույն եղանակով մշտական բնակություն հաստատել Մաշտոցի անվան Մատենադարանում, առաջինը 1975, երկրորդը՝ 1978 թվականներին, և համապատասխանաբար կրում են 10680 և 10780 համարները: Ի դեպ, երկուսն էլ նախնական բնության են ենթարկվել Մատենադարան մուծվելուց առաջ:

Ձեռագրի էջերում տարբեր առիթներով գրված հիշատակարանների և հիշատակագրությունների օգնությամբ, ինչպես նաև ձեռագրի բնությանը, հնարավոր է դառնում որոշակի պատկերացում կազմելու ձեռագրի ժամանակի, նախնական վիճակի և նրա հետ կառարված փոփոխությունների մասին, արժեքավորելու այն և ուրվագծելու նրա պատմությունը: Դժբախտաբար, հիշատակարանների մի մասը հետազայում քերել են և մի քանիսի տեղը նորը գրել²: Այնուամենայնիվ, փորձենք պահպանվածի հիման վրա ամբողջացնելու ձեռագրի պատմությունը: Ձեռագրի ամենավաղ հիշատակարանը 1088 թվականից է և վերաբերվում է նորոգմանը. «ՇԼԷ (1088) թվ(ական): Ես՝ յոզնամե(դե)ւ (տա)ռապել քահանա Սարգիս նորոգեցի սուրբ Աւետարանս ի բարեախաւսութիւն ինձ եւ որդւոյ իմոյ Վարդա եւ մար նորին: Որք լուստորիք ի սմանէ, յիշատակի արժանի համարեաջիք զմեզ»³:

Սարգիս քահանան ինչ բնույթի նորոգում

¹ Ա. Մաթևոսյան, Երկու արժեքավոր ձեռագրեր u. Մեարոպ Մաշտոցի անվան Մատենադարանին, «Էջմիածին», 1978, ԺԲ, էջ 45—51:

² Գերված են ձեռագրի 8ա, 22բ, 79բ, 80բ, 128ա, 128բ և 209բ էջերի հիշատակարանները, անընթեռնելի է 81ա էջի հիշատակագրությունը: Ընթեռնելի հիշատակարանների մեջ կամ ջնջված կամ լերված անուններ և բառեր:

³ Մատենադարան, ձեռ. № 10780, էջ 79ա:

է կատարել ձեռագրի հետ, անհայտ է մընում, սակայն նկատելի են գրչության արվեստի գծով միջանորոշումները, որոնց կանոնադաշտնանք հետո:

Քերված մի հիշատակարանից ընթերցվում է միայն թվականը՝ «Ի թվ. ՊԻԷ (1378)»⁴: Այդ ժամանակներին է վերաբերում մի այլ հիշատակարան, որը, դժբախտաբար, քերված է⁵: Խիստ արժեքավոր է ձեռագրի հետագա պատմության համար հետևյալ հիշատակարանը, որը անհայտ է բանասիրությանը, ուստի քերում ենք ամբողջությամբ. «Խակական բնութիւնն և անեղական ընդեղականութեան մտանելով սահմանաւ, նախ քան զլրումն ժամանակին առնու ի ձեռն նահապետս և մարգարէս, իսկ ի լրման ժամանակի՝ առաքելս և աւետարանիչս, որք անընդմիջաբար զամենիմաստ հոգին Աստուծոյ իբր բաժակ անձրևածին սրբին հրեղինաբ լեզուաբ, որով և մատրուակեցին ի յարբումն մանկանց մար մերոյ Սիոնի՝ հաճաափիտ և տիեզերական ճառագմամբ: Տի նայ և ի ձեռքն չորից անտարանչաց, պայծառապէս զարդարեցաւ կենարարին քազկաւ կառուցեան կաթողիկէ, ի յերկրի՝ երկին, և զգալի խորան իմանալոյն տիպ, յորում բնակեալ հանգչի Աստուածն Իսրայէլի, իբր յաթոտ բառակերպեան՝ տալով մեզ խորհրդաբար նշանակ՝ զՄարդն բանական զՄատթէոս, զԱռիմն սրտմտական ընդդէմ չարին զՄարկոս, զԶուարակն լծարարն ողջախոհութեամբ, զքաջ քարտուղարն Ղաակաս, զԱրծիւն աղայաբարիկ աստուածաբանութեամբն զՅովհաննէս:

Արդ, զայս գտնն առտուածական և անձայական, և զակնաշափողայ՝ առի ինձ թոշակ երկայնածից և անդարձ պողոտային՝ Սարգիս վանական և կուսակրան քահանա, ի գաւառէն Գեղարքունոյ, վարժեալ և առեալ զաշտիճան քահանայութեան երկնանման խմբարանիս Տաթևոյ: Ի հալալ արդևանց սուացա զանտարեր կտակս կուսածին և անմահ թագաւորին Քրիստոսի՝ յիշատակ ինձ և բարեպաշտ ձնողացն իմոց Համագաստպայ և Տիրամարն արձան անջրնջելի և կարապետ կենացն յախտեանց, նա և բարեխաւս յաւորն այցելութեան սի-

բասնունդ հարազատացն իմոց՝ Սէրին Լիսանաին և Սումբային, և այլ աննայն արեան Վերձաւորաց իմոց, որոց ողորմեացի ապենիազ պարգևատուն յաւորն անբնկի:

Նա և սանդեցի զսա եղբարորդոյ իմոյ Սարգիս պատանէկի՝ որդոյ եղբարն իմոյ Սումբային՝ հայրենիք հաստատ ազգաց յազգ, մինչև յախտեան, կտակաւս այստ անջնջելի ըստ առաքելոյ յետ մահուն հաստատեալ:

Արդ, եթէ որ իմոց կամ յաւորաց հանել ջանս և զրկել զպատանեակն Սարգիս՝ նախանձու կամ ազանութեամբ, կամ ազակցութեան պատճառաւ, այնպիսին տուժեալ տոկոսեալ տանջեացի յախտեանական հրովն, մասն և բաժին զՅուդային և զերկարնակացն ընկալցի, և իս պարտեացն և յանցանացն համարս տայցէ առաջի ամաւոր քեմբէն Քրիստոսի»:

Անեղջապէս ներքևում Սարգիսը ծածկագրախառն հիշատակագրություն ունի, որը կարդացվում է. «Եւ ես նուստ Սարգիս⁶ նշանեցի հաստատ կուսակ զայս»⁷:

Ձեռագիրը հավանաբար Կոստանդինի ձեռքից է ընկնում Տաթևի սան Սարգիս վանականի ձեռքը, իսկ այդ պետք է լիներ 15-րդ դարի կեսերին, «ի փաթջալուրեան Զահանջան Միրզի», այսինքն 1437—1466 թվականներին⁸: Համագաստի և Տիրամոր որդի Սարգիսի հիշատակարանից երևում է, որ նա ձեռագրի հետ միասին Գեղարքունիքում չէր գտնվում, այլ միայն «ի գաւառէն Գեղարքունոյ» էր: Հիշում է հարազատներին՝ Սէրին, Սասնային և Սումբային, որոնք, հավանաբար, եղբայրներն են, որոնցից վերջինի (Սումբայի) որդի Սարգիս Պատանեկին է նվիրում ձեռագիրը:

Այսպիսի անձնանունների հանդիպում ենք ձեռագրի էջերում և Գեղարքունիքի դիմաց, Սևանա լճի արևելյան կողմում ընկած Արցախ նահանգի Փառխոս գավառում, ուր գտնվում էր ձեռագիրը: Այս ցույց է տալիս, որ Սասնայի, կամ Սարգիս հարազատները Գեղարքունիքից են տեղափոխվել լճի մյուս ափ, Արցախ և բնակու-

⁴ Անդ, էջ 127բ:

⁵ Քերված տեղում գրված է արարկերն 1401 թ. հիշատակարան, որը նույնպես քերված—վազված է: Հինը, ինչպես երևում է պահպանված որոշ գրքից և բանաբից, Սարգիս քահանայի (1088 թ.) գրությունն է: Պարսկերեն հիշատակարանի հատուկեան պահպանված բառերից և տառը վկայություն-ստորագրություններից երևում է, որ այն վերաբերում է ձեռագրի պահպանությանը (էջ 128ա):

⁶ Ծանց գծագրության մեջ, որը, թերևս «նշան» ստորագրություն է կոչվում, կարդացինք «Սարգիս» անունը, զուցե ուրիշ անուն էլ կա ծածկագրված:

⁷ Մատենադարան, ձեռ. № 10780, էջ 210ա—բ:

⁸ «Եւս Կոստանդուս և ամուսին իմ Ման(ր)այգաուն ևսոյ նորոգեցինք զԱւետարանս ի փաթջալուրեան Զահանջան Միրզի, յիշատակ մեզ և զառակաց մերոց՝ յեղալին ու Միսթարին ու Պլեմին, ով որ հանդիպի յաղապս յիշեցէ և Աստուած զձեզ (իշ)է, ամեն» (Անդ, էջ 79ա):

թյուն հաստատել այնտեղ, իր հետ տանելով նաև սույն Ավետարանը, որը համարվում է «հայրենի» թերևս հենց հայրենի գավառից հանելու պատճառով: «Յանուն Աստուծոյ եւ Էսիկ քահանայս՝ Սարգիս իրիցոյ որդի, Սարգիս՝ Սուրբին որդի, Սուրբէն Սասնին որդի, իմ կենդանութեամբս զիս հայրենի անտարանս (և գիրանքն) ազգաց ազգս իմ սրտի կամարոթեամբ տվի Դոնիկա և իր զաակին Ստեփանոսին՝ Ըսպրնդիարա, Ասողարայ, Տիրոսայ հաստատ անցանս լինի և իրեանց զակացն:

Ինչ մարդ որ հակառակի կամ լրբանա թէ կարգաւորաց և թէ աշխարհա(կա)նաց Գ հարիւր ԿԵ հայրապետացն որ Յեփեսոս ժողովեցան, ԾԾԻԻ մարգարէից Կոստանդոս ժողովեցան, ԺԲ առաքելոցն անիծած լինին և վարձքն Յուդայի առնու, և զխաչայհանուեացն անմասն ու անհաղորդ լինին, իմ մեղացն և իմ ծնողաց մեղացն և (1)անցանացն պարտական լինին յաւորն դատաստանին»⁹: Հիշատակարանը թվական չունի, սակայն հետագա հիշատակագրությունների մի արձանագրության պատմական անունները հնարավորություն են տալիս մոտավորապես ճշտելու ժամանակը և տեղը և հարակից հարցեր:

Ծամբոր գետակի աջ ափին գտնվող Փառիսոս քաղաքի (այժմ ավերակ) Ավագ եկեղեցու արևմտյան կողմի երկու խաչքարերից մեկի վրա Մակար եպիսկոպոս Բարխուդարյանը ժամանակին կարդացել է հետևյալ արձանագրությունը. «ԹՎ(ԻՆ) ԶԼ (1481): Յանուն Աստուծոյ եւ Սասնայս կանգնեցի զխաչս ի տէրութեան ժամանակի իմոյ՝ իշատակ ինձ և ծնողաց իմոց, և ամուսնոյ իմոյ Սիրունիկայ, և որդոյ իմ Սարգիսայ, և դստերն իմոյ Մամախաթունայ, Նիսաչհանայ՝ եղբարն Սիրունիկայ, կանգնեցա խաչս բարեխաւսութեան հոգոց մերոց»¹⁰:

Հիշատակարանի և արձանագրության Սասնան նույն անձնավորությունն է, քանի որ ձեռագիրը հետագայում գտնվում է այդ շրջանում, նրա ժառանգների մոտ: Էսիկի հիշատակարանից երևում է, որ իր ապուպապ Սասնան ճշանավոր մարդ է եղել: Այդպես է և արձանագրության մեջ. նա խաչքարը կանգնեցրել է իր տերության

ժամանակ, ուրեմն նա իշխանավոր է եղել: Բացառելի է նաև այն հանգամանքը, որ այստեղ Սասնայի որդին Սարգիսն է, իսկ արձանագրության մեջ՝ Սուրբեն և սրա որդին՝ Սարգիսը: Սարգիսը Սասնայի առաջին որդին է, որի ժամանակ կանգնեցրել են խաչքարը: Այս դեպքից հետո կարող էր ծնվել Սուրբեն, որից և սերել է Սարգիսը, իսկ սրանից՝ Էսիկ քահանան: Այնուամենայնիվ, Էսիկ քահանայի հիշատակարանում Սասնայի ժառանգների մեջ, որոնք իրավունք ունեն «ազգաց յազգս» փոխանցվող, հայրենի սեփականություն հանդիսացող Ավետարանը ժառանգել, գրված են «Դոնիկա և իր զաակ Ստեփանոսի» անունները, որոնց, իսկապես, այնուհետև պատկանել է ձեռագիրը: Մի էջում կարդում ենք. «Այլև յիշեցէք ի Քրիստոս Ըստեփանոս քահանայն և իր որդին Մալումն և որդոց իւրոց Վարդանին, Սարոյխանին և հանգուցեալ եղբարն Մխիթարին...»¹¹: Սրանց հանդիպում ենք 17-րդ դարի սկզբներին, երբ ձեռագիրը գերել էին: 1605 թվականին մոտակա գյուղերից Ղարամուրատցի Աղաքաբը ձեռագիրը ազատում է գերությունից և պահում իր մոտ: Չորս տարի անց Ստեփանոսի ժառանգները իմանում են ձեռագրի տեղը և ետ գնում փրկողից: Ահա այդ հիշատակարանը. «Ես Ղարամուրատցի Աղաքաբէս զնեցի գտորք Աւետարանս ի ձեռաց անարինաց: Չորս տարէն ի յետն Քիւղարեցի Մալումի տղա Վարդանն իրէք ասաց թէ Աւետարանդ իմ հօրեց, պապեց ապրանք է: Ես Ի (20) երեսօք մարչիլ ի տվել: Գ (8) մարչիլն մատաղայ գին թողի, ԺԷ (17) մարչիլն առայ՝ իր Աւետարանն ինքն տվի:

Տանուտէր Մխիթարն վկայ: Ստեփանոս էրեցն վկայ: Մխիթար արեղէն վկայ: Ես՝ Ալեքսիանոս արեղէս վկայ, որ գիրս գրեցի: ԹՎիս Հայոց ՌԾԸ (1609)»¹²: 110 տարի անց ավերվում է Քյուրյար գյուղը, ոչնչացվում են նրա բնակիչները և Ավետարանը թալանվում է, ապա փրկվում հարևան գյուղացիների ձեռքով:

⁹ Մատենադարան, ձեռ. № 10780, էջ 79բ:

¹⁰ Անդ: Ի դեպ, Ղարամուրատեցի պարոն Աղաքաբեն ստացողն է Մատենադարանի № 8812 Հայսմավորքի, որ նա գրել է տվել Ավետարանը վերադարձնելու հաջորդ տարին «Ի երկիրն Զակամայ, ի գեղն Ղարամուրատոյ... ի դառն և վշտաշատ ժամանակիս, որ գրով ոչ կարեմք արկանել զեղեալ չարիսն, և զայոցն Աստուած գիտէ...»: Ձեռագիրը նվիրել են «ի դունն Առակնունք Ս. խորանիս» (Մատենադարան, ձեռ. № 8812, էջ 516բ):

Ղարամուրատ գյուղը գտնվում է Փառիսոսի հյուսիս-արևմտյան կողմում:

⁹ Զնշված է բուն գրությունը և այլ գրով ավելացված է ընդգծված անունները: Այս Ստեփանոսին դրանից հետո հանդիպում ենք որպես ժառանգորդի:

¹⁰ Մատենադարան, ձեռ. № 10780, էջ 128բ:

¹¹ Մակար եպիսկոպոս Բարխուդարյան, Արցախ, Բագու, 1895, էջ 307:

«Ըստ վերջին նորոգեցա (ի) սուրբ Աւետարանս ի հայրապետութեան Եւայի Ներսէսին, յայս դառն ժամանակին, որ լակզին եկաւ երկիրս, գերի տարաւ Քուրան, Քարալտակն մինչ Բերթատակն:

Չայս սուրբ Աւետարանս Քուրարին էր կտրել ին կողերն, արծաթն ու եւլլախն տարել: Թուխուն տարել չին:

Եւ մեղատր Յովանէս նորոգել տվի (ի) յիշատակ իմ և ծնողացն իմոց՝ ճորն Մուրումպէին, մօրն՝ Մարիանին, եղբօրն՝ Ազարին, Կոստանդին, Մնակին և ամենայն ատեան մերձաորաց, կենդանեաց և հանգուցելոց և որք հանդիպիք՝ Աստուած ողորմի ասացէք, ամեն:

Անարժան և անպիտան Մկրտիչ էրէցս կազմեցի թվ(ին) ՌՃԿ թ. (1720) ի գիւղն Նուկզար»¹⁴:

Այսպիսով, Սասնայի խաչքարի կանգնեցնելու թվականից (1481) սկսած մինչև 1609 թվականը, երբ Ավետարանը Ղարամուրատից վերադարձվում է Քյուրլար, Սասնայի ժառանգներին, 128 տարի է: Եթե ընդունենք, որ Էսիկ քահանան Փառխստում էր գտնվում և Աւետարանը և այլ գրեանք նույնպես այնտեղ, ապա Դոնիկը, Ստեփանոսը, Մալումը և Վարդանը՝ քաղաքամերձ Քյուրլար գյուղում էին, որ 16-րդ դարի կեսերին տեղափոխվում է Ավետարանը, որպես հայրենի ժառանգություն, և այնտեղ մնում մոտ հարյուր յոթանասուն տարի, մինչև 1720 թվականը, երբ լեզգիների կողմից մի շարք գյուղերի նեո թալանվում, ավերվում և անմարդաբնակ են դարձնում Քյուրլար գյուղը:

Այդ ժամանակ թալանվում է նաև Քյուրլարի Աւետարանի թանկագին կազմը, արծաթյա խաչերը և թաշկինակը, որի մեջ պահվում էր ձեռագիրը: Մերկացած, անկազմ ձեռագիրը մի կողմ է նետվում, թալանչիներին բարեբախտաբար պետք չէր մագաղաթյա Ավետարանի ոչ բնագիրը, ոչ էլ մանրանկարչությունը:

¹⁴ Ատտեմագարան, ձեռ. № 10780, էջ 79բ:

Հիշատակարանը կարևոր է նաև այն տեսակետից, որ ճշտում է լեզգիների 1720 թվականի սապատակության ամսմանները: Պատմական նորագույն հրատարակություններում արձանագրված է, որ 1720 թ. լեզգի նրասակախոսները «...ավերեցին Լոռվա գյուղերն ու ամսաները, ջարդեր կատարեցին և մեծաքանակ գերիներով վերադարձան Դաղստան: 1721 թ. օգոստոսի 15-ին նրանք խոժեցին Շամախի...» (Հայ ժող. պատմ., հ. 4-րդ, Երևան, 1974, էջ 146): Հիշատակարանից պարզվում է, որ նրանք 1720 թ. մտել են նաև Արցախ և ավերել Քուրլար, Քարախատակ գյուղերը, մինչև Բերթատակ, որոնց անվանը ուրիշ տեղ չենք հանդիպում:

Անճեռանում է երկրի երեսից Քյուրլար գյուղը, փրկվում է Քյուրլարի Ավետարանը՝ իր մեջ պահելով գյուղի անունը, ձեռագրի տեքստի, նրանց նախնիների ու ժառանգների բարի հիշատակը: Եթե ընդունենք, որ Սարգիս վանականի եղբոր՝ Մումբայի թոռն էր իշխան Սասնան, այդ դեպքում Ավետարանի ստացողների շարքը կարելի է դասավորել նետույալ կերպ.

Սարգիս վանական որդի Համազասպի և Տիրամոր, Գեղարքունի գավառից ժեղարի 1 կես/

Սարգիս—որդի Մումբայի.

Սասնա—իշխան Փառխստի (որդի Սարգըսի)

Մումբա—որդի Սասնա,

Սարգիս—որդի Մումբի,

Էսիկ, որդի Սարգսի,

Դոնիկ (որդի Էսիկի)

Ստեփանոս, որդի Դոնիկի

Մալում, որդի Ստեփանոսի,

Վարդան, որդի Մալումի (1609 թի),

Հաջորդների անունները մինչև 1720 թվականը անհայտ են:

1720 թվականի լեզգիների սապատակությունից ավերված Քյուրլարից ձեռագիրը տեղափոխվում է Նուկզար գյուղ, որ և կազմվում է: Սասնայի ժառանգների տիրությունը վերանում է ձեռագրի վրայից: Նուկզարում, որը գտնվում է Ղարամուրատից ու Փառխստից արևելք, նույն Շամբոր գետակի հարավային կողմի սարահարթի արևելահայաց լանջի վրա, ձեռագիրը դառնում է պարոն Շահոյի սեփականություն: Ձեռագրի վրա կա կնիք. («Քրիստոսի ծառա Շահո, ՌՃԿ (1711 թ.)» գրություն) և հիշատակարան. «Յանուն Աստուծոյ յիշատակ է սուրբ Աւետարանս պարոն Շահոյին և եղբորն Սուրա(ս)ին, որդոյն Մեծոյին...»: Հիշվում են ծնողները՝ Մարքարն ու Անարխանը, եղբայրները՝ Վարդպարոնը, Խերպարոնը, Նորսարոնը, քույրերը և այլք վերջանում է. «Այս է որ եղա թվին ՌՃՀԼ (1729)ին»¹⁵ նախադասությամբ: Կան մանր հիշատակումներ, 1756, 1766 թվականներից, որոնք Շահոյի ժառանգների մասին են, գրված 1780-ական թվականներին¹⁶, երբ, այս անգամ, դատարկվում է իր բնակիչներից Նուկզարը: Մ. Բարխուդարյանը Նուկզարի մասին գրում է. «Բնակիչը Ֆիցիանովի ժամանակ գաղթած են Երևան նահանգի Շաթղոսան, Շորվիզ և Քանաքեռ գյուղերից»¹⁷: Այս տե-

¹⁵ Անդ, 80բ:

¹⁶ Ատտեմագարան, ձեռ. № 10780, էջ 81ա:

¹⁷ Մակար Լախնուդյոս Բարխուդարյանը, Արցախ, էջ 294:

դի է ունեցել 1805 թվականին, իսկ մինչ այդ գյուղը գաղթել էր իր հետ տանելով նաև Բուռլարի Ավետարանը: Ձեռագրի շուրջ երկուհարյուրամյա անհայտությունը ավարտվեց բարեբախտ հայտնությամբ, որը վերջ դրեց նրա դարավոր ողիսակահին, 1978 թ. Մանիկ և Թադևոս Անտիկյաններից այն անցավ Ամենայն Հայոց կաթողիկոսին, և Վեհափառը իր Ավետարանը նվիրեց Մատենադարանին. «Ի վայելումն Ազգիս հայոց»¹⁸:



Վեհափառի Ավետարանը ունեցել է ութ թերթանոց 33 (Ա—8) պրակներ, բացառությամբ Պ պրակի, որը կազմված է հինգ թերթից: Պրակներից դուրս ձեռագրի սկզբում, Համաքարբառի խորանների և տերուական որոշ նկարների համար, որոնք բնագրում չկան, եղել է, հավանաբար, դարձյալ ութ թերթ: Դրանցից այժմ հինգը կա և մեկի արմատը, որը դանակով կտրել են վերջին անգամ կազմելուց (1720 թ.) հետո: Այսպիսով, ձեռագիրն սկզբում ունեցել է 269 (34×8=272—3) թերթ: Այսօր ձեռագիրն ունի 24,5×32սմ մեծության 264 թերթ, պակասում են մանրանկարված պրակից 3 և վերջին 8 պրակից 2 թերթ, որի վրա գլխավոր հիշատակարանն է եղել: Հետագայում նոր պրակակալում են կատարել, սկզբի չհամարակալած թերթերը համարել են որպես Ա պրակ, իսկ բուն գրչության Ա պրակը՝ նշանակել Բ, Բ-Ն Գ և այդպես մինչև վերջ, ու 3 պրակը դարձել է Ի, որն ունի 6 թերթ¹⁹: Համարյա բոլոր նոր պրակահիշերի տակից երևում են անվարժ շղագրով գրված հին, աղոտ պրակահիշերը: Ինչպես Ավետարանները, այնպես էլ համաքարբառները, սկսած Եվսեբիոսի նամակից, ամբողջական են²⁰: Ձեռագիրն ունի երկայուն գրություն, յուրաքանչյուր սյունակ՝ 7,8×23,8 սմ գրադաշտով և 21-ական տողերով: Սյունամիջի լուսանցը 2,2 սմ է, տողա-

գծերի հեռավորությունը 1,3 սմ: Տողագծերը կատարված են ճնշումով, բայց տեղ-տեղ սյունագծերը գրչության թանաքի շագանակագույնն ունեն: Ձեռագիրը գրված է գրչագրով կամ աղյուսակ գրով, որը բանասիրության մեջ կոչվում է «ուղղագիծ կամ ուղղանկյուն երկաթագիր», կես սանտիմետր բարձրությամբ, ուղղահայաց գրությամբ: Եվսեբիոսի նամակը գրված է թեք, համեմատաբար մանր գրչագրով: Գլխագրերը երկաթագիր են, որոնք մեծ մասամբ գրված են գրադաշտից դուրս: Ավետարանների խորագրերը, խորանների միջի և բնագրի լուսանցների համաքարբառները, տոների նշումները՝ լուսանցներում, ինչպես նաև նկարների բացատրությունները գրված են միևնույն բոլորգրով: Բոլոր գրատեսակներում պահպանվել են հնաձև տառեր (բոլորգիր Ժ 1, գրչագիր և երկաթագիր կ.):

Կետագրությունը պարզ է. օգտագործված է մի կետ՝ տողի մեջտեղում, վերջակետի, ստորակետի և միջակետի նշանակությամբ: Նախդիր Ի-ի վրա գծիկ է դրվում, իսկ մարգարեություններից բերված տողերի առաջ, տգրկիկ: Վերջինս գործածվում է նաև որպես սխալները ցույց տալու նշան: Հետագայում, հավանաբար ԺԲ դարում, սրբագրված է ձեռագիրը մուգ վարդագույն թանաքով: Ձեռագիրը զարդագիր չունի: Մինչև ԺԱ դարի կեսերը այն չէր կիրառվում ձեռագրերում: Գլխագրերը ունեն Ավետարանները, որոնք ուրիշ բան չեն, եթե գրչության թանաքով գծված պարզ, քառանկյունիներ, փոքրիկ տերևներով: Այդպիսի պատկերներ են ներկայացնում իրենցից նաև տոների անունների և երբեմն ընթերցվածների օրերի նշումների շրջանակները: Սրանք, իրենց տերևներով հանդերձ, անգույն են եղել. գունազարդվել են հետագայում: Գրիչը նշանակել է, ինչպես սասցիևք, համաքարբառի Եվսեբյան թվերը՝ յուրաքանչյուրի հատածի դիմաց, հաճախ՝ գլխագրի մեջ, ավելի բաց գույնի թանաքով: Մատթեոսի Ավետարանի 7ա—11ա էջերում գրիչը նշանակել է նաև վկայությունները, որոնց առաջին անգամ այստեղ ենք հանդիպում: Դրանք պարզապես այդպես էլ նշանակված են լուսանցում, Հին Կտակարանի մարգարեություններից բերված հատվածների դիմաց, թվային համարակարգությամբ, «ա վկ.» «բ վկ.» «դ վկա», «ե վկ.» մինչև «ծա վկ.»²¹:

Եվսեբիոս Կեսարացին չորրորդ դարի

¹⁸ Աճ, էջ 79:
¹⁹ Այս պրակակալման ժամանակ վերջին ց պրակի սկզբի 4 թերթը նշանակել են Ի պրակահիշով, վերջին 4-ը՝ փ-ով, որի երկու թերթը կտրել է, որոնց վրա պրակահիշն էր և մնացել է 2 թերթ: Ուրեմն հին ց պրակից (այսօր Ի) մնացել է 6 թերթ:
²⁰ Խաթարված է միայն 80բ էջի ստորին մասը, որը քերել են հիշատակարան գրելու համար: Ձեռագրի կազմը 1720 թվականից է, կազմողը Մկրտիչ Երեցը: Ունի 25,5×32,5 սմ մեծություն: Կաշեպատ տախտակ է, մետաղյա զարդերով և քարերով զարդարված:

²¹ Մատենադարան, ձեռ № 10780, էջ 7ա, 8բ, 9ա, 10բ, 11ա:

սկզբներից կազմեց Ավետարանի համաբարբառը: Ավետարանի բնագիրը բաժանեց հատվածների, դրանք հերթականությամբ համարակալեց, նշանակեց լուսանցքներում: Հատվածների հիման վրա կազմեց 10 աղյուսակներ—կանոններ (ա-ժ) ելնելով բնագրային զուգահեռներից, որոնք նշանակեց թվերով և տեղափոխեց Ավետարանի սկզբում, շրջանակների, խորանների մեջ ամփոփված: Գեոևս չորրորդ դարի վերջում Եվթաղ Աղեքսանդրացին նշակում է համաբարբառի մի եղանակ, որ ցույց տար տվյալ բնագրում Հին Կտակարանից օգտագործված վկայությունների և բառացի փոխառությունների աղբյուրները: Դրա համար նա օգտագործում է Գողոս առաքյալի 14 թղթերը և արդյունքները ամփոփում է «Իովանդակութիւն աստուածողէն վկայութեանց» երկում, որը 5-րդ դարում բարգձմանում է հայերենի²¹: Եվթաղ Աղեքսանդրացու համաբարբառը ունի հետևյալ ստորաբաժանումները. «Ընթերցուածք», «Գլոխք», «Վկայութիւնք», «Տունք»²²:

Ավետարանի համար, արդյոք, կազմված եղել է այդ կարգի համաբարբառներ: Այս հարցին նվիրված Հ. Անասյանի ուսումնասիրության մեջ կարդում ենք. «ԺԳ դարի վերջերից հայերեն ձեռագրերում երևան է գալիս կանոնաձև կամ աղյուսակաձև համաբարբառի մի այլ տեսակ, որի ստարկան դարձյալ Ավետարանի բնագրերի հատկանշականությունն է... Այս համաբարբառի հիմքում ևս ընկած է Եվսեբիոս Կեսարացու հղացած թվական դրությունը, բայց տարբեր է նրա կառուցվածքը: Այստեղ ևս կանոնները հեկեկում են չորս Ավետարանների բնագրերում մտցված համարակալումների սկզբունքի վրա, բայց այդ համարները կամ հատվածները կապ չունեն ոչ հունական Եվսեբյան հատվածումների հետ, ոչ էլ... ստրական-պեշիտոտյական... հատվածումների հետ: Այստեղ Մատթեոսի Ավետարանն ունի 68 հատված, Մարկոսի՝ 48, Դովկասի՝ 84, և Հովհաննեսի՝ 43: Հատվածահամարները նշանակված են լուսանցքների վրա: Հիշյալ հատվածումները... անվանվում են «գլոխք», «ցանկ գրվածք», «սկզբն գլխոց»...: «Այս համաբարբառին մենք տալիս ենք Գեորգյան համաբարբառ անունը, որովհետև նրա պատմությունը կազմված է Կիլիկյան շրջանի մեր

հայտնի գիտնական մատենագիրներից Գեփորգ Ավուսացու անվան հետ»²³: Սակայն փաստերը ցույց են տալիս, որ Ավետարանների համար ևս եղել են Եվթաղ Աղեքսանդրացու համաբարբառների կարգ և շատ ավելի վաղ, քան Գեորգ Ավուսացին, որի այդ ուղղությամբ կատարած աշխատանքի վերաբերյալ մենք ունենք նրա աշակերտ Ստեփանոս Գոյներերիցյանցի ավելի որոշակի վկայությունները²⁴, քան այն, ինչ կարդում ենք Հ. Անասյանի ուսումնասիրության մեջ: Իսկ Ավետարանի ընթերցվածների, գլոխների, վկայությունների վերաբերյալ ունենք և՛ ձեռագրական, և՛ մատենագրական ապացույցներ, որոնց մեջ յուրահատուկ տեղ ունի Վեհափառի Ավետարանը, որի մեջ նշանակված են, թեև ոչ լրիվ, թե՛ ընթերցվածները, թե՛ գլոխները, թե՛ վկայությունները և միշտակված են այս բոլորի հետ նաև տեղերը:

ԺԱ դարի կեսերից հայերեն Ավետարանների վերջում հաճախ հանդիպում ենք Ավետարանի համաբարբառային ցուցումների և ավետարանիչների մասին սեղմ տեղեկությունների, որոնք ունեն տարբեր խմբագրություններ: Մատենադարանի թվակիր ձեռագրերից հնագույնը 1042 թ. Ավետարանն է, որն իր մեջ ունի միայն ավետարանիչների վերաբերյալ սուղ տեղեկություններ²⁵: Մինչ այս, համաբարբառային ցուցումների հանդիպում ենք ութերորդ դարի մատենագիր Ստեփանոս Սյունեցու «Հանասարտ մեկնութիւն չորից Աւետարանչաց» երկում: Ավետարանիչների մասին տեղեկություններից հետո կարդում ենք, որ Մատթեոսի Ավետարանում «քարոնդակին թիւր ՅԾԵ և Աւետարանը գլխաւորը ԿԶ», Մարկոսի մոտ «թիւր ՄԼԳ» «Աւետարանը գլխաւորը ԾԲ», «Դովկասի մոտ», «թիւր լիւր և Աւետարանը գլխաւորը Հ», իսկ Հովհաննեսի մոտ՝ «թիւր ՄԼԲ և Աւետարանը գլխաւորը Ծ (Ա)»²⁶:

Հաջորդ ձեռագրերը Հովհաննես Սանդղկավանեցու երկու Ավետարաններն են, որոնք գրված են ԺԱ դարի կեսերին (մեկը՝ 1053 թվականին, մյուսը՝ Մողոմ Ավե-

²¹ Հ. Անասյան, նշվ. աշխ., էջ 20—21:

²² Այս հարցին հանգամանորեն անդրադարձվել ենք «Հերոս Բ թագավորի ճաշոցը» մեր անոթի աշխատության մեջ:

²³ Մատենադարան, ձեռ. № 6384, էջ 61ր, 107ր, 191ր, 255ր: Չեռագրի թվականը համարվում է 902-թ. որը թյուրընթերցում է («Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», Բ. Բ, Երևան, 1970, էջ 307):

²⁴ Մատենադարան, ձեռ. № 5551, էջ 223ա:

²⁵ Հ. Անասյան, Հայ բարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը, «Էջմիածին», 1971 թ., ԺԱ—ԺԲ, 1972 թ., Ա—Դ համարներ: Մասնատեսիկ, Էջմիածին, 1972, էջ 23:

²⁶ Մատենադարան, ձեռ. № 3845, էջ 17ա:

տարանը՝ դրանից առաջ)²⁸ և պարունակում են համաքարքառային ցուցումներ և ավետարանիչների մասին լրիվ տեղեկություններ. «Աւետարանս Մատթեոսի գրեցաւ յերուսաղէմ քաղաքի, ի լեզու եբրայեցի, զկնի ութ ամի համբառնալոյ փրկչին, ի խնդրելոյ եկեղեցոյն Երուսաղէմի:

Ունի գլոխս՝ ՅԾԵ, Վկայութիւնս ԼԲ, Աւետարանս՝ Կ (Զ), Տունս ՍԻ»²⁹: Այսպես նաև մյուս Ավետարանների վերջում: Ի դեպ, այս երկու Ավետարանները մեզ հայտնի առաջիններն են հայերեն ձեռագրերի մեջ, որոնք ունեն գլխազարդեր, զարդագրեր և լուսանցազարդեր (վերջիններս միայն 1058 թ. Ավետարանում): Վեհափառի Ավետարանում այս տեղեկությունները ավելացվել են ձեռագիրը գրելուց հետո, այլ թանաքով և գրութային, բայց 1088 թվականի նորոգումից առաջ, կամ այդ ժամանակ, որովհետև նշված հիշատակարանը գրված է Մատթեոսի Ավետարանի համաքարքառային ցուցումներից հետո, թերևս որպես նրա շարունակություն: Տարբեր է գիրը և թանաքը (մասամբ): Այս տեղեկությունների գրող գրիչը նույն թանաքով սրբագրել է բուն գրչի կողմից նշանակված օրերը: Գրողի կողմից շրջանակների մեջ առած թվերի մոտ ավելացրել է իր թվացույց տառերը, որոնք հաճախ իրար չեն համապատասխանում, որովհետև սխալ են եղել նշանակված: Թերևս այն կատարել է տվել Սարգիս կրոնավորը, և նորոգել ասելով, այս հավելումներն են նշանակում: Ահա այդ տեղեկությունները՝

«Աւետարան Մատթեոսի. գլոխս ունի ՅԾԵ, Աւետարանս ԿԳ, վկայութիւնս ԼԴ, տունս ՍԻ: Գրեցաւ յերուսաղէմ քաղաքի, ի լեզու յեբրայեցի, զկնի Ը ամի համբառնալոյ Փրկչին»³⁰:

«Աւետարանս Մարկոսի. Գլոխս ունի ՄԼԳ, Աւետարանս ԾԵ, վկայութիւնս ԺԳ, տունս ՌՈ: Գրեցաւ յԱղեքսանդր քաղաքի, ի լեզու եգիպտացի հրամանաւ Պետրոսի առաքելոյ, զկնի Ժա ամի համբառնալոյ Փրկչի»³¹:

«Աւետարանս Ղուկայ. գրեցաւ յԱնտիոք քաղաքի, ի լեզու լունաց³² զկնի Ժը ամի համբառնալոյ Փրկչին:

²⁸ Ա. Մաթևոսյան, Գրիչ Հովհաննես Սանդղկավանցի («Մուղնու Ավետարանը»), Բանբեր Մատենադարանի, № 10, Երևան, 1921, էջ 374—401:

²⁹ Մատենադարան, ձեռ. № 8798, էջ 88բ, Հմմտ. ձեռ. № 7786, էջ 124բ:

³⁰ Մատենադարան, ձեռ. № 10780, էջ 79ա:

³¹ Անդ, էջ 128ա:

³² 8798 ձեռագրում «ի լեզու Ասորի»:

Աւետարանս ունի ԿԵ. գլոխս չխբ, Վկայութիւնս ԺԲ, տունս ՍՊ»³³:

Հովհաննեսի մասին տեղեկությունը պակասում է. ամբողջականությունը պահպանելու համար այն բերում ենք Սանդղկավանցու Ավետարանից, որը համեմատաբար մոտ է Վեհափառի Ավետարանին:

«Աւետարան ըստ Յովհաննու: Յովհաննես գրեաց զԱւետարանս իր Յեփեսոս քաղաքի, ի լեզու լոյն, զկնի Ծգ ամի համբառնալոյ Փրկչին, ի խնդրելոյ եկեղեցոյն Ասիոյ: Եւ է գլոխս ՄԼԲ, վկայութիւնս ԺԵ, Աւետարանս ԾԱ, Տունս ՍՅ»³⁴:

Առաջին տվյալը Եփեսոս Կեսարացու Համաքարքառին է վերաբերվում: Բերված ցուցումներում դրանք կոչվում են գլոխներ, իսկ Ստեփանոս Սյունեցու մոտ՝ «թիւք»: Վեհափառի Աւետարանում սրանք նշված են կանոնավոր կերպով, աննշան թերութամբ: Երկրորդ տվյալը վերաբերվում է ընթերցվածներին, որոնք կոչվում են «Աւետարանք գլխաւորք», «Աւետարանք», ինչպես և «նշանագիրք»³⁵: Ստեփանոս Սյունեցու մոտ բերված են առաջին և երկրորդ տվյալները: Ընթերցվածներին ձեռագրում նշանակված առաջին անգամ հանդիպում ենք 909 թվականին Աշոտ Սպարապետի համար Թութայել գրչի Կոստանդնուպոլսում գրված Ավետարանում: Սրանք հերթականությամբ գրված են համապատասխան էջի վերին լուսանցքում, որի թվահամարը նշանակված է ընթերցվածի դիմաց՝ լուսանցքում³⁶:

Ձեռագրում յուրաքանչյուր Ավետարանի ընթերցվածների ցանկը բերված է համապատասխան Ավետարանի սկզբում: Հովհաննես Սանդղկավանցու մոտ նրանք սկսվում են զարդագրերով և լուսանցազարդերով, որը և հետագայում արմատավորվում է հայ գրչության արվեստում: Իսկ մինչ այդ, ընթերցվածները նշանակվում էին բաժանարարով, որը նկատվում է հնագույն Լազարյան Ավետարանում (886 թվական)³⁷:

Ընթերցվածները ավելի ամբողջական միավորներ են, քան «թվերը» կամ «գլոխները»: Եկեղեցու ծիսական մատյաններում Աւետարանից բերված քաղվածքները սույն ընթերցվածներն են: Ավետարաններում սրանք բաժանված են շաքաթներով, որոնց

³³ Մատենադարան, ձեռ. № 10780, էջ 210ա:

³⁴ Մատենադարան, ձեռ. № 8798, էջ 809բ:

³⁵ Մատենադարան, ձեռ. № 8756, էջ 418ա, 581ա:

³⁶ Մատենադարան, ձեռ. № 6202:

³⁷ Ա. Մաթևոսյան, Լազարյան ճեմարանի հնագույն ձեռագիրը, Պատմա-բանասիրական հանդես, 1978, № 1, էջ 111—128:

թիվը յոթ է և լուսանցազարդերի մեջ, շքշահակներու, նշանակված են հեթոթական օրերով—առ, ար, ագ, ադ և այլն, քա, քք, քգ, քդ և այլն, այսպես մինչև 49 օր: Վեհափառի Ավետարանում սույն օրերը նշանակված են անկանոն, ցկատվում է նշանակումների երեք շերտ, որ թվերը կամ հասարները միմյանց չեն համապատասխանում: Առաջին շերտը, որը պատկանում է գրչին, նշանակված է փոքրիկ լուսանցազարդերի մեջ, պարզ շքշահակով, որն ունի մեկ կամ մի քանի տերև: Մրանք հետագայում գունազարդել են: Օրերի մի մասը թվերով չի նշանակված, այլ գրված է տոների անունները, կամ օրերը: Հաջորդ նշանակումը, որ պատահական բնույթ է կրում, 1088 թ. կամ դրանից առաջ է արված: Վերջապես երրորդ շերտը՝ 17-րդ դարում, թերևս կազմող Մկրտիչ Նյուկարցին է արել՝ նոր պրակամիշների հետ նաև ընթերցվածներն է նշարտել, որոնք մեծ մասամբ հասնում են գրչի նշանակումներին:

Երրորդ ցուցումը վկայություններն են: Մատթեոսի Ավետարանն ունի «Վկայութիւնքս ԼԳ», որի բ—ծա վկայությունները նշանակված են Վեհափառի Ավետարանում և, ինչպես նշեցինք, մեզ առաջին անգամ են հանդիպում: Հետագայում նրանք չեն նշանակվում, հավանաբար ընթերցողին առանձին քան շտապո պատճառով, որովհետև բնագրերից էլ հասկացվում է, որ այն որևէ մարգարեի խոսքն է, և պահպանվում են միայն ընդհանուր համարաբառային ցուցումներում: Որոշ Ավետարանների վերջում պահպանվում է նույնիսկ սույն համարաբառային ցուցումների համագումարը:

Այս բոլորը մեզ քերում են այն համոզման, որ Եվթաղ Աղեքսանդրացին կամ նրա հետևորդները մեկ ուրիշը կատարել է Ավետարանի ընթերցվածների հատվածում, վկայությունների նշանակում և տների հաշվում և օգտագործելով Եվթերիոս Վեսարացու Համարաբառը, կազմել է համարաբառային սույն ցուցումները՝ ավետարանիչների մասին տեղեկություններով: Այն նույնպես վաղ պետք է թարգմանված լինի հայերեն, սակայն քիչ օգտագործված և մոռացված, ինչպես ցույց է տալիս Վեհափառի Ավետարանը:

գրված ձեռագրերի զարդարվածության եղանակից ու աստիճանից: Այսպես, եթե տերունական նկարները մինչ այդ և դրանից հետո (մինչև ԺԳ դարի վերջերը) գրված Ավետարաններում շատ քիչ բանակոթյաճ տեղավորվում էին համարաբառի խորաններից հետո և բնագրից առաջ, ապա այստեղ նրանք տեղավորված են բնագրում, այն տողերի արանքում, որոնցում խոսվում է Քրիստոսի հետ կապված այս կամ այն եղելության կամ հրաշագործության մասին: Այդ նկարների քանակը հասնում է վաթսուհորսի, մի նկարաշար, որի հետ կարող է սրցել միայն Մատենադարանի № 7651 ձեռագիրը, այսպես կոչված «ուր նկարիչների» նկարազարդված Ավետարանը, կատարված ԺԳ դարի վերջերսում և ավարտված ԺԴ դարի սկզբներին:

Ինչ ավելին: Վեհափառի Ավետարանը այս բոլորից անխոյր տարբերվում է նրանով, որ բնագրի մեջ կատարած նկարազարդումներից բացի, ամբողջական էջեր գրադեցնող նկարներ է դրել նաև Համարաբառի խորաններից հետո և բնագրից առաջ: Այժմ պահպանված միակ թերթի վրա նկարված է «Սուրբ Երրորդություն», «Աբրահամու տանը», իսկ մյուս կողմում՝ սուսցողի ընտանեկան նկարն է: Ինչպես ասել ենք, այդ թերթից առաջ պահպանվել է կորված թերթի արմատը: Եթե ընդունենք, որ կորված թերթի մի կողմում եղել է Մատթեոս ավետարանի նկարը, որը չէր կարող չլինել, քանի որ մյուս բոլոր ավետարանիչների նկարները կան և ամբողջական էջ են գրադեցնում, ապա մյուս էջում եղել է տերունական որևէ նկար: Այսպես ենք մտածում նաև այն պատճառով, որ Ավետարանների մեջ բացակայում են տերունական այնպիսի նկարներ, ինչպիսիք են Ավետումը, Մնունդը, Ընծայումը, Մկրտությունը:

Մատթեոսի Ավետարանի բնագրում առաջին նկարը—«Անդամալոյծի բժշկումն» է (Էջ 21բ), Մարկոսի բնագրում՝ «Քարոզչութեան սկիզբը Գալիլիայում» (Էջ 81ա), Դովկասի բնագրում՝ «Յովհաննէս Մկրտիչի ծննդեան ատոումը» (Էջ 130ա), իսկ Հովհաննէսի բնագրում՝ «Վանայի հարսանիքը» (Էջ 214ա): Ինչպես տեսնում ենք, չորս Ավետարանների նկարաշարերում բացակայում են վերը բերված թեմաները (բացի Դովկասից, որտեղ Ավետում կա), որոնք գտնվել են ձեռագրի սկզբում: Տարբեր Ավետարաններում միևնույն թեմաները երբեմն կրկնվում են, սակայն այս չի աղքատացնում ձեռագրի նկարաշարը, որովհետև թեմայի կրկնությունը նկարի կրկնություն չէ, որ նկարը չի պատճենված, մա-

Վեհափառի Ավետարանը, սակայն, առավելապես աչքի է ընկնում իր գեղարվեստական զարդարվածությամբ և շատ քանով տարբերվում է իրենից առաջ և հետո

նավանդ որ այդպիսի կրկնությունները շատ քիչ են:

Մանրանկարիչը երբեմն թեման ավելի լիարժեք ներկայացնելու համար այն կատարում է դրվագներով: Այսպես «Ցիսուսի դատապարտումը մահուան» թեման ներկայացված է երկու դրվագով, երկու տարբեր պատկերներով: Առաջինում՝ Պիղատոսը և «թղթաբերն ի կնոջեն», երկրորդում Պիղատոսը լվանում է ձեռքերը (74բ) կամ «Ցիսուսի խաչելությունը» (175բ), առաջինում՝ Սիմեոն Կիրենացին՝ խաչը տանելիս, երկրորդը՝ խաչված Քրիստոսը՝ մակագրությամբ, «Ցիսուս թագաւոր հրէից»: Երկու պատկերներով է նաև «Անիրա տնտեսի առակը» և այլն (էջ 183ա): Հայ մանրանկարչության մեջ երևույթի կամ անձնավորության համակողմանի բացահայտման համար նրան մի քանի կողմերով ներկայացնելու օրինակելի մտուշ է Գրիգոր Նարեկացու չորս կերպ նկարները՝ Ներսես Լամբրոնացու համար գրված Նարեկում (Մատ. 1684): Այն, ինչ կատարել է Գրիգոր Սկևռացին (սխալմամբ կոչվում է «Մլիճեցի») 1178 թվականին, կամ Գևորգ Սկևռացին Հեթումի Շաշոցում՝ 1283 թվականին, Վեհափառի Ավետարանի նկարիչը այդ եղանակը կիրառել է 11-րդ դարի սկզբներին:

Ինչպես երևում է, նկարիչը Քրիստոսի նկարի համար կադապար է ունեցել, որովհետև բոլորը համարյա միևնույն չափերով են:

Ձեռագիրը գրված է շագանակագույն թանաքով: Նկարները նույնպես արված են շագանակագույն ներկով, որպեսզի պահպանվի գրի, գրանցության, մագաղաթի և նկարի ներդաշնակությունը: Օգտագործվել են շագանակագույնի երանգները և դեղինը՝ լուսապսակների համար:

Բնագրի տերմոնական նկարները կարմիր, կապույտ, կանաչ ներկերով հետո գունազարդել են, որից նկարները շատ են տուժել, նախ մգացրած դեմքերը համարյա սևացել են, այնուհետև շատ տեղերում գույները անցել են գծի սահմանը և այլանդակել նկարը: Մինչդեռ ձեռագրի նկարիչը այդ նույն գույները օգտագործել է Համաբարբառների խորանները և նրանց կից տերմոնական նկարները նկարելիս, որոնց կատարման գունազարդման վարպետությունն էլ մատնում է հետազայում բնագրային նկարների հետ արված անշնորհք միջամտությունը, որքան էլ նրանք աշխատել են պահպանել գույների նույնությունը:

Նկարիչը նկարների վրա, շատ քիչ բացառությամբ, գրում է նկարների բացատրությունը: Հետաքրքրական է, որ հարց

ու պատասխանի ժամանակ բառերը սկսում է խոսողի բերանի մոտից և հասցնում է մինչև մյուս խոսողը: Այս գրվում է ձախից աջ, ճիշտ գրությամբ, որովհետև Քրիստոսը միշտ ձախ կողմում է: Պատասխանը նույնպիսի եղանակով է գրվում, բայց՝ աջից ձախ: Այս դեպքում տառերը գրվում են շուտ տված, որ կարելի է կարդալ հայելիով: Այս մակագրությունները ավելի շարժուն ու կենդանի են դարձնում պատկերները, որոնք առանց այն էլ այդ բանը ունեն:

Որոշ տեղերում նկարների անունները հայերենի հետ ունեն նաև հունարեն գրություն: Նկարները բնագրում տեղավորված են էջի լայնքով, այդպես են նաև սկզբի տերմոնական նկարները և ավետարանիչների նկարները, որոնց անունները նույնպես գրված են հայերեն և հունարեն (մի մասը՝ այժմ քերված է, հիշատակարաններ գրելու համար): Հետաքրքրական է, որ № 6201 և ԺԱ դարի մյուս բոլոր Ավետարաններում (նրանից հետո և առաջ գրված) չորս ավետարանիչները նկարված են միասին, ամբողջ հասակով կանգնած, բացառությամբ Մլքեի Ավետարանի (Թ դար), որտեղ ավետարանիչները նկարված են առանձին թերթերի վրա, որոնցից առաջին երկուսը նստած են, վերջինները կանգնած և տեղադրված են միասին, խորաններից հետո: Վեհափառի Ավետարանում ավետարանիչները նկարված են առանձին-առանձին և գտնվում են յուրաքանչյուրը իր Ավետարանից առաջ և նկարված են հասակով մեկ կանգնած: Փաստորեն հնագույն օրինակն է, երբ յուրաքանչյուր ավետարանիչ գտնվում է իր Ավետարանի սկզբում:

Ստացողների խմբանկարը նույնպես հին է: Մինչև այժմ հնագույնը համարվում էր Մատենադարանի № 283 Ավետարանի Սիմեոն ստացողի և երեք կրոնական եղբայրների նկարը, կատարված 1038 թ.: Վեհափառի Ավետարանում ութ մարդկային կերպարներ կան, որոնց գլխավերևում գրված նրանց անունները հետագայում քերել են: Ձախ կողմում ստացող հոգևորականն է կանգնած ձեռքերը վեր պարզած: Նրանից աջ՝ կիցն է, երկու կողմում փոքր երեխաներն են, փոքրիկ մահակներով: Մրանց հետևում են կրոնավորի չորս եղբայրները, բոլորի հայացքները մեծ եղբորը:

Իսկ ե՞րբ է գրվել ձեռագիրը կամ որտեղ: Վեհափառի Ավետարանի նկարները և հատկապես սկզբի գույգ խորանները որոշ նմանություն ունեն Մաշտոցի անվան Մատենադարանի № 6201 Ավետարանի նկարներին: Այս ձեռագիրը գրված է 1038 թվա-


կանին, բայց գրչության վայրը անհայտ է: Անհայտի Ավետարանում պահպանված հնագույն թվականը 1088-ն է, որը վերաբերում է նորոգմանը: Գրչության և մանրանկարչության համեմատությունից երևում է, որ այն գրված պետք է լինի ժա դարի սկզբներին, այն շրջաններում, որտեղ գրվել և նկարազարդվել է Մատենադարանի № 6201 ձեռագիրը, գրված 1038 թվականին:

Վերջում ներկայացնում ենք նկարների ցանկը, պահպանելով 1975-ին էջմիածնում հրատարակված Նոր Կտակարանի հասկածանունների վերնագրերը և ուղղագրությունը:

- 1ա Լուսեթ Կարսիանոսի սիրելոյ ի Տէր ողջոյն
- 1բ Խորան. «Կանոն ատաշինն յոր է չորքն».
- 2ա Խորան. «Կանոն երկուք յորս երեքն»
- 2բ Խորան. «Կանոն Գ, յորս չորս», «Կանոն չորս յորս չորսն»
- 3ա Խորան. «Կանոն Ե (յորս երեքն) կանոն Զ յորս երկուն
- 3բ Խորան. «Կանոն Գ յոր երկուն», «Կանոն Է, յորս երկուն»
- 4ա Խորան. «Կանոն Ը յորս երկուն», «Կանոն Թ յորս երկուն», Կանոն Ժ յորս առանձինն
- 4բ Խորան կանոն Ժ յորս առանձինն
- 5ա Պատվիրատուները
- 5բ Սուրբ Երրորդութիւնն ի տան Աքրահանո:
- Ա. (Մատթէոս անտարանիչ)
- Բ. 21բ Անդամալոյծի բուժումը
- Գ. 30բ Կոյր և համր դիւանարի բժշկումը
- Դ. 37բ Յովհաննէս Մկրտչի գլխատումը
- Ե. 40բ Քանանացի կնոջ հաւատը
- Զ. 43ա Աշնարիտ դասանութիւնը
- Է. 44բ Յիսուսի պաշտօնակերպութիւնը
- Ը. 45ա Լուսնոտ երեխայի բժշկումը
- Թ. 49բ Յիսուս օրհնում է մանուկներին
- Ժ. 52ա Յակոբոսի և Յովհաննէսի սօր խնդրանքը
- Ժա. 53ա Երիբովի երկու կողերի բժշկումը
- Ժբ. 53բ Յիսուսի մուտքը Երուսաղէմ
- Ժգ. 70ա Աղօթք Գեթսեմանիում
- Ժդ. 71ա Յիսուսի մատուցութիւնը և ձերբակալութիւնը
- Ժե. 73ա Պետրոսի ուրացումները
- Ժզ. 73բ Յիսուս Պիղատոսի առաջ
- Ժէ. 74ա Յիսուսի դատաւարատումը մահուան
- Ժը. 74բ (Պիղատոս) անեալ գշո:ր լուաց օձնան անաջի ժողովրդեանն
- Ժր. 75ա. Զինուորների ծաղրը և նախատիւնը
- Ի. Յիսուսի խաչելութիւնը

- Խա. Եւ եղին ի վերայ գլխոյ նորա... թէ այս է Յիսուս թագաւոր հրէիցն:
- Իբ. 78բ Մարկոս անտարանիչ
- Իգ. 82բ Քարոզչութեան սկիզբը Գալիլիայում
- Իդ. 82բ Բորոսի բժշկումը
- Իե. 90ա Փոքրիկի խաղաղեցումը
- Իէ. 96բ Յիսուս քաչում է ծովի վրայով
- Իը. 98բ Խուլ-համրի բժշկումը
- Իր. 104բ Լուսնոտ երեխայի բժշկումը և 107ա Լարուստ մարդը
- Լա. 109բ Կոյր Բարտիմէոսի բժշկումը
- Լբ. 110բ Յիսուսի մուտքը Երուսաղէմ
- Լգ. 111բ Թզննու դասը, հալատ և աղօթք
- Լդ. 113բ Կապարին տրուելիք տուրքը
- Լե 119ա Օձում Բերսանիայում
- Լզ 119բ Զատիկի ընթրիքի նախապատրաստութիւն
- Լկ. 125բ Յիսուսի խաչելութիւնը
- Լը 127ա Յիսուսի թաղումը
- Լթ. 128բ Գովհաս անտարանիչ
- Խ. 130ա Յովհաննէս Մկրտչի ծննդեան ատումը
- Խա. 131ա Յիսուսի ծննդեան ատումը
- Խբ. 131բ Մարիամի այցելութիւնը Եղիսարէին
- Խգ. 136ա Սիմէոն ձերմու մարգարէացումը և օրհնութիւնը
- Խդ. 140բ Յիսուսի փորձութիւնը անապատում
- Խե. 141բ Յիսուս Եւզաբէթում
- Խզ. 145ա Անդամալոյծի բժշկումը.
- Խէ. 147բ Չորացած ձեռքի բժշկումը
- Խը 151բ Այի կնոջ որդու յարութիւնը
- Խր. 153ա Մեղաւոր կնոջ հաւատը
- Մ. 158բ Յարոսի աղջկայ յարութիւնը և տեղափոխումը կնոջ բժշկումը Աղօթքի գօրութիւնը
- Մա. 167բ Համրի բժշկումը
- Մբ 176ա Կուչ եկած կնոջ բժշկումը շարքօրով
- Մգ. 178ա Զրգողով հիւանդի բժշկումը շարքօրով
- Մդ. 183ա Անիրա տնտեսի առակը
- Մե. 183ա (Երկրորդ տնտեսը)
- Մզ. 186ա Տասը բորոտների մաքրուելը
- Մէ. 190բ Յիսուս և Զաբէոս մարտապետը
- Մը. 202բ Պետրոսի ուրացումները
- Մր. 204ա Յիսուս Լերովիլէսի առաջ
- Կ. 207ա Լմանառուի ճամբորդները
- Կա. 210բ Յովհաննէս անտարանիչ
- Կբ. 214ա Կանայի հարսանիքը
- Կգ. 210ա Սամարացի կինը
- Կդ. 222բ Պրոքատիկէի առաջանի անդամալոյծի բժշկումը
- Կե. 236ա Ի ծնէ կոյրի բժշկումը
- Կզ. 243ա Գազարոսի յարութիւնը
- Կէ. 249ա Ոսկույտ


Ա. Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



Վեճափառի Սպետարամի կազմի առաջին կողը



Ստանդը իր հարածատների հետ. էջ 5ա
Մատենադարան, ձև. № 10780



Սուրբ Երրորդությունը Արքանամի տանը. էջ 5բ



Ամիրյան տնտեսի արավեր (Էջ 188ա)



Յիսուսի մատնութիւնը և ձերբակալութիւնը (Էջ 71ա)



Յիսուսի պայծառակերպութիւնը (Էջ 44բ)




Կանաչի հարսանիքը (Էջ 214ա)




Մատենադարան. ձեռ. № 6201, 2-րդ
ավետարանիչներ




Մատենադարան. ձեռ. № 10780
Մարկոս ավետարանիչ



Մատենադարան, ձև. № 6201, Ավետարան,



1088 թ. ստաֆին երկու խորանները



Ա. ՀԱՏԻՑՅԱՆ

ՍՈՒՐԲ ԿՅՈՒՐԵՂ ՀԱՅՐԱՊԵՏ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻ
(315—386)

ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Սուրբ Կյուրեղ հայրապետ Երուսաղեմացին ընդհանրական եկեղեցու «եքկլուսասան վարդապետ»-ներից մեկն է հանդիսանում¹, միաժամանակ պարծանքը Երուսաղեմի պատրիարքական Աթոռին և ամենալուսավորող իր առաքինի, սրբակրոն կյանքով և գրական-մատենագրական վաստակով, աստվածակոխ այդ քաղաքի եպիսկոպոսների մեջ², Հակոբոս Տեառնեղբայր Երուսաղեմի առաջին և «արդար» կոչված եպիսկոպոսից հետո³:

Կյուրեղ Երուսաղեմացու ծննդյան վայրն ու թվականը ստուգապես հայտնի չեն: Սակայն, ըստ վերջին ուսումնասիրությունների, ծնվել է 315 թվականին Երուսաղեմում և կամ նրա մերձակա գյուղերից մեկում⁴:

¹ Չրացոյց, ս. էջմիածին, 1878, էջ 133:
² Վարդ սրբոց, Քնյուր, 1870, էջ 415:
³ Նոր Կտակարան, Մայր Աթոռ, 1975, Գործք Առաքելոց, ԺԵ 13, էջ 363, Գաղտ. Ա 19, էջ 527:
⁴ Johannes Quasten, patrology, հար. 3-րդ, էջ 362. Թորգոմ պատրիարք Գուշակյան, Սուրբք և տոնք, Երուսաղեմ, 1939, էջ 30: Տես նաև Նորայր եպիսկոպոս Գողարյան, Հայ գրողներ, Երուսաղեմ, 1971, էջ 9, որտեղ ս. Կյուրեղ Երուսաղեմացու ծննդյան և մահվան թվականները ցույց են տրվել 350—415 թվականները, ինչ որ հավանական չեն թվում՝ նկատի առնելով նրա գործունեության ժամանակագրությունը:

Կյուրեղ Երուսաղեմացին իր կրթությունը ստացել է Երուսաղեմի քրիստոնեական դպրոցում, որտեղ ուսուցման հիմքը կազմում էին «Երուսաղեմի եկեղեցու Հավատո Հանգանակը և եկեղեցական ավանդությունը»⁵:

Այնուհետև Կյուրեղը իր կրթությունը և ուսումնասիրությունը շարունակել է Պաղեստինյան Կեսարիայի միտրոպոլիտական բարձրագույն դպրոցում, որտեղ ուսման գլխավոր առարկաներն էին Ռիգիենսի (185—253) մեկնողական գործերն ու նրա աստվածաբանական-քրիստոսաբանական տեսությունները, Եվսեբիոս Կեսարացու (263—340) պաշտպանությամբ:

Եվսեբիոսը Ռիգիենսի նշանավոր աշակերտն էր:

Բայց Կյուրեղ Երուսաղեմացին իր մատենագրական ողջ վաստակի մեջ, ինչպես Կապադովկիացի երեք նշանավոր հայրերը՝ ս. Բարսեղ, ս. Գրիգոր Նազիազանցին և ս. Գրիգոր Նյուսացին, գերծ մնաց Ռիգիենսի մի շարք աստվածաբանական-փիլիսոփայական աայթարումներից և նրա անմիջական ազդեցությունից:

⁵ Գրոթ. Ն. Սագարթա, Հույն-Արևելյի հին եկեղեցական աստվածաբանական գիտությունը (IV—V դդ.), ռուսերենից թարգմանեց՝ Արտակ վարդապետ Սմբատյան, Վաղարշապատ, 1910, էջ 54:

Այնուամենայնիվ Որիգինեսի «նշանակությունը անդրովելի է մնում համարյա եկեղեցական այդ շրջանակների համար... հակառակ նրա դեմ մղված կովին, Հռովմի և Ալեքսանդրիայի (399 թ.) ժողովների բանադրանքին...»: Ս. Բարսեղը, ս. Գրիգոր Նազիազանցին, ս. Գրիգոր Նյուսացին և ս. Կյուրեղ Երուսաղեմացին «մանրամասնորեն ուսումնասիրում էին Որիգինեսին... Որիգինեսի մեկնողաբանական աշխատությունների ուսումնասիրությունը նրանց համար նախապատրաստություն էր արիոսականների դեմ կովելու համար»⁶:

Կյուրեղը Երուսաղեմի Մակար Ա հայրապետից (324—333) սարկավագ է ձեռնադրվում, իսկ նրա հաջորդ Մաքսիմոս Բ Խոստովանողից (333—348)՝ քահանա 335 թվականին և նշանակվում է նրա օգնականն ու փոխանորդը, որպես «վարդապետ վարդապետաց և գլուխ քարոզչաց»:

Ամեն տարի Ջատկի կամ Քրիստոսի Հարության տոնին աշխարհի զանազան կողմերից և տարբեր ազգություններից Երուսաղեմ և Սուրբ Երկիր էր գալիս երկյուղած բարեպաշտությամբ և հավատքով (նորադարձ քրիստոնյաների ծովածավալ մի բազմություն՝ յուխտ և լերկրպագություն աստուածակրիս սրբազան Տեղեաց) և մանավանդ մկրտվելու Հորդանան գետում:

Կյուրեղը նորադարձ այս քրիստոնյաների հոգևոր կրթության և դաստիարակության համար նշանակվել էր ուսուցանող վարդապետ և ամեն տարի Մեծ պահքի 6 շաբաթների ամբողջ շրջանում իր քարոզություններով և դասախոսական հրահանգներով պատրաստում էր նրանց արժանավորապես ընդունելու սուրբ մկրտությունը:

Դաստիարակչական-ուսուցողական այս նպատակով Կյուրեղը կազմել էր սուրբ գրական ընթերցումների որոշ բնաբանների մեկնություններով կրոնաշունչ քարոզությունների մի ժողովածու՝ նվիրված քրիստոնեական հավատքի և վարդապետության լուսաբանմանը և բացատրմանը, ինչպես նաև մկրտության խորհրդի նշանակության և հոգևոր կարևորության մասին:

Այդ ձեռնարկը ծանոթ է Յաղագս Երախայից և կամ Կոչումն Ընծայութեան անունով, հունարենը՝ Կատիքիսիս, այսինքն «Կրթություն մկրտելի անձանց» կամ «Հրահանգ երախայից մկրտելոց»։ «Երախա» բառը այստեղ գործածվում է չմկրտված,

«անկնունք» իմաստով, երախա, որը «մեծահասակ պիտի մկրտվի»⁸:

«Կոչումն Ընծայութեան» գրքի հայերեն թարգմանության տպագրության և հոգևոր մեծ նշանակության մասին կխոսվի հանգամանորեն ստորև: «Այս առթիվ Կյուրեղ Երուսաղեմացիի խոսած քարոզները քրիստոնեական վարդապետության սքանչելի սկզբունքները կպարունակեն»⁹:

«IV դարի Երուսաղեմի եպիսկոպոսների մեջ միայն Կյուրեղը վայելում է եկեղեցական գրողի համբավ», որպես «վարդապետ եկեղեցույ», քրիստոնեական վարդապետության նվիրված իր այդ «սքանչելի, բովանդակալից գրվածքների և դասախոսությունների նշանավոր շարքի համար»¹⁰:

348 թվականին Կյուրեղ Երուսաղեմացին ընտրվում է Երուսաղեմի Աթոռի եպիսկոպոս: Նա իր եպիսկոպոսությունը ընդունում է Պաղեստինյան Կեսարիայի իր ժամանակին մեծ աղմուկ հանած կիսարիոսական Ակակիոս միտրոպոլիտից:

Ակակիոսը «եկեղեցական պատմության հայր» նշանավոր Եվսեբիոս Կեսարացու աշակերտն էր: Նա «արևելյան եպիսկոպոսների մեջ ամենաաչքի ընկնող եկեղեցական քաղաքագետն էր, որը Կոստանդկայսի օրով (337—360) հաղթական կերպով Նիկիայի Հավատո Հանգանակի որոշումներին դիմադրեց»:

Ակակիոսի և նրա կուսակիցների «գործունեությունը, ուղղված՝ ուղղափառ հավատո պաշտպանության դեմ», անկասկած խիստ վնասում էր նաև Կյուրեղ Երուսաղեմացու գործունեությանը¹¹:

Ակակիոսի նման կասկածելի և ուղղափառության թշնամի միտրոպոլիտից Երուսաղեմի Աթոռի վրա եպիսկոպոս ձեռնադրվելուց հետո Կյուրեղի անձի և եպիսկոպոսության դեմ մեծ աղմուկ է բարձրանում եկեղեցու ծոցում: Ոմանք Կյուրեղին մեղադրում են այն բանի համար, որ իբրև Երուսաղեմի եպիսկոպոսությունը, որը ենթակա էր Կեսարիայի միտրոպոլիտության, հետևաբար և Ակակիոսին, ձեռք է բերել որոշ զիջումներ անելով արիոսականներին:

Եկեղեցական պատմիչներ Սոկրատեսն ու Սոզոմենն ավելի առաջ են գնում և փորձում են հավաստել, որ Կյուրեղի նախորդ Մաքսիմոս Բ Պատրիարքը Երուսաղեմի, աթոռագրկվեց և իր մեկ աչքը կորցրեց նույն Ակակիոսի կողմից, իր ուղղափառ

⁶ Նույնը, էջ 37—59:

⁷ Առձեռն բառարան Հայկազնեան լեզուի, երկրորդ տպագրություն, Վենետիկ, 1865, էջ 311:

⁸ Նույնը, էջ 265:

⁹ Թորգոմ պատրիարք Գուշակյան, նույնը, էջ 31:

¹⁰ Quasten, նույնը, էջ 362:

¹¹ Ն. Սագարդա, նույնը, էջ 45:

դավանության համար, և Կյուրեղը առաջ քաշվեց որպես արիոսամիտ եպիսկոպոս¹²։ Բայց այս մեղադրանքը Կյուրեղի դեմ հերքվել է եկեղեցական պատմության մի այլ պատմիչի՝ Թեոփիլոսի կողմից և 381 թվականին Կ. Պոլսի Տիեզերական ժողովի Միևնոական նամակների միջոցով։

Իրողությունն այն է, որ Կյուրեղի եպիսկոպոս ձեռնադրվելուց անմիջապես հետո բուն պաշար է ծավալվում նրա և Ակակիոսի միջև, որը ակնբախ նախանձով էր լցվել Կյուրեղի դեմ։

Այս բոլորից հետո արիոսականները Ակակիոսի գլխավորությամբ ուժգին պաշար են ծավալում Կյուրեղի դեմ որպես Նիկիական Հանգանակի մեծագույն պաշտպանի և ախույանի¹³։

Այս պաշարի անմիջական հետևանքը այն է լինում, որ Կյուրեղը Ակակիոսի և արիոսականների հալածանքների պատճառով երեք անգամ արտագրկվում է և արտրվում, ինչպես էր պարագան նրա բարեկամ և ժամանակակից Ալեքսանդրիայի ս. Աքանաս Հայրապետի։

IV—V դարերում արիոսականների և այլ հերետիկոսների դեմ անգիջող և բուն պաշար էր մղում բնդհանրական եկեղեցին, համուն ուղղափառ հավատի պաշտպանության, ենթարկվելով անեղ փորձությունների, հալածանքների։ Սակայն, բնդհանրական եկեղեցու և ուղղափառ դավանության դեմ մղված հերետիկոսական կատարի պաշարը, նույնիսկ արքունիքի և մի շարք ամբարիշտ կայսրերի ակնբախ և կողմնակա հովանավորությամբ, «չկարողացան ջրատել եկեղեցուն և նա սկսեց լիակատար կյանքով ապրել... Սույն ժամանակի աստվածաբանական երկերը ուղեցույց են ծառայում քրիստոնեության հաջորդ սերունդների համար։ Նրանց մեծ հեղինակները, որոնք հավատացյալներին անբնարտության մեջ էին կրթում, գլխավորապես «եկեղեցու հայրեր» անունը ստացան։ Նրանց աստվածաբանական աշխատանքների եզրակացությանց վերա էր հիմնվում մերձակա շրջանի աստվածաբանական սիրտը և մինչև այսօր դրանցով է ապրում» եկեղեցին¹⁴։

Կյուրեղ Երուսաղեմացին առաջին անգամ արտագրկվեց 357 թվականին Երուսաղեմում գումարված արիոսական մի խառնածողովի կողմից և ապաստան գրտավ Տարսուսում։ Հաջորդ տարին, սակայն, Սելևկիայի 150 եպիսկոպոսների ժո-

ղովը նրան վերահաստատեց իր Աթոռի գրա։

360-ին Ակակիոս միարոպոլիտին հաջողվում է մեքենայություններով դարձյալ Կյուրեղին շնորհագրկել։ 362-ին Հուլիանոս Ռուսացողը թույլ է տալիս Կյուրեղին վերադառնալ իր Աթոռը՝ Երուսաղեմ, որպեսզի սրվի պաշարը ուղղափառների և արիոսականների միջև։ «Հուլիանոսը կամենում էր եկեղեցին թողնել ներքին երկպառակությունների մեջ, որպեսզի ինքն իրեն քարոս բանդ լինի այն, և այդ պատճառով էլ նա կանչեց բոլոր արքայված ուղղափառ եպիսկոպոսներին¹⁵», այդ թվում նաև Կյուրեղին։

Ս. Կյուրեղ հայրապետը Հուլիանոս Ռուսացողի միջոցով արքայից Երուսաղեմ վերադառնալուց հետո, ծանր և սպառիչ փորձությունների ենթարկվեց. «Ան ականատես եղավ Երուսաղեմի մեջ Հուլիանոս Ռուսացողի հրեից տանարը վերաշինելու անմիտ ձեռնարկին¹⁶»։

Ամբարիշտ Հուլիանոսը վիրավորելով շարածոթեն քրիստոնյաների զգացմունքները, իր պաշտպանության տակ վերցրեց Երուսաղեմի հրեաներին։ Նա փորձեց Երուսաղեմում վերականգնել հրեաների տանարը, որը 70 թվականին կործանել և այրել էր Տիտոս զորավարը, բայց Քրիստոսի կանխասացության¹⁷։

Ի հեճուկս քրիստոնեության, Երուսաղեմում հրեից տանարը վերականգնելու Հուլիանոս Ռուսացողի չար դիտավորությունը բարեբախտաբար գլուխ չեղավ։ Նա 263-ին արշավանք կազմակերպեց դեպի արևելք և արշավանքի ժամանակ սպանվեց։

Եկեղեցին այդ դեպքը գնահատեց որպես աստվածային պատիժ ամբարիշտ կայսրի շարագործությունների համար։

Դժբախտաբար, սակայն, հալածանքները ուղղափառ եպիսկոպոսների դեմ շարունակվեցին նաև հաջորդ կայսրերի՝ Վալենտիանոսի (364—374) և, մասնավոր, արիոսական Վաղեսի ժամանակ (364—378), որը հրամայեց կրկին արքայից Հուլիանոսի օրով իրենց Աթոռները վերադարձնել ուղղափառ եպիսկոպոսներին. «Գրիգոր Նյուսացին ենթարկվում է հալածանքի, Աքանասն էլ ստիպված է լինում կրկին փախչել կայսրի հետապնդումներից ազատվելու համար։ Իսկ Բարսեղ Աեսարա-

¹² Նրվանը Տեր-Մինասյանց, Ընդհանուր եկեղեցական պատմություն, ս. Էջմիածին, 1908, էջ 266:

¹³ Թորոզոս պատրիարք Գուշակյան, նույնը, էջ 30:

¹⁴ Նոր Առակյաբան, նույնը, Մասք., էջ 71—72, Մարկ., էջ 135—137, Գով., էջ 255, 230—233: Բասարյան ս. Գրոց, Կ. Պոլիս, 1881, էջ 533:

¹² Quasten, նույնը, էջ 362:

¹³ Նույնը, էջ 362:

¹⁴ Գրոց. Ն. Ասգարյան, նույնը, էջ 3—4:

ցին կայսրին անձամբ տեսնելուց հետո պահում է իր դիրքը¹⁶:

367-ին կրկին անգամ աքսորվում է Անկա. Կյուրեղը, «որպես հերետիկոս, հեթանոս և պետության թշնամի, խռովարար և մոլորեցուցիչ»: Կյուրեղը աքսորական է մնում 10 տարի, մինչև ամբարիշտ կայսրի հակաբռնամահ լինելը, 378 թվականը:

Ս. Կյուրեղ Երուսաղեմացին այնուհետև 378—386 թվականներին համեմատաբար ավելի խաղաղ ժամանակաշրջանում հովվում է իր հոտը, շարունակում է պայծառացնել Երուսաղեմի պատմական Աթոռը, փրժամանակ բուռն և անտեղիտալի պայքար մղում արիոսականների դեմ:

Ս. Կյուրեղ Երուսաղեմացին 381 թվականին, որպես ընդհանրական եկեղեցու մեծ վարդապետ, Վ. պոլսում 150 եպիսկոպոսների հետ մասնակցում է երկրորդ Տիեզերական ժողովին, ուր դատապարտվում են Վ. Պոլսի Մակեդոն Պատրիարքը, որպես հոգեմարտ վարդապետության ներկայացուցիչ, և նրա 36 համախոհ եպիսկոպոսները:

Թեոդոս Ա. (Մեծն) կայսրի օրով (379—395) մի որոշ ժամանակ Նիկիական Հանգանակի շուրջ և այլ դավանաբանական վեճերը ավարտվում են: «Նիկիական Հանգանակի Երրորդության վարդապետությունը ու քրիստոնեությունը միևնույնն են համարվում: Ով այս չի ընդունում, հեթանոս է նա, թե հերետիկոս, միևնույն է, նա զրկվում է բոլոր իրավունքներից: Յուրաքանչյուր ոք պետության մեջ պետք է ունենա նույն ուղղափառ հավատքը... Բոլոր մնացածները հերետիկոս են և արժանի աստվածային և մարդկային պատժի»¹⁷:

Պետական այս նոր քաղաքականության շնորհիվ ուղղափառ եպիսկոպոսներին են վերադարձվում արիոսականների կողմից հափշտակված եկեղեցիները և արգելվում են հերետիկոսական գումարումները:

Այս պայմանների մեջ ուղղափառ եկեղեցին Թեոդոսի օրով մի որոշ ժամանակ ապրում է խաղաղության մեջ: Վերանում են ներքին վեճերը: Եկեղեցին իր վերքերն է բուժում: Վերականգնվում են ուղղափառությունը և եկեղեցական միությունը, մինչև V դարի առաջին քառորդը, երբ վերսկսվում են դարձյալ դավանաբանական վեճերը էլ ավելի մեծ թափով:

386 թվականի մարտի 18-ին մահանում է Երուսաղեմի եկեղեցու արդյունաշատ և առաքինի մեծ հայրապետը՝ ս. Կյուրեղ Երուսաղեմացին: Նա շուրջ 38 տարի (348—

386) եղավ եպիսկոպոս, 20 տարի մնաց Երուսաղեմի Աթոռի վրա, 18 տարի անցկացրեց աքսորի մեջ, բայց միշտ ապրեց եկեղեցու ուղղափառ հավատքի պաշտպանության հաղթանակի հույսով:

Մեր եկեղեցին տարին երկու անգամ է նշում ս. Կյուրեղ հայրապետի տոնը: Առաջին տոնը՝ փետրվարի 18-ին²⁰, և երկրորդը՝ հոկտեմբերի 28-ին, «Սրբոց երկուսուսանից վարդապետացն» տոնի օրը²¹:

ՍՈՒՐԲ ԿՅՈՒՐԵՂ ՀԱՅՐԱՊԵՏ
ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑՈՒ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ
ՎԱՍՍԱԿԸ

Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացին չի թողել բազմաժանր, հարուստ մատենագրական վաստակ, ինչպես թողել է Ա. Սթանաս, ս. Բարսեղ, ս. Գրիգոր Նազիազանցի, ս. Գրիգոր Նյուսացի, ս. Հովհաննես Ոսկեբերան և այլ մեծավաստակ հայրապետները:

Այնուամենայնիվ ս. Կյուրեղ Երուսաղեմացու թողած մատենագրական ժառանգությունը գնահատվում է «քրիստոնեական վաղ շրջանի եկեղեցական գրականության ամենաթանկագին գանձերը»²²:

Ս. Կյուրեղ Երուսաղեմացու մատենագրական վաստակի մեջ կարևոր տեղ է գրավում նրա՝ քրիստոնեական վարդապետությանը նվիրված 24 ճառերի կամ քարոզների ժողովածուն, որը Ե դարում մեր թարգմանիչ վարդապետների կողմից կոչվել է Կոչումն ընծայութեան կամ Յաղագս երախայից գիրք:

Ս. Կյուրեղ Երուսաղեմացին այդ քարոզներն արտասանել է 347—348 թվականներին, երբ դեռ պարզ քահանա քարոզիչ էր Երուսաղեմի ս: Հարության հոշակավոր տաճարում, Մեծ պահոց վեց շաբաթների ընթացքում, «անկնունք», չմկրտված նորադարձ քրիստոնյաներին մկրտության պատրաստելու համար, Զատկի ճրագալույցին:

Այս քարոզների հունարեն թևագրերի մի շարք ձեռագրերի հիշատակություններում վկայվում է այն մասին, որ այդ քարոզները լսող գիտուն կամ կրթված ունկնդիրներից մեկը սղագրել է դրանք և հասցրել մեզ²³:

Կյուրեղ Երուսաղեմացու քարոզների այդ ժողովածուն բաժանվում է երկու խմբի.

Այդ քարոզների Ա խումբը բաղկանում է քրիստոնեական հիմնական վարդապե-

¹⁶ Երվանդ Տեր-Մինասյանց, նույնը, էջ 268:
¹⁷ Նույնը, էջ 278—274:

²⁰ Օրացույց, ս. Էջմիածին, 1978, էջ 86:
²¹ Նույնը, էջ 133:
²² Quasten, նույնը, էջ 363:
²³ Նույնը, էջ 363:

տության բացատրությանը կամ մեկնությանը նվիրված նախապատրաստական 19 բարոզներից, որոնք ուղղված են Հատկի նրագալուցին մկրտություն ընդունողներին, իսկ Բ խումբը՝ 5 բարոզներից, որոնցում բացատրվում են երկյուղով և հավատքով ու վավերականորեն մկրտություն, դրոշմ, ս. Հաղորդություն և այլ խորհուրդներ կատարելու կարգն ու ձևը:

Ս. Կյուրեղ հայրապետը, որպես «վարդապետ եկեղեցույ», առաջին խմբի բարոզներում հասկանալի բացատրություններով, ս. գրական հատվածների ուղղափառ հասկացողությանը և մեկնությանը խոսում է մկրտության պատրաստվող և ընդհանրապես մեթանոսությունից քրիստոնյա դարձած նորահավատներին մկրտության խորհրդի հոգևոր, փրկարար նշանակության, այդ առիթի կատարված աղոթքի և ապաշխարության կարևորության, մկրտողի ինքնատիրապետման, կամքի դաստիարակության ու զորացման և ազնիվ այն բոլոր դիտավորությունների մասին, որոնցով առաջնորդված միայն թեկնածուն պետք է մտնենա այդ սրբազան խորհրդին, միաժամանակ խիստ պանելով եկեղեցուց դուրս գտնվողների համար նաև մկրտության խորհրդի գաղտնապահության կանոնը²⁴:

Խորհրդի-*mystère* այս ոգին ներթափանցել է բարոզների ողջ ժողովածուի մեջ:

Մկրտությունն ընդունելուց առաջ Կյուրեղ Երուսաղեմացին թելադրում է նախապատրաստվել շարքերն առաջ այդ խորհրդին, մարով ու հոգով արժանավորապես ընդունելու համար մկրտության շնորհիվ առաջվելիք հոգևոր կամ կրկին վերածննդյան շնորհին ու փառքը, որպես «ժառանգակիցք Քրիստոսի» (Հովմ. Ը 17): Այդ պատճառով թելադրում է նա մի կողմ թողնել բոլոր անձնական հաշիվները, ներել մեր անձնական թշնամիներին, հոգին զորացնել, լուսավորել, սնուցել աստվածաշնչական ընթերցումների ուղղափառ մեկնաբանությամբ:

Շեշտվում է նաև մկրտությունից առաջ ապաշխարության, զղջումի անհրաժեշտությունը, մեղքերի խոստովանությունն ու թողություն հայցելը, աստանային և նրա բազմադիմի փորձություններին դիմազրավելու վճռականությունը:

Ս. Կյուրեղ Երուսաղեմացու՝ մկրտության մասին հրահանգ-ուսուցումը հիմնվում է Պողոս առաքյալի թղթերում նրա գարգաց-

րած և խորացրած մկրտության վարդապետության վրա. «Թէ մենք բոլորս որ մկրտուեցինք Յիսուս Քրիստոսով, նրա մահով է որ մկրտուեցինք: Մկրտութեամբ թաղուեցինք նրա հետ մահով, որպէսզի, ինչպէս որ Քրիստոս մահնելուց յարուիսն առաւ Հօր փառքով, նոյնպէս և մենք բայլենք նոր կեանքով. որովհետև, եթէ նրա մահուան նմանութեամբ տնկակից եղանք նրան, պիտի լինենք նաև նրա յարութեան նմանութեամբ»²⁵:

Վերոհիշյալ բարոզ-դասախոսություններում Կյուրեղ Երուսաղեմացին բացատրում է նաև քրիստոնեական ուղղափառ վարդապետությունը, հավատքի բնույթն ու ծագումը, ըստ Երուսաղեմի եկեղեցու «Հաւատոյ Հանգանակի»²⁶:

Ժողովածուի 25 բարոզների 19—23 դասախոսությունները դարձյալ խոսում են մասնավոր կարևորությանը Մկրտության, Գրոշմի, Հաղորդության խորհուրդների և ս. պատարագի արարողության մասին:

Ս. Կյուրեղ Երուսաղեմացու այլն բարոզների մեջ ակնարկություններ կան նաև Մանհի մոլորության մասին: Մանհի հերետիկոսական շարժումը սկսել էր այլն բարոզներից 70 տարի առաջ: Կյուրեղ Երուսաղեմացու «հոգևոր գործունեության ամենն փայլուն և արդյունավոր կողմերն օին եղավ ի քրիստոնեություն դարձր բազմերսմ հեթանոսներու, որոնք իր ձեռքն կրկնուեին քրիստոնեությունը»²⁷:

Կյուրեղ Երուսաղեմացին բարոզների մեջ իր ուսուցման հիմքն է դարձնում Երուսաղեմի եկեղեցու Հավատո Հանգանակը, որի «լուրսբանչյուր խոսքը կարելի է հաստատել ս. Գրքով: Ս. Գրքին համեմատ լինելը բավական է: ...Վարդապետության առանձին սկզբունքների մեջ նա խելացի փաստեր բերելուց չի հրաժարվում, սակայն, նա չի տալիս այն, ինչ որ կարող էր հիշեցնել վարդապետության սխառներ, և չի ցույց տալիս նույն իսկ ձգտում դեպի այդ: Նրա կատեխիզական (քրիստոնեական ուսուցում, հրահանգ) վարդապետությանց մեջ չի կարելի որևէ փոխափայական դպրոցի ազդեցության ամենափոքրիկ հետք անգամ գտնել: Նա ամեն տեղ և ամենուրեք մնում է ճշմարիտ եկեղեցական գրող, որ հետևում է եկեղեցական ալիանության...: Ս. Կյուրեղ Երուսաղեմացու հրահանգները ան-

²⁴ Նույնը, էջ 363:

²⁵ Նոր Կտակարան, Հովմ., էջ 421, տես նաև Կողոս. Բ 10—12, էջ 543—544, Հովն. Ս. 12—13, էջ 248, Հովն. Գ 35, էջ 256:

²⁶ Quasten, նույնը, էջ 363—364:

²⁷ Քոթոն պատրիարք Գուշակյան, նույնը, էջ 31:

գնահատելի փաստաթղթեր են ուղղափառ դավանության²⁶։

Կյուրեղ Երուսաղեմացու սույն քարոզների բովանդակության մասին ավելի ընդարձակ տեղեկություններ ստանալու համար տես Quasten, նույնը, էջ 363—366։

Կյուրեղ Երուսաղեմացու մատենագրական վաստակի մեջ կարևոր տեղ է գրավում նաև նրա **Թուղթը** Կոստանդ կայսրին (337—360) ուղղյալ, Երուսաղեմում ս. Խաչի երևման «աստվածատեսական իրողության ազդարարության առիթով»։

351 թվականի մայիսի 7-ին Երուսաղեմում, Կյուրեղ հայրապետի օրով, «տեղի ունեցավ սուրբ Խաչին հրաշալի երևումը, որուն համար ծանուցանող նամակ մը ուղեց Կոստանդ կայսեր»²⁷։

Կոստանդը՝ Մեծն Կոստանդիանոս կայսրի որդին և հաջորդը, կիսարիտսական էր։ Բայց Խաչի երևման հրաշքի առիթով Կյուրեղ հայրապետը նրան գրեց այդ թուղթը, նրան սիրաշահելու և «նրան պատվելով աստվածասեր և բարեպաշտ թագաւոր» կոչումներով, որպեսզի մեղմացնի նրա հակառակությունը ուղղափառների դեմ։

Կյուրեղ հայրապետի սույն նամակը գեղեցկորեն նկարագրում է Խաչի երևման դեպքը։ Այդ դեպքը «հիշատակությունն է պարզապես խաչի նշանին երկնից վրա հրաշալի երևումին, որ 351-ին տեղի ունեցավ Երուսաղեմի վրա Գողգոթայեն մինչև Ջիթենյաց լեռ տարածված խաչանշան պայծառությամբ մը, որ ավելի փայլուն էր քան արևուն լույսը։ Չայն տեսան ամենքը, ժողովուրդ և կղեր, որոնք եկեղեցի փութալով գոհություն մատուցին Աստուծո, իրենց պարզևված այս հրաշալի մխիթարության համար։ Երուսաղեմի պատրիարքը, Կյուրեղ, այս առթիվ հատուկ թուղթ մը գրեց Կոստանդնուպոլսո Կոստանդ կայսեր, որ դատապարտված արիտսականությունը վերականգնելով եկեղեցվո ներքին խաղաղության դեմ մեծ վտանգ մը կ'պատրաստեր, և ողորակական քաղցր ոճով բայց խստադատ նկատողությամբ մատնանիշ կ'ըներ անոր՝ իր հոր Մեծն Կոստանդիանոսի դավանու-

թյան ուղղափառ նշարտությունը, մինևույն ատեն այս երևումն ալ ապացույց մը հանել փորձելով այդ մասին»։

Նամակը ավարտվում է բարեմաղթություններով, որ Աստված կայսրին շնորհի քաջաողոջություն, նրան պահի-պահականի «գորությանը և շնորհոք, և է՛լ ավելի մեծամեծ բարեպաշտության գեղեցիկ գործերով և զարդարի նրա թագավորական հարազատ թագը՝ զավակների բազմացումով, և ի պարծանս քրիստոնեից և համայն աշխարհի, երկար և բազում տարիներ խաղաղությամբ պահի քեզ ամբողջ ընտանիքովը։ Եվ ամեն մասամբ զարդարի քեզ վարքով, եկեղեցիների հանդեպ քաղցրությամբ և կայսերական իշխանության վալելույ մարդասիրությամբ և առատապարզ բարեպաշտությամբ, երկարամյա անդորրությամբ... ով աստվածասեր օգոստափառ թագավոր»²⁸։

Բացի ս. Կյուրեղի՝ կայսրին ուղղած սույն պաշտոնական նամակից, 351 թվականին Երուսաղեմում գտնվող ուխտավորները, որոնք տեսել էին երկցող Խաչը, իրենց երկրները վերադառնալով պատմեցին այդ հրաշքի մասին։

Ս. Կյուրեղ հայրապետի մատենագրական վաստակում հիշվում են նաև ոչ հարազատ այլ ճառեր, ներբողյաններ, որոնցից հասել են միայն հատվածներ։


Ս. Կյուրեղ հայրապետի աստվածաբանական-մեկնողական աշխատությունների մեջ, և հիմնականում «Կոչումն ընծայութեան» գրքում նրա շոշափած քրիստոնեության հավատքի, ս. Հոգու վարդապետության, մկրտության, ս. Հաղորդության հարցերի մասին ավելի լայնորեն հետաքրքրվողները կարող են դիմել Quasten, էջ 369—377։

(Ծարումակելի)

²⁶ Մաշոց գիրք, Հայց. եկեղեցու, երկրորդ տպագրություն, ի վաղարշապատ, ի տպարանի սրբոյ կաթողիկէ Էջմիածնի, 1872, էջ 368, Թուղթ Կիրոլի եպիսկոպոսի Երուսաղեմայ՝ առ Կոստանդիանոս թագաւորն, վասն Երևելոյ նշանի սրբոյ Խաչին յերկնից։ «Թուղթ»-ի թարգմանությունը տես «Էջմիածին» ամսագիր, 1971, № Ե, էջ 80—82։

²⁷ Ն. Սագարդա, նույնը, էջ 54։

²⁸ Թորգոմ պատրիարք Գուշակյան, նույնը, էջ 81։



ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՄԱՐ ԶՈՂՎԱԾ ՀԱՅ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՅՈՒՄԸ

Ապրիլի 15-ին, շաբաթ օրը, ժամը 15-ին, Փարիզի Պեր Լաշեզ գերեզմանատան մեջ, խանդավառ մթնոլորտում, արժանավայել շուքով և փառավոր հանդիսությամբ կատարվում է Ֆրանսիայի համար զոհված մին և նոր հայ մարտիկների հիշատակին նվիրված հուշարձան-կոթողի բացումը, որին նախագահում է հայրապետական պատվիրակ տ. Սերոյիս արքեպ. Մանուկյանը:

Հանդիսության սկզբին հանրապետական հետևակազորի 5-րդ զորագնդի նվազախումբը կատարում է Սովետական Հայաստանի և Ֆրանսիայի պետական հիմները՝ ստեղծելով խանդավառ և վեհ մթնոլորտ:

Նույն ժամին Պեր Լաշեզ է բերվում Փարիզի Հաղթական կամարի անշեջ բոցից վառված մի ջահ, մինչ նույն պահին ամբիոն էր բարձրանում Ֆրանսիական Ծերակույտի նախագահ և պետության երկրորդ անձնավորությունը՝ Ալեն Փոսկերը, և տեղ զբաղում պաշտոնական ամբիոնի վրա, ուր հրավիրված էին նաև հայ կաթողիկե հասույների ժողովրդապետ տ. Գրիգոր եպ. Կապրոյանը, Մուկվայի ուսուցչ պատրիարքարանի ներկայացուցիչ Պիեր Լուի Կախուպուր, Էկեղեցական, աշխարհական, զինվորական բարձրաստիճան անձնավորություններ, Ֆրանսիացի և օտար նախկին մարտիկների կազմակերպություն-

ների ներկայացուցիչներ և այլ պաշտոնական անձինք:

Հանդիսության բացումը հուզիչ ճառով կատարում է հուշարձանի կառուցման հանձնախմբի նախագահ Նուրիան Ֆրենկյանը: Հուշարձանը ծածկվել էր Ֆրանսիական դրոշակով:

Այնուհետև Ծերակույտի մեծահարգ նախագահ Ալեն Փոսկերը իջեցնում է հուշարձանը ծածկող Ֆրանսիական դրոշակը և կատարում հայկական ճարտարապետական ոճով կառուցված հուշարձան-կոթողի բացումը:

Բոլոր ներկաների հիացական արտահայտությունների ներքո բարձրանում է հուշարձանը իր պարզ վեհության մեջ, որի վրա Ֆրանսերեն և հայերեն լեզուներով արձանագրվել էր.

«Ի յիշատակ Ֆրանսիայի համար մեռած հայերի, 1914-1918—1939-1945 և ի յիշատակ հայ հերոս մարտիկներին, դիմադրականներին, նահատակներին»:

Այնուհետև նախագահ Ալեն Փոսկերը հանդես է գալիս հանդիսությանը նվիրված և զոհված հայ մարտիկների հիշատակը ոգեկոչող հուզիչ ճառով:

Հարգելի նախագահին իր խոսքի մեջ նախ իր խորագգաց շնորհակալությունն է հայտնում իրեն եղած այս հրավերի համար և ապա սրտագին շնորհավորում հուշար-

ծանր կառուցումը կազմակերպող հանձնա-
 ժողովի անդամներին, «որոնք պատեհու-
 թյունը ընծայեցին իրեն ոգեկոչելու ողբեր-
 գական, բայց փառահեղ այն էջերը, գրված
 այն բազմաթիվ հայ հին մարտիկների ար-
 յունով, մարտիկներ, որոնք պայքարեցին
 Ֆրանսիայի և նրա դաշնակիցների կողքին
 բոլոր ռազմաճակատներում և ընկան հա-
 նուն ժողովուրդների ազատության դատին:

Իմ հայրենակիցներից շատ քչերն են
 տեղյակ այն կարևոր նպատակին, որ Հա-
 յաստանը բերել է քրիստոնեական քաղա-
 քակրթության ու նրա պատմության:

Քիչ ֆրանսիացիներ գիտեն կարևորու-
 թյունը այն մասնակցության, որ հայերը
 ցույց տվեցին առաջին համաշխարհային
 պատերազմի ընթացքում: 50.000 հայեր
 ընկան պատվո դաշտում, դաշնակիցների
 դրոշի տակ և ապա հայկական դրոշակի
 ներքո: Եվ եթե նկատի առնենք զինվորա-
 զորված ազգաբնակչության նշանակու-
 թյունը, ապա Ֆրանսիայի և Սերբիայի հետ
 Հայաստանը կարող ենք դասել այն եր-
 կրների թվին, որոնք ամենամեծ զոհողու-
 թյունները կատարեցին դաշնակիցների դա-
 տի համար:

Այսպես, 1914—1918 թվականներին Հա-
 յաստանի հերոսները իրենց փառավոր ա-
 նունները արձանագրեցին բազմաթիվ նա-
 կատամարտերում, Վերտեռնի դաշտում,
 ինչպես և Սելանիկում, Դարդանեղում և
 այլուր:

1939—1945 թվականներին մեր հայ եղ-
 բայրները մեր կողքին էին՝ պաշտպանելու
 համար իրենց երկրորդ հայրենիքը, դիմա-
 դրության շարժման մեջ, Բիր-Հաքիմի, Էլ-
 Ալամեի կռիվներում և Երիթիայում:

Հանուն Ֆրանսիայի, հարգանքով և հու-
 գումով ես այսօր բերում եմ երախտագի-
 տություն բոլոր հայ մարտիկներին, որոնք
 իրենց կյանքը զոհեցին ազատության հաղ-
 թանակի համար:

Ֆրանսիացիներ, մի մոռացեք երբեք եր-
 կու պատերազմների այդ հերոսներին:
 Նրանց, ինչպես նաև մեր զոհված հայրե-
 նակիցների շնորհիվ է, որ դուք մնացիք
 ազատ»:

Այնուհետև Ծերակույտի հարգելի նա-
 խագահը հրապարակում է Ֆրանսիայի
 հանրապետության նախագահ Ժիսկար
 դ'Էպոնեի այս առթիվ ուղարկած հետևյալ
 ուղերձ-պատգամը.

ՊԱՏԳԱՄ

**ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՆԱԽԿԻՆ ՀԱՅ
ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ**

Այս օրերին, երբ Փարիզում բացվում է
 ֆրանսիական բանակի նախկին հայ մար-

տիկների հիշատակին նվիրված սույն հու-
 շարձանը, ես պատիվը ունեմ մատուցելու
 ֆրանսիական ազգի հարգանքը բոլոր այն
 քաջարի զինվորներին, որոնք զահվեցին
 երկու պատերազմների ժամանակ մարտի
 դաշտում, ինչպես նաև դիմադրական շարժ-
 ման տարիներին և կամ համակենտրոնաց-
 ման ճամբարներում: Ֆրանսիայի ծառայու-
 թյան համար առատորեն իրենց թափած
 արյամբ նրանք իրոք արժանի զավակները
 դարձան իրենց երկրորդ հայրենիքի:

Այնուհետև հանդիսավոր իրադրության
 մեջ Ֆրանսիայի հայոց հայրապետական
 պատվիրակի ընդհանուր փոխանորդ տ.
 Գյուտ եպս. Նազգաշյանը ընթերցում է
 Հայոց Հայրապետի 1978 թվականի մարտ
 30 թվակիր ողջույնի և օրհնության հետև-
 յալ գիրը, որն ուղղված էր հուշարձանի
 կառուցման հանձնախմբի նախագահ տիար
 Նուրհան Ֆրենկյանին.

**ՄԵԾԱՀԱՐԳ Պ. ՆՈՒՐՀԱՆ ՖՐԵՆԿՅԱՆԻՆ,
ՆԱԽԱԳԱՀ ՖՐԱՆՍԱՀԱՅ ՀԵՐՈՍՆԵՐՈՒ
ՀՈՒԾԱՐՁԱՆԻ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ**

Փարիզ

Հարգարժան Տիար,

Հայ ժողովուրդի քրիստոնեական հա-
 վատքի երկհազարամյա կեդրոն սուրբ Էջ-
 միածնեն, Մենք՝ Հայրապետը հայ եկեղեց-
 վո, խոր հուզումով համակված, Մեր ող-
 ջույնը և օրհնությունը կառաքելք Փեր Լա-
 շեզի օրհնյալ հողի վրա բարձրացող հու-
 շարձանին, որ պիտի հավերժացնե սուրբ
 հիշատակը բոլոր հայազգի հերոսներուն և
 կամավորներուն, որոնք մարտնչեցան և
 ինկան երկու համաշխարհային պատե-
 րազմներու ընթացքին իրենց ֆրանսացի
 եղբայրներու կողքին, ի պաշտպանություն
 ֆրանսական մեծ հայրենիքի պատվին ու
 ազատության: Անոնց զոհաբերումը հան-
 դիսացավ գերագույն վկայությունը հայերու
 երախտագիտության ասպետական Ֆրան-
 սայի հանդեպ, որ առաջին համաշխարհա-
 յին պատերազմեն հետո իր դոկերը լայն
 բացավ ու եղբայրական ապաստան տվավ
 1915-ի ցեղասպանության դժոխքեն փրկ-
 ված բազմահազար դժբախտ հայերուն, ո-
 թոնք այսօր հպարտ են Ֆրանսայի քաղա-
 քացիները ըլլալու, մնալով միաժամանակ
 հավատարիմ հավատացյալները Հայաս-
 տանյաց առաքելական եկեղեցվո:

Թող բարին Աստված միշտ խաղաղ,
 միշտ ազատ ու միշտ լուսաշող պահպանե
 բոլոր փառքերու Ֆրանսան ու իր ազնվա-
 կան ժողովուրդը:

Այս երջանիկ առիթով Մեր հայրական սիրտ ողջույնը կողարկենք Փարիզի հայոց հոգևոր առաջնորդ Սերովբե արքեպիսկոպոսին և Մեր բոլոր հավատացյալ գավակներուն և հատկապես Մեր ջերմագին գնահատանքը և շնորհակալությունը հուշարձանի կառուցման հանձնախումբին, որ Ենծահարգ Նորհան Ֆրենկլանի նախագահության ներքո ծրագրեց և իրականացուց կառուցումը այս հույակապ հուշարձանին:

Հարգանք և օրհնություն բոլոր հայ մարտիկներուն, որոնք մեռան հավերժական Ֆրանսայի համար:

«Աստհետև եղբարք, որ ինչ ճշմարտութեամբ է, որ ինչ պարկեշտութեամբ, որ ինչ արդարութեամբ, որ ինչ սրբութեամբ, որ ինչ սիրով, որ ինչ համբաւ բարեաց, որ ինչ քաջութեամբ, որ ինչ գովութեամբ զայն խորհիջիք: Եւ Աստուած խաղաղութեան և-

դիցի բնդ ձեզ» (Փիլիպ. Գ 8—10): Ամեն:

ՎԱԶԳԷՆ Ա

Կարողիկոս Ամենայն Հայոց


Հայոց Հայրապետի սույն ուղերձի ֆրանսերեն թարգմանությունը ընթերցում է Ֆրեյերիկ Ֆրենկլանը:

Ապա տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, ի գլուխ Փարիզի և շրջակայից հայ հոգևորական դասի, սրտատույ արարողությամբ կատարում է հուշարձանի օրհնությունը:

Արարողության ավարտին հուշարձանի ներքո գետնովում է հայ զինվորների անյունակալը, որը այս առիթով ուղարկել էր Վերդենի ֆրանսիացի արքեպիսկոպոսը:

Հուշարձանի պաշտոնական բացումից և օրհնության արարողությունից հետո, ի պատիվ հյուրերի, Փարիզի 20-րդ թաղամասի քաղաքապետարանում արվում է հյուրասիրություն:





ԷԿՈՒՄԵՆԻԿ

ԿՅԱՆՔ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Սույն թվականի ապրիլի 2—6 օրերին Մոսկվայում, «Ուկրաինա» հյուրանոցի միտերի դահլիճում, տեղի ունեցավ Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի Աշխատանքային կոմիտեի հերթական նստաշրջանը՝ ռուս պրավոսլավ եկեղեցու հրավերով: Ներկա էին հինգ մայրցամաքների շուրջ քսան երկրներից 93 ներկայացուցիչներ, հյուրեր, դիտորդներ, լրագրողներ: Մայր Աթոռի կողմից նստաշրջանին մասնակցում էր Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Հովհաննես Թոփուզյանը:

Նստաշրջանը բացվեց Էկումենիկ աղոթքով: Ներկաներին ողջունեց Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի նախագահ, Լենինգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ Կոնստանտին Կրուտիցկի և Կոլոմնայի միտրոպոլիտ Յուլիանայի կարդաց Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք Ն. Ս. Պիմենի խաղաղության պատգամը՝ ուղղված բոլոր քրիստոնյաներին:

Նստաշրջանի օրակարգում կային բազմաթիվ կարևոր հարցեր: Մեծ հետաքրքրությամբ լսվեց և մտքերի լայն փոխանակության հիմք ծառայեց Սովետական Միության արտաքին գործերի մինիստրության

աշխատակից Յուրի Կ. Նազարկինի զեկուցումը նստաշրջանի գլխավոր թեմայով, այն է՝ «Զինաթափումը համերաշխության լույսի ներքո»: Հանգամանորեն անդրադառնալով զինաթափման սովետա-ամերիկյան բանակցությունների վիճակին և նշտրոնային զեկնքի դեմ աշխարհով մեկ ծավալված բողոքի ելույթներին, զեկուցողը բարձր գնահատեց կրոնական կազմակերպությունների դերը աշխարհի խաղաղության պահպանման գործում: Ծառայությունները նշեցին, որ զինաթափումը հանդիսանում է համայն աշխարհի խաղաղասեր ուժերի առաջնահերթ խնդիրը, և Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսը հույսեր է կապում ՄԱԿ-ի առաջիկա հատուկ նստաշրջանի գումարմանը, որը նվիրվելու է զինաթափման հարցերին:

Նստաշրջանում լսվեցին հաղորդումներ Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի կազմակերպությունների, հրանց տարբեր կոմիտեների, հանձնաժողովների, եկեղեցական ժողովների անցնող վեց ամսվա գործունեության վերաբերյալ, քննարկվեցին Մերձավոր Արևելքի, Հարավային Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի ժողովուրդների սոցիալական, տնտեսական և քաղաքական դրության հետ կապված մի շարք

հրաշալի հարցեր և քննումվեցին համապատասխան բանաձևեր: Լիբանանի դրությանը վերաբերող բանաձևում ասված է, որ Մերձավոր Արևելքում խաղաղությունը մերանաստատանելու համար անհրաժեշտ է իսրայելական զորքերը դուրս բերել քոլոր գրավված շրջաններից, այդ թվում Հարավային Լիբանանից, վերսկսել ժենևի բանակցությունները, հասնել արդարացի խաղաղության պայմանագրի կնքմանը, ապահովելու Եսրայելի սահմանների անվտանգությունը, հարգելով Պաղեստինի արաբ ժողովրդի ազգային ինքնորոշման իրավունքները:

Աշխատանքային կոմիտեն որոշեց՝ սույն թվականի հունիսի 22—27 օրերին Պրա-

չայում գումարել Խաղաղության համաքրիստոնեական 5-րդ համաժողովը՝ «Ատոժու համերաշխության պատգամը—քրիստոնյաները խաղաղության, արդարության և ազատագրության համար» նշանաբանով: Համաժողովին հրավիրվելու են մինչ մայրցամաքների ավելի քան հարյուր երկրների եկեղեցիներից, կրոնական և միջազգային տարրեր կազմակերպություններից շուրջ 500 ներկայացուցիչներ, դիտորդներ, հյուրեր, լրագրողներ:

Ապրիլի 5-ին Ն. Ս. Պիսեն Պատրիարքի նախագահության ներքո տեղի ունեցավ պաշտոնական մաշկերույթ՝ Աշխատանքային կոմիտեի նստաշրջանի մասնակիցների պատվին:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՀԱՄԱԵՎՐՈՊԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Սույն թվականի մարտի 22—29 օրերին Ֆրանսիայի Մոնպելիե քաղաքի մոտակայքում գտնվող Գել գյուղում գումարվել է երիտասարդաց համաեվրոպական քրիստոնեական երկրորդ ժողովը, որին մասնակցել են Արևելյան և Արևմտյան Եվրոպայի 22 երկրներից և Լիբանանից ժամանած շուրջ 200 երիտասարդ պատվիրակներ:

Սույն ժողովին, որպես հայ եկեղեցու ներկայացուցիչ, իր մասնակցությունն է բերել նաև Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդական փոխաևորդ տ. Տիրան վարդապետ Կյուրեղյանը:


Ժողովի աշխատանքներն այնպես են կազմակերպված եղել, որ հնարավորություն է բնծալվել փորձի, ինֆորմացիայի և գաղտփարների լայն փոխանակում կատարելու զանազան միջավայրերից ժամանած անհատների և խմբերի միջև: Այս նպատակի համար կազմված են եղել առանձին, այսպես ասած, **ընտանեկան խմբեր**, որոնք սալրում են մշակութային, քաղաքական ու սոցիալական նույն պայմաններում:

Ժողովը տեղի է ունեցել «փոխել և փոխվել» նշանաբանի տակ: Ժողովի մասնակիցները բաժանված են եղել աշխատանքային չորս խմբերի, որոնցում քննարկվել 16 հետևյալ հարցերը.

- ա. Խաղաղություն և զինաթափում.
- բ. Տնտեսություն և արդարություն.
- գ. Մարդկային իրավունքներ և մարդ լինելու իրավունքը.
- դ. Ոգեկանություն և աշխարհականացում: Ժողովի վերջում միաձայնությամբ քննարկվել և հաստատվել է մի կոչ՝ քննդեմ նեյտրոնային ռումբի: Սույն Կոչով Եվրոպայի երիտասարդ քրիստոնյաները նեյտրոնային ռումբի դեմ բողոքի իրենց ձայնն են միացրել այն բազմաթիվ բողոքի ձայներից, որոնք այժմ լսվում են համայն աշխարհում:

Մարտի 26-ին ժողովի մասնակիցները միասնաբար նշել են Քրիստոսի սուրբ Հարության տոնը: Այդ առթիվ տեղի բողոքականաց եկեղեցում տեղի են ունեցել սրբազան արարողություններ: Նախ օրթոդոքս եկեղեցու ներկայացուցիչները, թվով տասներկու հոգի, կատարել են Էրամենիկ մի արարողություն, որի ընթացքում կատարվել են ընթերցվածներ ս. Գրքից և երգվել հոգևոր երգեր ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն, գերմաներեն, ֆիններեն, սրաբերեն և հայերեն լեզուներով: Ապա բողոքական եկեղեցու ներկայացուցիչները շարունակել են սուրբ Հարության տոնին նվիրված գաղական արարողությունը:





ՀԱՆԳԻՍՏ
Տ. ՀԱԿՈՒՔ ՔԱՀԱՆԱ ԵՐԱՆՈՍՅԱՆԻ
(1904—1978)

Ապրիլի 25-ին վախճանվեց Վարդենիսի ս. Աստվածածին եկեղեցու ծխատեր տ. Հակոբ քահանա Երանոսյանը, որը շուրջ 21 տարի անշահախնդիր նվիրումով ծառայել է իր ժողովրդին և իր եկեղեցուն, սիրված և հարգված բոլորից, որպես ազնիվ ու բարի հովիվ:


Հանգուցյալը ծնվել է 1904 թվականին Վարդենիսում և մանկուց սիրել հոգևոր ապարեզը, սաղմոս ու շարական և իր կյանքը նվիրել եկեղեցու սպասավորության գործին:

1957 թվականին քահանա է ձեռնադրվել տ. Սահակ արքեպիսկոպոսից Երևանի ս. Սարգիս եկեղեցում և ապա պաշտոնավարել իր հայրենական գյուղի եկեղեցում մինչև իր մահը:

Իր նվիրյալ աշխատանքի համար արժանացել է Վեհափառ Հայրապետի օրհնությանն ու գնահատությանը և ստացել քահանայական լակեպիսաչ կրելու իրավունք:

Ապրիլի 27-ին կատարվել է հանգուցյալ տ. Հակոբ քահանայի վերջին օծման և թաղման կարգը՝ ձեռամբ Երևանի ս. Սարգիս եկեղեցու տ. Ռուբեն ավագ քահանա Մարտիրոսյանի և մասնակցությամբ տ. Կարապետ քահանա Գրլեյանի: Տ. Ռուբեն ավ. քահանան իր դամբանական խոսքով վեր է հանում հանգուցյալի ծառայությունները իր եկեղեցուն և ժողովրդին:

Հանգիստ հանգուցյալ տ. Հակոբ քահանայի ոսկորներին:





ԲՈՎԱՆ ԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Հաղորդագրություն	3
Ա. Հ., Պ. Ե.—Համայն Արատանի Պատրիարք-կաթողիկոս Կորին Արքուքյուն Իլիա Երկրորդը Մայր Աթոռում	5
Համատեղ հաղորդագրություն	14
Ա. Հ., Պ. Ե.—Եթովպական ուղղափառ եկեղեցու Պատրիարք Կորին Արքուքյուն Աբբա Թեքլե Հայմանոսը Մայր Աթոռում	16
Ա. Հ.—Հոգեհանգիստ Մայր տաճարում Արամ Ի. Խաչատրյանի մահվան ութօրեքի առիթով	23
ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ—Եկեղեցական բեմ, լուրեր	27
Ա. Հ.—Կուսակրոն քանադական ձեռնադրություն Մայր տաճարում	29
Տ. Կոմիտաս արեղա Հովնանյան	32
Տ. Ավետիս արեղա Մանդալյան	33
Ա. Ս. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ—Ինձափառի Ավետարանը	34
Ա. ՀԱՏԻՏՅԱՆ—Սուրբ Կուրեղ հագրագետ Երուսաղեմացի	52
Ֆրանսիայի համար զոհված հայ մարտիկների հիշատակին նվիրված հուշարձանի բացումը	58
Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի աշխատանքային կոմիտեի նստաշրջա- նը Մոսկվայում	61
Երիտասարդաց համակրուպական քրիստոնեական ժողով Ֆրանսիայում	62
Հանգիստ տ. Հակոբ քանանա Երանոսյանի	63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱՄԻՆ
«ԷՋՄԻԱՄԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 10.5.1978 թ.: Թողարկված է տպագրության 16.6.1978 թ.:
Տպագրական 4 մամուլ+6 ճեղքիք, թուղք 60x84/8, պատվեր 432

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1978 թ.

